



Արա Ղապարյան

ՀԱԿԸՆԴԴԵՄ ՀԱՐՅՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Funded
by the European Union
and the Council of Europe



COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

Funded
by the European Union
and the Council of Europe



Implemented
by the Council of Europe

ԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱԿԸՆԴԴԵՄ ՀԱՐՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ



ԵՐԵՎԱՆ 2020

Ձեռնարկի հեղինակ՝
Եվրոպայի խորհրդի փորձագետ
Արա Ղազարյան

Ձեռնարկի պատրաստմանն աջակցել է
Եվրոպայի խորհրդի միջազգային փորձագետ
Ջորջ Տուգուշին

Սույն ձեռնարկը պատրաստվել է «Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» կառուցակարգի կողմից: Սույն ձեռնարկում ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները:

© Եվրոպայի խորհուրդ, 2020

© Արդարադատության ակադեմիա, 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	5
Ուղեցույցում օգտագործված սիմվոլներ	11
ԴԱՍ 1 Հակընդդեմ հարցման իրավունքի ընդհանուր սկզբունքները	13
ԴԱՍ 2 Հակընդդեմ հարցման իրավունքի սահմանափակումները	22
ԴԱՍ 3 Բացակա վկա և հակընդդեմ հարցման իրավունք	37
ԴԱՍ 4 Վկայի չներկայանալու հիմքերը	42
ԴԱՍ 5 Վկայի ցուցմունքի ապացուցողական ուժը	49
ԴԱՍ 6 Հակակշռող գործոններ. Դատարանի մոտեցումը չստուգված ապացույցին	56
ԴԱՍ 7 Հակակշռող գործոններ. լրացուցիչ ապացույցներ	62
ԴԱՍ 8 Հակակշռող գործոններ. դատավարական միջոցներ	68

ԴԱՍ 9 Գենդերային խտրականության, սեռական բռնության զոհեր ու անչափահասներ	75
ԴԱՍ 10 Անանուն վկաներ, պաշտպանության միջոցների կիրառում	83

Ներածություն

Մեղադրյալի՝ իր դեմ ցուցմունք տված անձին կամ իր վկային դատարանում հարցաքննելու իրավունքը, որն այլ կերպ կոչվում է հակընդդեմ հարցման իրավունք, մարդու հիմնարար իրավունք է՝ ամրագրված ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 4-րդ մասով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի դ-կետով և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետով: Դատավարական այս իրավունքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս է, հետևաբար, դրա անհամաչափ սահմանափակումը կարող է հանգեցնել ողջ դատավարության արդարացիության խախտմանը:

ՀՀ դատաիրավական պրակտիկայում այս իրավունքին ներկայումս մեծ ուշադրություն է դարձվում: Իրավակիրառողների և իրավաբան-գիտնականների շրջանակներում ներկայումս ընթանում է բաց բանավեճ դրա տարբեր բաղադրիչների վերաբերյալ: Դա պայմանավորված է, առաջին հերթին, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործունեությամբ, որը մինչ այժմ Հայաստանի Հանրապետության դեմ կայացրել է հակընդդեմ հարցման իրավունքի վերաբերյալ տասը վճիռներ, որոնցից ութում արձանագրել է

խախտում: Դրա արդյունքում մի շարք գործերով վերաբացվել են դատական գործերը, բեկանվել են նախկինում կայացված դատական ակտերը, վերսկսվել են դատական վարույթները և որոշ դեպքերում վերսկսված գործերով կայացվել են արդարացման որոշումներ հակընդդեմ հարցման իրավունքի խախտումը վերացնելու անհնարինության հիմքով: ՀՀ վճռաբեկ դատարանը 2011 թվականին Համայակ Սահակյանի գործով առաջին անգամ անդրադարձավ այդ իրավունքի բաղադրիչներից մեկին՝ դատական փուլում բացակա վկայի նախաքննական ցուցմունքի օգտագործման հիմքերին, և դատաիրավական պրակտիկա ներմուծեց Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ապացույցի գնահատման «միակ կամ վճռորոշ» չափանիշը: Իր հերթին, Քրեական վերաքննիչ դատարանը և ընդհանուր իրավասության դատարանները տարբեր գործերով արտահայտել են իրավական դիրքորոշումներ հակընդդեմ հարցման իրավունքի տարբեր դրսևորումների, օրինակ՝ հեռակապի օգտագործման, վկայի պաշտպանության տակ գտնվող անձի միջնորդավորված հարցաքննության, խոցելի վկաների հարցաքննության առանձնահատկությունների, ապացույցների օգտագործման և այլ կարևոր հարցերին:

Չնայած այդ զարգացումներին՝ հակընդդեմ հարցման իրավունքի հետ կապված առկա են խնդիրներ: Ներկայումս դատավորները փորձում են հետևողականորեն ապահովել այդ իրավունքի իրականացումը դատական քննության ժամանակ: Սակայն հաճախ դատարանները ստիպված են լինում հիմնվել վկաների նախաքննական ցուցմունքների վրա և մեղադրական դատավճռում հիմնվել ոչ թե հրապարակային դատավարության պայմաններում և մրցակցային դատավարության կարգով ստացված ապացույցների, այլ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքների վրա, որոնք, որպես կանոն, ստացվում են հրապարակայնության բացակայության և մրցակցային դա-

տավարության սահմանափակ հնարավորությունների պայմաններում: Տարածված է նաև նախաքննության փուլում մեղադրյալի և նրա դեմ ցուցմունք տված վկայի միջև իրականացված առերեսման արձանագրությունը որպես ապացույց ընդունելու և մեղադրական դատավճռում օգտագործելու միտումը և պրակտիկան: Ավելին, հաճախ են դեպքերը, երբ մեղադրյալի կողմից առերես հարցաքննությունից հրաժարվելը փորձ է արվում ներկայացնել որպես հակընդդեմ հարցման իրավունքից կամովին հրաժարվելու հիմք:

Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ դատավորները հաճախ բախվում են իրավիճակի, երբ դատավարության մասնակիցները չարաշահում են իրենց իրավունքները: Տարածված է վկաների խուսափելը դատարան ներկայանալուց: Դատարանները հաճախ մեծ ռեսուրսներ են ծախսում նրանց ներկայությունը դատական քննությանն ապահովելու համար՝ հասկանալով, որ հակառակ դեպքում վկայի բացակայությունը կարող է հանգեցնել քրեական դատավարության էական խախտմանը:

Ինչպես արդեն նշեցինք, դատարանները հաճախ մեղադրական դատավճիռներում հիմնվում են նախաքննական ցուցմունքների վրա: Դրա համար կան բազմաթիվ պատճառներ. հաճախ դատավորներին անարժանահավատ են թվում դատարանում վկաների ցուցմունքները, կամ վկաները չեն ներկայանում դատական քննության և նրանց հայտնաբերելը և բերման ենթարկելը երբեմն դառնում է անհնար՝ հատկապես, եթե նրանք լքել են Հայաստանի Հանրապետությունը և բնակվում են այնպիսի երկրում, որի հետ Հայաստանի Հանրապետությունն իրավական փոխօգնության վերաբերյալ միջպետական պայմանագիր չունի, օրինակ՝ Միացյալ Նահանգները: Երբեմն դատարանները բախվում են վկայի պաշտպանության ծրագրին, երբ ստիպված են լինում կիրառել վկայի հարցաքննության միջնորդավորված եղանակներ, օրինակ՝ վկայի հարցաքննու-

թյունը հեռախոսով՝ փոփոխված ձայնով, հեռակապով, իսկ երբեմն էլ դատարանները բախվում են իրավիճակի հետ, երբ առանցքային վկան ծանր հիվանդ է կամ մահացել է, ու բացարձակապես անհնարին է դարձել մեղադրյալի համար հակընդդեմ հարցման իրավունքը դատարանում ապահովելը, ու միակ այլընտրանքը մնացել է վկայի նախաքննական ցուցմունքների վրա հիմնվելը: Առավել նվազ են դեպքերը, երբ դատավորները բախվում են խոցելի վկաների հետ, որի դեպքում պարտավոր են ապահովել դատավարական զգայուն ընթացակարգեր, օրինակ՝ սեռական բռնության, ընտանեկան բռնության զոհերի, անչափահասների, հոգեկան հաշմանդամություն ունեցող անձանց հարցաքննության դեպքում:

Այդուհանդերձ, նույնիսկ նման պայմաններում դատարանները, կարևորելով հակընդդեմ հարցման իրավունքի կարևորությունը, գնում են յուրահատուկ լուծումների, որոնք թեև օրենքի տառին կարող են չհամապատասխանել, սակայն դատավարության ամբողջության մեջ իրավաչափ են: Օրինակ, մի գործով դատավորը դատարանի դահլիճում մեղադրյալի համար կազմակերպել է ԱՄՆ-ում բնակվող տուժողի հարցաքննությունը տեսակապի՝ սկայպի միջոցով, մեկ այլ դեպքում դատավարության երեք կողմերը՝ դատավորը, դատախազը և պաշտպանական կողմը եկել են փոխադարձ համաձայնության և հարցաքննությունն իրականացրել են դատարանի շենքից մոտ 500 մետր հեռավորության վրա կայանված մեքենայում գտնվող մեղադրյալի հետ, որի անձնական տվյալները Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով նախօրոք ստուգել է դատավորը: Նման լուծումները ամբողջությամբ բխում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից: Սակայն նման դեպքերը բացառություններ են, մինչդեռ նախաքննական ցուցմունքների վրա հիմնվելը մեղադրական դատավճռում շարունակում է մնալ տարածված պրակտիկա, և նման որոշում

կայացնելը որոշ դեպքերում հանգեցում է լուրջ խնդիրների: Օրինակ, ներկայումս խնդրահարույց է առերեսումն ինքնաբերաբար հակընդդեմ հարցման իրավունքով փոխարինելու նախաքննական ու դատական մարմինների միտումը:

Նախաքննական ցուցմունքը որպես ապացույց ընդունելը և մեղադրական դատավճռում օգտագործելն ինքնին հիմնարար իրավունքի խախտում չէ, սակայն բոլոր դեպքերում դա բացառություն է հիմնական կանոնից, ըստ որի՝ բոլոր ապացույցները պետք է հետազոտվեն հրապարակային դատավարության պայմաններում ու մրցակցային դատավարության կարգով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքով մշակել է մի շարք կանոններից բաղկացած կառուցակարգ այն մասին, թե որ դեպքերում և ինչ պայմաններում կարող է դատավորը «շեղվել» հիմնական կանոնից և մեղադրական դատավճռում հիմնվել վկայի նախաքննական ցուցմունքի վրա՝ ապահովելով դատավարության արդարացիությունը:

Շատ կարևոր է, որ իրավակիրառողներն այդ կանոններն ամբողջությամբ յուրացնեն: Դատարանները, առնվազն Վճռաբեկ դատարանի կողմից նշված նախադեպային որոշումից հետո, իրենց որոշումներում կիրառում են այդ կառուցակարգի առանձին բաղադրիչները, սակայն առկա է հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման ամբողջական, հավաքական դատավարական մեթոդաբանության անհրաժեշտություն: Սույն դասընթացը կարող է ծառայել այդ նպատակին, քանի որ դասընթացի բաղադրիչները ամբողջությամբ կառուցված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքից բխող սկզբունքների վրա: Մասնավորապես, դասընթացը հիմնված է ՄԻԵԴ-ի կողմից սահմանված՝ բացակա վկայի նախաքննական ցուցմունքի օգտագործման երեք սկզբունքների վրա՝ բացակա վկայի ներկայությունը դատական քննությանը ապահովելու

նպատակով դատարանի կողմից ձեռնարկված միջոցների համարժեքությունը և բավարար լինելը, բացակա վկայի նախաքննական ցուցմունքի ապացուցողական ուժը (այլ կերպ՝ միակ կամ վճռորոշ կանոնի օգտագործման հիմքերը) և հակակշռող գործոնների առկայությունը: Այս երեք սկզբունքներից առավել քիչ է ուսումնասիրված վերջինը՝ հակակշռող գործոնների սկզբունքը: Հետևաբար, դրա վրա առանձնահատուկ ուշադրություն ենք դարձրել դասընթացում: Դասընթացը ներառում է նաև թեմաներ խոցելի խմբերի, վկայի պաշտպանության տակ գտնվող անձանց, օպերատիվ-հետախուզական միջոցառումների մասնակիցների, փորձագետների՝ որպես վկա հակընդդեմ հարցման ենթարկելու մասին առանձին ենթաթեմաներ:

Դասընթացի վերջնական նպատակն է հակընդդեմ հարցման իրավունքի վերաբերյալ միասնական ու ամբողջական դատավարական մեթոդաբանության ուսուցանումը: Դասընթացը բաղկացած է հինգ թեմաներից և տասը դասից, որոնք կոչված են հաղորդել գիտելիքներ և գործնական հմտություններ: Քանի որ առավելությունը տրված է գործնական հմտությունների ուսուցանմանը, ծրագրում ներառված են մեծ թվով վարժություններ:

Ուղեցույցում ներկայացված են նաև հրահանգներ՝ ուղղված դասվարներին: Յուրաքանչյուր դասի համար նախ ներկայացվում է դասի նպատակը, այնուհետև՝ ակնկալվող արդյունքները: Յուրաքանչյուր դասի վերջում առանձին ենթաբաժնում շարադրված են մեթոդական ցուցումներ դասը վարելու վերաբերյալ: Յուրաքանչյուր դասի համար նախատեսված գրադարանում ներառված են սահիկներ, դատական ակտեր ու տեքստային վարժություններ, որոնք ծրագրի պարտադիր մաս են կազմում: Ներառված են նաև լրացուցիչ ընթերցանության համար նախատեսված նյութեր՝ ձեռնարկներ, ուղեցույցեր, հետազոտություններ: Տեքստերում հաճախ հղումները տրված են հիպերլինքերով: Նման ներառական մոտեցումները հեշտաց-

նում են դասվարի աշխատանքը, քանի որ դասի ընթացքում նա կարող է հեշտությամբ անցում կատարել համացանցում տեղադրված որևէ աղբյուրի, օրինակ՝ դատական ու իրավական ակտերի, տվյալների բազայի, հետազոտական որևէ նյութի վրա, և այլն:

Հուսով ենք, ուղեցույցը կծառայի իր նպատակին:

Ուղեցույցում օգտագործված սիմվոլներ



ԴԱՍ



Դասընթացի նպատակ



Ակնկալվող արդյունքներ



Տեսական նյութ



Վարժություն



Գրադարան



Կարևոր է



Ուղեցույց դասը վարելու
վերաբերյալ



ԴԱՍ 1

Հակընդդեմ հարցման իրավունքի ընդհանուր սկզբունքները

Դաս 1 Իրավունքի բնույթը և ընդհանուր սկզբունքները

1 ժամ

Փոխակալով քննարկում

1 ժամ



Դասի նպատակն է ունկնդիրներին ծանոթացնելը հակընդդեմ հարցման իրավունքի առարկային՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, ՀՀ Սահմանադրության 63 և 67-րդ հոդվածների ներքո:



Ակնկալվող արդյունքները.

- ունկնդիրները կսովորեն, թե ինչպես է հարաբերակցվում հակընդդեմ հարցման իրավունքն արդար դատաքննության ընդհանուր իրավունքի հետ,
- որոնք են հակընդդեմ հարցման իրավունքի հիմնարար սկզբունքները և չափանիշները,
- կսովորեն հակընդդեմ հարցման իրավունքի կիրառության սահմանափակումների և խոչընդոտների մասին,
- կփորձապես հակընդդեմ հարցման իրավունքի

վերաբերյալ Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:



Հակընդդեմ հարցման իրավունքը մարդու հիմնարար իրավունք է: Հետևաբար, դա անօտարելի իրավունք է, որը կարող է միայն սահմանափակվել: Նշանակում է, որ ոչ մի հանգամանքների ներքո անձին չի կարելի ընդհանրապես զրկել այդ իրավունքի իրականացման հնարավորությունից: Նույնիսկ խիստ սահմանափակումներ կիրառելիս անհրաժեշտ է հիշել, որ բոլոր դեպքերում պետք է հնարավորություն տալ այդ իրավունքն իրականացնել՝ թեկուզ սահմանափակ կերպով:

Նախ, անհրաժեշտ ենք համարում համառոտ անդրադառնալ «հակընդդեմ հարցում» արտահայտությանը: Այդ արտահայտությունը սահմանված չէ օրենսդրությամբ: Դա ՀՀ իրավական դաշտ ներմուծվեց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի վավերացումով 2002 թվականին, որի 6-րդ հոդվածի 3-րդ մասի դ կետը բառացիորեն սահմանում է այդ իրավունքը որպես արդար դատական քննության ընդհանուր իրավունքի անքակտելի մաս՝ սահմանված Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով: Կոնվենցիայի վավերացումով իրավակիրառողները սկսեցին իրենց փաստաթղթերում վկայակոչել հակընդդեմ հարցման իրավունքի վերաբերյալ եվրոպական դատարանի նախադեպային դիրքորոշումները, իսկ վերջինս ՀՀ-ի դեմ այդ իրավունքի մասով առաջին վճիռը կայացրեց 2010 թվականի մարտի 16-ին *Մամիկոնյան ընդդեմ Հայաստանի* գործով վճռով, որում խախտում չարձանագրեց:

2011 թվականի հոկտեմբերի 20-ին ՀՀ վճռաբեկ դատարանը Համայակ Սահակյանի գործով նախադեպային որոշման մեջ առաջին անգամ օգտագործեց այդ արտահայտությունը: Այդ որոշմամբ արտահայտությունը դրվեց շրջանառության մեջ, որը ներկայումս լայնորեն վկայակոչվում է դատաիրավական պրակտիկայում:

22. Նախորդ կետում արտահայտված իրավական դիրքորոշումները պարզաբանելու համար Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում իրավական դիրքորոշումներ հայտնել այն դեպքերի կապակցությամբ, երբ անձը դատապարտվում է բացահայտված բովանդակությամբ ապացույցի հիման վրա, որի կապակցությամբ, սակայն, հնարավորություն չի ստացել իրացնել **հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքը** («Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(դ) ենթակետ):



Համայակ Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի որոշում:

Հետագա զարգացումները հանգեցրին նրան, որ 2016 թվականի դեկտեմբերի սահմանադրական բարեփոխումներով հակընդդեմ հարցման իրավունքը Կոնվենցիայից գրեթե չտարբերվող տեքստով ամրագրվեց Սահմանադրության 67-րդ հոդվածում: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում այս իրավունքը նույնպես ամրագրված է: Մինչ այժմ Եվրոպական դատարանը ընդդեմ ՀՀ-ի կայացրել է հակընդդեմ հարցման իրավունքի վերաբերյալ տասը վճիռներ, որոնցից իննում արձանագրել է խախտում: Դրանք են.

- Ավագյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 1837/10, 22/11/2018
- Դադայանն ընդդեմ Հայաստանի, թիվ 4078/12, 06/09/2018
- ՉԱՊ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի, թիվ 15485/09, 04/05/2017
- Ասատրյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 3571/09, 27/04/2017

- *Մանուշարյանն ընդդեմ Հայաստանի,*
թիվ 35688/11, 24/11/2016
- *Ավետրիսյանն ընդդեմ Հայաստանի,*
թիվ 13479/11, 10/11/2016
- *Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի,*
թիվ 27866/10, 27/10/2016
- *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի,*
թիվ 8088/05, 10/04/2012
- *Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի,*
թիվ 25083/05, 16/03/2010
- *Մ.Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի,*
թիվ 23086/08, 20/09/2018

Այժմ անդրադառնանք ընդհանուր սկզբունքներին, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր դեպքերում, երբ խնդրո առարկա հարցը նրանում է, թե արդյոք խախտվել է անձի հակ-ընդդեմ հարցման իրավունքը:

Նախ, պետք է հիշել, որ հակընդդեմ հարցման իրավունքն արդար դատաքննության ընդհանուր իրավունքի հատկանիշ-ներից մեկն է, դրա անքակտելի մասը: ՀՀ Սահմանադրությամբ արդար դատական քննության իրավունքը սահմանված է 63-րդ հոդվածով, իսկ հակընդդեմ հարցման իրավունքը՝ 67-րդ հոդվածի 4-րդ ենթակետով: Թեև վերջինը սահմանված է առանձին դրույթով, դա չի նշանակում, որ այդ դրույթով սահ-մանված երաշխիքի խախտումն ինքնաբերաբար հանգեցնում է ողջ դատավարության արդարացիության խախտմանը 63-րդ հոդվածի հիմքով:

Նմանապես, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի դ են-թակետի խախտումն ինքնաբերաբար չի հանգեցնում 1-ին մա-սով սահմանված արդարացի դատական քննության իրավունքի խախտմանը: Դատական վարույթի ընթացքում մե-ղադրյալը կարող է զրկվել դատարանում իր դեմ ցուցմունք

տված վկային հարցաքննելու կամ իր վկային դատարանում հարցաքննելու հնարավորությունից, կամ դատավորը, ելնելով վկայի խոցելիությունից, կարող է սահմանափակել պաշտպանական կողմի հարցերի շրջանակը, կամ դատավորը կարող է դատավճռում գերապատվություն տալ վկայի նախաքննական ցուցմունքին, ի տարբերություն դատարանում տված ցուցմունքների, սակայն նման սահմանափակումներն ինքնաբերաբեր չեն հանգեցնի արդար դատաքննության իրավունքի խախտմանը:

Որոշելու համար, թե որ դեպքում հակընդդեմ հարցման իրավունքի սահմանափակումը կհանգեցնի արդար դատական քննության իրավունքի խախտմանը, օգտվենք հետևյալ **ընդհանուր սկզբունքից**, որը նշվում է հակընդդեմ հարցման իրավունքի մասին Եվրոպական դատարանի բոլոր որոշումներում, ինչպես նաև բխում է ՀՀ քրեական դատավարության ընդհանուր սկզբունքներից:

Բոլոր ապացույցները, որպես կանոն, պետք է ներկայացվեն մեղադրյալի ներկայությամբ, հրապարակային դատական քննության պայմաններում՝ մրցակցային դատավարության կարգով փաստարկներ ներկայացնելու հնարավորությամբ: Այդուհանդերձ, դա չի նշանակում, որ որպես ապացույց օգտագործվելու համար վկաների ցուցմունքները միշտ պետք է տրվեն դատարանում անցկացվող դռնբաց դատական նիստում. մինչդատական փուլում ձեռք բերված այդպիսի ցուցմունքները որպես ապացույց օգտագործելն ինքնին չի հակասում 6-րդ հոդվածի 1-ին կետին և 3-րդ կետի «դ» ենթակետին՝ պայմանով, որ պահպանվել են պաշտպանության կողմի իրավունքները: Որպես կանոն, այդ իրավունքներով պահանջվում է, որ մեղադրյալին տրվի համարժեք և պատշաճ հնարավորություն՝ վիճարկելու իր դեմ ցուցմունք տված վկայի ցուցմունքները

և հարցաքննելու նրան՝ ցուցմունք փալու պահին կամ վարույթի հետագա փուլերում:

Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի (§ 42)

Նշված նախադեպային դրույթում սահմանված են **կանոն** ու **բացառություն**:

Կանոնը հետևյալն է.



Ապացույցը բոլոր դեպքերում պետք է հետազոտվի հետևյալ երկու պայմանների առկայության պարագայում. առաջին՝ **հրապարակային դատավարության** պայմաններում, երկրորդ՝ **մրցակցային դատավարության** կարգով:

Այնուհետև շարադրված է բացառությունը կամ «շեղումը» կանոնից.



Նախաքննության փուլում ստացված ապացույցը նույնպես կարող է օգտագործվել մեղադրական դատավճռում, սակայն պայմանով, որ ապացույցը ստացվելիս պաշտպանական կողմին տրված լինի **պատշաճ** ու **համարժեք** հնարավորություն վիճարկելու այդ ապացույցը կամ, եթե խոսքը վերաբերում է վկայի ցուցմունքին՝ հարցաքննելու այդ վկային:

Այսպիսով, հարցը, թե արդյոք կանոնից շեղումը չի խախտել հակընդդեմ հարցման իրավունքը կամ արդար դատաքննության իրավունքը որոշվում է **պաշտպանական կողմի իրավունքի տեսանկյունից**. Եթե պաշտպանական կողմը նախաքննության փուլում զրկված է եղել ապացույցը վիճարկելու կամ վկային հարցաքննելու պատշաճ ու համարժեք հնարավորություններից, նշանակում է, չի ապահովվել համա-

չակոության սկզբունքը և մեղադրանքից պաշտպանվելու պաշտպանության իրավունքները սահմանափակվել են այնպես, որ հակընդդեմ հարցման իրավունքը մեղադրյալի համար կորցրել է իր իմաստը ու դարձել է առարկայազուրկ:

Այստեղ բաց է մնում, թե ինչ են նշանակում «պատշաճ» ու «համարժեք» հասկացությունները: «Պատշաճ» եզրը նշանակում է դատավարական միջոցների բավարար և արդյունավետ լինելը՝ վիճարկելու համար ապացույցի արժանահավատությունը, ընդունելիությունը, վերաբերելիությունը և բավարար համակցությունը: Օրինակ, եթե առերեսման ժամանակ քննիչը պաշտպանին չի թույլատրել հարցեր ուղղել վկային կամ հուշել իր պաշտպանյալին, թե հարցերին ինչպես պատասխանի կամ հարցերն ինչպես ձևակերպի, կհամարվի, որ առերեսման նման եղանակով պաշտպանական կողմը զրկվել է վկայի պատասխաններին հակադրվելու, վկայի ցուցմունքների արժանահավատությունը կասկածի տակ դնելու բավարար հնարավորությունից: Ինչ վերաբերում է «համարժեք» եզրին, դրանով, ըստ էության, մատնացույց է արվում մրցակցային դատավարության կարգին, որը նշանակում է, որ պաշտպանական կողմը պետք է ունենա ապացույցը կամ վկայի ցուցմունքը վիճարկելու հավասար հնարավորություններ՝ իր դատավարական հակառակորդի համեմատ: Օրինակ, ինչպես հայտնի է, պաշտպանական կողմի համար քրեական գործի նյութերը դառնում են մատչելի միայն նախաքննության ավարտին: Որոշակի հանգամանքների առկայության պարագայում պաշտպանական կողմը կարող է պնդել, որ առերեսման ժամանակ գտնվել է քննիչի հետ անհավասար պայմաններում, քանի որ առերեսումից առաջ քննիչին հասու են եղել քրեական գործի նյութերը, իսկ իրեն՝ ոչ:

Դասընթացի հետագա բաժիններում տեսական նյութեր ուսումնասիրելիս կամ վարժություններ լուծելիս մենք հաճախ կվերադառնանք վերը նշված ընդհանուր սկզբունքին: Ուստի, մտապահենք այդ սկզբունքը որպես հակընդդեմ հարցման իրավունքի հիմունք:



Ուղեցույց

Դասի նպատակն է ունկնդիրներին հակընդդեմ հարցման իրավունքի ընդհանուր սկզբունքների հետ ծանոթացնելը: Հետևաբար, դասի հիմնական ուղղվածությունը տեսական գիտելիքի, այլ ոչ թե հմտության հաղորդումն է: Դասին զուգահեռ օգտագործեք Սահիկ 1-ը՝ ներկայացնելու համար տեսական նյութը: Դասի երկրորդ մասում կազմակերպեք ներքևում նշված հարցի փոխակտիվ քննարկում: Քննարկումը կարող եք կազմակերպել խմբային աշխատանքի կամ լիանիստ (պլենար) քննարկման եղանակով: Խմբային քննարկում կազմակերպելիս առաջարկվում է մասնակիցներին բաժանել երեք խմբերի, նրանց տրամադրել 10 րոպե, որից հետո յուրաքանչյուր խմբից մեկական ներկայացուցչի հրավիրելով ամբիոնի մոտ՝ խնդրեք ներկայացնել խմբի տեսակետը, որից հետո լսարանին տվեք հնարավորություն ներկայացնել տեսակետներ հնչեցված կարծիքների վերաբերյալ: Այս հարցին նորից անդրադարձ կարվի ԴԱՍ 8-ում:

Արդյոք առերեսումը սկզբունքորեն ի վիճակի է տրամադրել պաշտպանական կողմին մեղադրանքից պաշտպանվելու **պատշաճ** ու **համարժեք** պաշտպանության միջոց՝ ըստ հակընդդեմ հարցման իրավունքի վերը նշված ընդհանուր սկզբունքի՝ հաշվի առնելով առերեսման բոլոր հատկանիշները, պայմանները, իրականացման օրենքով սահմանված եղանակները:





Գրականություն

1. Սահիկ 1 **Հակընդդեմ հարցման իրավունքի բնույթը
և ընդհանուր սկզբունքները**
2. Վճռ. դատ. որոշում Համայակ Սահակյանի գործով որոշում
3. ՄԻԵԴ վճիռ Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի
4. ՄԻԵԴ վճիռ Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի



ԴԱՍ 2

Հակընդդեմ հարցման իրավունքի սահմանափակումները

Դաս 2	Ծագումը, սահմանափակումները և խոչընդոտները	1 ժամ
	Վարժություն – տեսանյութի դիտում	1 ժամ



Դասի նպատակն է ունկնդիրներին ծանոթացնել հակընդդեմ հարցման իրավունքը սահմանափակող փաստական հանգամանքների և դրանց իրավական հիմքերի հետ:



Ակնկալվող արդյունքները .

- ունկնդիրները կսովորեն, թե որոնք են հակընդդեմ հարցման իրավունքի իրացմանը խոչընդոտող հանգամանքները,
- ձեռք կբերեն գիտելիքներ, թե ինչպես է կարգավորվում հակընդդեմ հարցման իրավունքը սահմանափակումների պայմաններում,
- կտիրապետեն Եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի համապատասխան նախադեպային իրավունքին:



Հակընդդեմ հարցման իրավունքի իրականացման շրջանակները սահմանափակվում են մի շարք հանգամանքների առկայության պարագայում: Ներկայացնենք դրանք:

Բացակա վկայի նախաքննական ցուցմունքի օգտագործումը հակընդդեմ հարցման իրավունքի միջամտության ամենատարածված եղանակն է ՀՀ դատական պրակտիկայում: Այդ պատճառով դասընթացը հիմնականում կենտրոնանում է հենց այդ թեմայի վրա: Ինչպես արդեն նշվել է նախաբանում, դատարանները հաճախ են մեղադրական դատավճռի հիմքում դնում բացակա վկայի նախաքննական ցուցմունքը, քանի որ



վկան չի ներկայացել դատական քննությանը: Հաջորդ բաժնում կուսումնասիրվեն մի շարք հիմնարար սկզբունքներ, որոնք անհրաժեշտ է կիրառել՝ որոշելու համար, թե որ դեպքում բացակա վկայի նախաքննական ցուցմունքի օգտագործումը կհանգեցնի արդար դատական քննության իրավունքի խախտմանը:

Վկայի նախաքննական ցուցմունքին առավելություն տալը նույնիսկ այն դեպքում, երբ դատարանում մեղադրյալը հնարավորություն ունեցել է հարցաքննել վկային: Սա հակընդդեմ հարցման իրավունքի միջամտության եղանակ է, որը նույնպես նկատելիորեն տարածված է դատական պրակտիկայում: Դատավորները հաճախ են գերապատվություն տալիս վկայի նախաքննական ցուցմունքին՝ անարժանահավատ համարելով



վկայի՝ հրապարակայնության պայմաններում և մրցակցային կարգով դատարանում տված ցուցմունքին: Հաճախ վկաներն

իրենք են գրավոր միջնորդում դատարանին՝ խնդրելով որպես հիմք ընդունել նախաքննության ժամանակ տված ցուցմունքները և ազատել իրեն դատարանում ցուցմունք տալու պարտականությունից:

Պաշտպանության միջոցների կիրառում դատարանում.

իրականացվում է այն վկաների նկատմամբ, ովքեր գտնվում են վկայի պաշտպանության ծրագրի տակ: Որպես կանոն, դրանք վկաներ են, ովքեր վախենում են հաշվեհարդարից կամ մտահոգված են հասարակական պարսպանքից: Ցավոք, մեր հասարակությունում տարածված է կարծրատիպ, որ դատարանում ցուցմունք տալը հակահասարակական կամ անբարոյական արարք է, որի պատճառով վկաներն ամենատարբեր պատճառներով խուսափում են դատարան ներկայանալուց և դատարանում ցուցմունք տալուց: Այդ պատճառով դատավորները հաճախ հիմնվում են վկայի նախաքննական ցուցմունքի վրա: Այդուհանդերձ, որպես վկա ցուցմունք տալը պարտականություն է, հետևաբար, դատավորը կարող է կայացնել որոշումը՝ վկային բերման ենթարկելու մասին՝ անկախ նրա ցանկությունից: Միջնորդավորված հարցաքննությունը կարող է իրականացվել նաև օպերատիվ հետախուզական մարմնի աշխատակցի կամ գործակալի (համագործակցող անձի) հետ՝ նրանց անձը չբացահայտելու նպատակով: Վկայի պաշտպանության ծրագրի վերաբերյալ դրույթները սահմանված են Քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ գլխում, իսկ դատարանում միջնորդավորված հարցաքննության վերաբերյալ կարգավորումը՝ 98¹³-րդ հոդվածում:

Անանուն վկաները. նույնպես գտնվում են վկաների պաշտպանության ծրագրի տակ: Դատարանները հաճախ որոշում են նրանց ընդհանրապես դատարան չհրավիրել, այլ բավարարվել նրանց նախաքննական ցուցմունքներով, որոնք նույնպես չեն ստուգվել առերեսման եղանակով նախաքննության փու-

լում: Անանուն վկաները, որպես կանոն, օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման աշխատակիցներ են կամ համագործակցող անձինք, ովքեր իրականացրել կամ մասնակցել են օպերատիվ ներդրում, վերահսկելի մատակարարում կամ



գնում, կաշառք տալու կամ կաշառք ստանալու նմանակում օպերատիվ հետախուզական միջոցառումներին: Դատարանի կողմից անանուն վկայի ինքնությունը չբացահայտելը հետապնդում է իրավաչափ նպատակ, այն է՝ անձնական ու ընտանեկան կյանքի անվտանգությունը: Այդուհանդերձ, եթե որոշվել է նման անձանց նախաքննական ցուցմունքներն օգտագործել որպես ապացույց, ապա առնվազն պետք է հնարավորություն տրվի մեղադրյալին ստուգելու նրանց ցուցմունքների արժանահավատությունը հակընդդեմ հարցման եղանակով՝ պաշտպանության միջոցների կիրառումով:

Վկային դատարանի դահլիճից հեռացնելը. դատարանը կարող է դատական սանկցիա կիրառել ու վկային հեռացնել դատարանի դահլիճից՝ օրենքով սահմանված դեպքերում: Դատական սանկցիա կիրառվում է, երբ վկան անհարգալից վերաբերմունք է ցուցաբերում դատարանի կամ դատավարության մասնակիցների նկատմամբ կամ խախտում է դատական նիստի կարգը: Նման դեպքերում դատավորը պարտավոր է զգուշորեն հավասարակշռել բախվող իրավաչափ շահերը, օրինակ՝ դատական իշխանության հեղինակության հանրային շահը մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի և տուժողի՝ դատական պաշտպանության իրավունքի հետ:



Օրինակ, դատարանը կարող է կայացնել որոշում դատական նիստը հետաձգելու մասին, որ հնարավորություն տա մեղադրյալին օգտվել իր իրավունքից հաջորդ նիստում:

Վկայի մահը կարող է անդառնալի հետևանք ունենալ վարույթի ողջ ընթացքի վրա, հատկապես այն դեպքում, երբ նախաքննության փուլում հնարավորություն չի եղել հարցաքննել վկային կամ նրա և մեղադրյալի միջև չի անցկացվել առերեսում: Երբ վկան տուժողն է, ով մահվանից առաջ նշել է իր դեմ ոտնձգություն կատարած անձի անունը, նույնիսկ այդ դեպքում վկայի (օրինակ՝ բժշկի) ցուցմունքը բխում է չստուգված վկայի (տուժողի) խոսքերից, որն առանցքային ապացույց չի կարող համարվել:

Սպառնալիքներ վկայի հասցեին. քիչ չեն դեպքերը, երբ վկաները խուսափում են դատարան ներկայանալուց ու ցուցմունք տալուց կամ դատարանում փոխել են ցուցմունքները մեղադրյալի սպառնալիքների ներքո: Նման հանգամանքը բարձրացնում է մեղադրյալի կողմից իր իրավունքների չարաշահման հարց: Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ նման հանգամանքը պետք է մեկնաբանվի ի վնաս մեղադրյալի, քանի որ նման վարքագծով մեղադրյալը խոչընդոտում է արդարադատության իրականացմանը, չարաշահում է դատական պաշտպանության իր իրավունքը, հետևաբար, մեղադրյալը չի կարող օգտվել վկայի դատարան չներկայանալու բարենպաստ հետևանքից, օրինակ՝ վկայի չներկայանալու պատճառով որևէ ապացույց ի հոգուտ մեղադրյալի մեկնաբանվելը, անընդունելի ճանաչելը, անարժանահավատ ճանաչելը, ընդհուպ՝ արդարացումը:



Այլ հավայան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «նախադեպային իրավունքը ցույց է տալիս, որ վկաները հիմնականում ունենում են վկայություն տալու ընդհանուր վախ և ոչ թե վախ, որն ուղղակիորեն վերագրելի է սպառնալիքներին, որոնք արվում

են ամբաստանյալի կամ նրա գործակալների կողմից: Օրինակ, շատ գործերում վախը վերագրվել է ամբաստանյալի կամ իր համախոհների վատ համբավին (տե՛ս, օրինակ, Ձեյլիին ընդդեմ Գերմանիայի գործով վճիռը (որոշում), թիվ 15065/05, սեպտեմբերի 29, 2009թ): Ուստի կարիք չկա, որ վկայի վախը ուղղակիորեն վերագրելի լինի ամբաստանյալի կողմից արված սպառնալիքներին, որպեսզի վկան ազատվի դատավարության ընթացքում վկայություն տալուց: Ավելին, մեկ այլ անձի մահվան կամ մարմնական վնասվածքի կամ ֆինանսական կորստի վախը տեղին նկատառումներ են որոշելիս՝ արդյոք վկայից պետք է պահանջել տալ բանավոր վկայություն: Սակայն սա չի նշանակում, որ վկայի ցանկացած սուբյեկտիվ վախ կբավականացնի: Գործը քննող դատավորը պետք է իրականացնի պատշաճ հարցում նախ պարզելու՝ արդյոք այդ վախն ունի օբյեկտիվ հիմքեր և հետո որոշելու՝ արդյոք կան այդ օբյեկտիվ հիմքերի մասին վկայող ապացույցներ (տե՛ս, օրինակ, Կրասնիկին ընդդեմ Չեխիայի Հանրապետության գործով վճիռը, թիվ 51277/99, կետեր 80–83, փետրվարի 28, 2006թ, որտեղ Դատարանը գոհ չէր այն փաստից, որ ներպետական դատարաններն իրականացրել էին վկաների վախի պատճառների քննություն մինչ նրանց անանունություն շնորհելը)»:

Վկաների նկատմամբ անմիջական ներգործության արդյունքում նրանց մոտ վախի առաջացումը և դրա արդյունքում ամբաստանյալի համար ցանկալի հետևանքների ստացման անթույլատրելիությունը լիովին արդարացնում է ամբաստանյալի հակընդդեմ հարցման իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունը: **Ինչ վերաբերում է վկաների մոտ առաջացող ընդհանուր վախին, ապա դրա հիմքով հակընդդեմ հարցման իրավունքի սահմանափակումն անթույլատրելի է և կարող է հանգեցնել մրցակցության և անձի արդար դատաքննության իրավունքների սահմանափակման:**

Մասնավորապես, անթույլատրելի է հակընդդեմ հարցման իրավունքի սահմանափակումը՝ բացառապես անձին առաջադրված մեղադրանքի բնույթով պայմանավորված, քանի որ ան-

ծին առաջադրված մեղադրանքը սուկ վարույթն իրականացնող մարմնի վարկածն է, ուստի չի կարող հիմք ծառայել հիմնարար իրավունքի սահմանափակման համար: Նման իրավիճակներ հանդիպում են առանձնապես ծանր հանցագործությունների քննության ընթացքում, քանի որ նշված դեպքերում մեղադրյալի անձը դիտվում է որպես հանրային բարձր վտանգավորություն ունեցող: Վկաների մոտ առաջացող ընդհանուր վախի գնահատման հարցում առավել քան առանցքային է վկայի և մեղադրյալի սուբյեկտիվ հատկանիշների վերլուծությունը: Մասնավորապես, անհրաժեշտ է գնահատման առարկա դարձնել այն հարցը, թե ինչպիսի փոխհարաբերությունների մեջ են գտնվել վկաները և մեղադրյալը, արդյոք վկան որևէ ձևով կախման մեջ է գտնվում մեղադրյալից և արդյոք նման կախվածության առկայությունը կարող է հիմք ծառայել վկայի հաղորդած տվյալների արժանահավատությունը գնահատելու համար: Նույնիսկ վերոհիշյալ հարցադրումներին տրվող դրական պատասխանների և մեղադրյալի անձի բարձր հանրային վտանգավորության դեպքում հակընդդեմ հարցման իրավունքի սահմանափակումն անթույլատրելի է. դրանք միայն կարող են հիմք ծառայել վկաների նկատմամբ պաշտպանության միջոցի կիրառման համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է փաստել, որ դատավարության մասնակիցների նկատմամբ անօրինական ազդեցության գործադրման կամ վկաների մոտ առաջացած վախի վերաբերյալ քրեական գործում առկա փաստական տվյալները պահանջում են բազմակողմանի քննություն, չեն կարող միանշանակ ընդունվել և անվերապահ հիմք ծառայել մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի սահմանափակման համար:

Խոցելի վկաներին հարցաքննելը պահանջում է հատուկ մոտեցում ու պայմաններ, որոնք կարող են նեղացնել վկային հարցաքննելու հնարավորությունները: Խոցելի վկաներ են, օրինակ՝ անչափասները, սեռական բռնության զոհերը, գենդե-

րային խտրականության կամ ընտանեկան բռնության զոհերը, հաշմանդամություն ունեցող անձինք (օրինակ՝ հոգեկան հաշմանդամություն ունեցող կամ աուտիզմ ունեցող անձինք) և այլ խմբեր: Խտրականությունից զերծ մնալու իրավունքը դատա-



վորից պահանջում է ցուցաբերել, օրինակ՝ գենդերազգայուն մոտեցում դատավարական ընթացակարգերը կառավարելիս, եթե վկան/տուժողը գենդերային, սեռական խտրականության զոհեր են: Երկրորդային զոհականացումից խուսափելու համար դատավորը կարող է սահմանափակել սեռական բռնության զոհին հարցաքննելու տևողությունը, հարցերի շրջանակը, դատավարության հրապարակայնությունը, դատարան ներկայանալու անհրաժեշտությունը և այլն: Անչափահաս վկայի և հաշմանդամություն ունեցող անձանց հարցաքննության որոշ պայմաններ սահմանված են Քրեական դատավարության օրենսգրքով, սակայն կան հավելյալ պայմաններ ու սկզբունքներ, որոնք բխում նաև Մարդու իրավունքների եվրոպական կոն-

վենցիայից և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներից:



Փորձագետների հարցաքննությունը նույնպես մտնում է



հակընդդեմ հարցման իրավունքի շրջանակների մեջ: Եվրոպական դատարանը «վկա» հասկացությունը մեկնաբանում է ինքնավար (ավտոնոմ) եղանակով՝ անկախ ազգային իրավունքում այդ հասկացության քրեադատավարական սահմանափակումներից: Ըստ այդմ, ցանկացած անձ, ով գործի վերաբերյալ տալիս է արժեքավոր տեղեկություններ, համարվում է

վկա՝ ըստ Եվրոպական դատարանի: Այդ իմաստով փորձագետը, ով քրեական գործով ներկայացրել է փորձաքննության եզրակացություն, նույնպես համարվում է «վկա» հակընդդեմ հարցման իրավունքի իմաստով: Հետևաբար, վկա հասկացության օրենքով սահմանված սահմանափակումները կամ դատական պրակտիկայի ուժով այդ հասկացությանը նեղ մեկնաբանությունները կարող են սահմանափակել հակընդդեմ հարցման իրավունքի շրջանակները:



«վկա» ինքնավար հասկացությունը, որի մասին նշվեց վերևում, թույլ է տալիս քրեական դատավարությունում Եվրոպական կոնվենցիայի ներքո որպես վկա դիտել անձանց, որոնց վերաբերյալ ազգային դատավարական օրենսգրքով սահմանված են վկա համարվելու սահմանափակումներ:

Յոգոված 86-վկան

 4-դատավարը այդ քվում՝ նաև
 է ի սպորտը յոսևները
 դադարեցրած՝ գտափառը,
 քննիչը, հետաքննության
 մարմնի աշխատակիցը և
 գտական նիստի
 քարտեզարը՝ կազմած այն
 քրեական գործի հետ, որում
 նրանք իրականացրել են
 իրենց գտավորական
 է ի սպորտը յոսևները,
 բացառությամբ այն գործի
 վարությանը նկատմամբ յոսև
 արված սխալների և
 շարժանունների

դեպքում Քրեական դատավարության օրենսգրքի և Եվրոպական կոնվենցիայի միջև ծագում է կոլիզիա, որը նույնպես կարող է ազդել հակընդդեմ հարցման իրավունքի իրականացման հնարավորությունների վրա: Օրինակ, Քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով քննիչը չի կարող որպես վկա հանդես գալ ու հարցաքննվել իր կողմից քննված քրեական գործի բովանդակության վերաբերյալ,

մինչդեռ Եվրոպական կոնվենցիայի համաձայն՝ քննիչը կարող է համարվել վկա այդ հասկացության ինքնավար մեկնաբանության հիմքով: Նմանապես, համակցությամբ կատարված հանցագործության քննության ընթացքում մահացած մեղադրյալի նախաքննական ցուցմունքները մյուս ամբաստա-

նյալի վերաբերյալ ՀՀ դատավարական կանոններով չի համարվի վկայի ցուցմունք, որի հետևանքով պաշտպանական կողմը գրկվում է այդ ցուցմունքը դատարանում վկայի ցուցմունքի հրապարակման համար նախատեսված իրավական ռեժիմով հետազոտելու հնարավորությունից: Մինչդեռ հակառակ դեպքում պաշտպանական կողմը կարող է բարձրացնել ապացույցի անընդունելիության կամ ընդունելիության մասին հարց հակընդդեմ հարցման կառուցակարգի շրջանակներում:

Դրա հետ կապված Կաստովսկին ընդդեմ Նիդեռլանդների գործով Եվրոպական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «(...) [Ց]ուցմունք տվողներից միայն մեկն է, մասնավորապես՝ նա, ում ցուցմունքներն ընթերցվել են դատաքննության ընթացքում, որ Նիդեռլանդների օրենսդրության համաձայն՝ հանդիսացել է «վկա»: Այնուամենայնիվ, ելնելով ինքնավար մեկնաբանումից, որը պետք է տրվի սույն հասկացությանը, երկու ցուցմունքների հեղինակներն էլ պետք է դիտվեն որպես այդպիսիք՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի իմաստով, քանի որ երկուսի ցուցմունքներն էլ՝ անկախ նրանից, ընթերցվել են դատարանում, թե՛ ոչ, փաստացի ներկայացվել են դատարանին և հաշվի առնվել վերջինիս կողմից (...)»¹:

Վերը նշվածն օրինակներ են, որոնք ցույց են տալիս, որ վկա հասկացության նեղ մեկնաբանությունը կարող է նվազեցնել հակընդդեմ հարցման իրականացման շրջանակները՝ դատավարության որոշ մասնակիցների դուրս հանելով որպես վկա հարց հարցաքննելու ենթակա անձանց շրջանակից:

Ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքը. Սահմանադրության 65 հոդվածը սահմանում է. *«Ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք փալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետագայում*

¹ Տե՛ս Կաստովսկին ընդդեմ Նիդեռլանդների գործով Եվրոպական դատարանի 1989 թվականի նոյեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 11454/85, կետ 40:

կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ: Օրենքը կարող է սահմանել ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու այլ դեպքեր»: Սահմանադրական այս երաշխիքն արտահայտված է Քրեական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածում, որի երկրորդ մասը սահմանում է. «Անձը, որի վարույթն իրականացնող մարմինն առաջարկում է հայտնել տեղեկություններ կամ տրամադրել նյութեր, իրավունք ունի հրաժարվելու նման տեղեկություններ հայտնելուց կամ նյութեր տրամադրելուց, եթե ողջամտորեն ենթադրում է, որ դրանք հետազայում կարող են օգտագործվել իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների դեմ»: Ստացվում է, որ եթե առանցքային վկան մեղադրյալի մերձավոր ազգականն է, նա կարող է հրաժարվել նախաքննության կամ դատաքննության փուլում ցուցմունք տալուց, իսկ եթե նույնիսկ նախաքննության վաղ փուլում տվել է ցուցմունք, դատարանի կողմից դա օգտագործելը կարող է խնդրահարույց լինել, եթե վկան հրաժարվել է դատարանում ցուցմունք տալուց:

Նման իրավիճակ կարող է առաջանալ նաև այն դեպքում, երբ մեղադրյալի հանցակիցը կամ քրեական գործով համամեղադրյալը որոշի որպես վկա օգտվել լռելու իրավունքից՝ վերևում նշված վկայի ինքնավար հասկացության ներքո: Եթե ցուցմունքը նշանակալի չափով կարող է որպես հիմք ծառայել դատապարտման համար, ապա անկախ նրանից, թե այն տրվել է վկայի կողմից՝ նեղ իմաստով, թե համամեղադրյալի կողմից, այն մեղադրանքի կողմի համար հանդիսանում է ապացույց, որի նկատմամբ կիրառվում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի (դ) կետով ամրագրված երաշխիքները (Լուկան ընդդեմ Իտալիայի, թիվ 33354/96, 27/02/2001, պարբ. 41):

Քրեական գործով քննություն իրականացնելիս քննիչները պետք է հաշվի առնեն ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքի վերը նշված իրավիճակները, ինչպես նաև այլ հնարավոր իրավիճակներ, և գործը դատարան ուղարկելիս առնվազն պետք է ապահովեն, որ նման վկաների նախաքննական ցուց-

մունքն ապացույցների զանգվածում վճռորոշ նշանակություն չունենա:

Մեղադրյալի՝ վարույթն իրականացնող մարմնից թաքնվելը.

Հանցագործության մեջ կասկածվող անձի գործողությունների, այդ թվում՝ նաև փախուստի արդյունքում քրեական գործով վարույթի ընթացքում որոշ դատավարական գործողությունների կատարումը կարող է դժվարանալ, իսկ որոշ դեպքերում՝ դառնալ նաև անհնարին: Մասնավորապես, այն բոլոր դեպքերում, երբ մեղադրյալի ներկայությունը պարտադիր է, և վերջինս գտնվում է հետախուզման մեջ, քրեական գործով վարույթի ընթացքը կասեցվում է, և միջոցներ են ձեռնարկվում մեղադրյալի գտնվելու վայրը պարզելու, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ վերջինիս ներկայությունն ապահովելու ուղղությամբ: Սակայն վարույթն իրականացնող մարմինն օժտված չէ դատավարության մասնակիցների, այդ թվում՝ մեղադրյալի դեմ ցուցմունքներ տված անձանց ազատ տեղաշարժման իրավունքը սահմանափակելու կամ այլ հանգամանքների ուժով նրանց ներկայությունն ապահովելու լիազորությամբ: Այլ կերպ՝ մեղադրյալի՝ հետախուզման մեջ գտնվելու ժամանակահատվածում վերջինիս կամքից անկախ հանգամանքներում իր դեմ ցուցմունքներ տված անձանց հարցաքննությունը կարող է դառնալ անհնարին: Դա կարող է պայմանավորված լինել ինչպես վկաների բացակայությամբ (խոսքը վերաբերում է այն իրավիճակներին, երբ վկաները մեկնում են անհայտ ուղղությամբ), այնպես էլ վերջիններիս մահվամբ: Հետևաբար, ակներև է, որ նման դեպքերում մեղադրյալի հայտնաբերման դեպքում վարույթն իրականացնող մարմինը չի կարող ապահովել մեղադրյալի կոնֆրոնտացիայի իրավունքի իրացումը:

Վերոհիշյալ իրավիճակում քրեական գործով վարույթի արդարացիության և վկայի՝ հակընդդեմ հարցման իրավունքով

չապահովված ցուցմունքի օգտագործման հարցին Արտուշ Դուլյանի գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ. «(...) [Գ]ործնականում կարող են լինել իրավիճակներ, երբ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձն իր ոչ իրավաչափ վարքագծով նվազեցնի կամ նույնիսկ անհնարին դարձնի հակընդդեմ հարցման իրավունքի կենսագործման հնարավորությունը: Այսպես, այն դեպքերում, երբ հանցագործության մեջ մեղադրվող անձն իմացել է կամ օբյեկտիվորեն պետք է իմանար իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին, սակայն տևական ժամանակ թաքնվել է վարույթն իրականացնող մարմնից և գտնվել հետախուզման մեջ, ապա այդ ժամանակահատվածում վկաները ողջամտորեն կարող են մահանալ կամ հեռանալ երկրից այնպիսի անհայտ հասցեով, որը հնարավոր չլինի պարզել և միջազգային իրավական օգնության շրջանակներում ապահովել հանցագործության մեջ մեղադրվող անձի հակընդդեմ հարցման իրավունքի իրացումը:

Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ թեև նշված հանգամանքները չեն կարող վկայել այն մասին, որ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի թաքնվելու և հետախուզման մեջ գտնվելու հանգամանքներն ինքնին բավարար են անվերապահ եզրահանգում անելու համար, որ անձը զրկվել է հակընդդեմ հարցման իր իրավունքից, սակայն գործի փաստական հանգամանքների համատեքստում դրանք կարող են ունենալ ծանրակշիռ նշանակություն վկայի նախաքննական ցուցմունքի օգտագործման նպատակով հակակշռող գործոնների առկայությունը, ինչպես նաև ընդհանուր առմամբ վարույթի արդարացիությունը գնահատելիս: Այդ համատեքստում էական կարող են լինել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են, օրինակ՝ անձի՝ իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին տեղեկացված լինելու, քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և հետախուզման մեջ գտնվելու ժամանակահատվածի տևողության, վարույթին պաշտպանի ներգրավվածության, անձի հայտնաբերման և վարույթն

իրականացնող մարմնի տրամադրության տակ հայտնվելու հանգամանքների և գործի այլ փաստական տվյալների գնահատումը, որոնք կարող են վկայել այն մասին, որ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձը ողջամտորեն կանխատեսելով վրա հասնող հետևանքների բնույթը՝ իր ոչ իրավաչափ վարքագծով իրեն ենթադրաբար զրկել է իր դեմ ցուցմունք տված անձանց հակընդդեմ հարցման ենթարկելու հնարավորությունից: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ նշված հանգամանքների հաշվառմամբ հակընդդեմ հարցման իրավունքի սահմանափակման փաստը հաստատելիս դատարանները բոլոր դեպքերում պետք է փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով հիմնավորեն, որ դատաքննությանը չներկայացած վկայի նախաքննական ցուցմունքների օգտագործման պայմաններում ընդհանուր առմամբ չի խախտվում քրեական վարույթի արդարացիությունը» (տես Արտուշ Վլադիմիրի Ղուլյանի գործով Վճռաբեկ դատարանի 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՏԴ2/0037/01/15 որոշման 19-րդ կետը):

Վերոհիշյալի լույսի ներքո գնահատելով վարույթն իրականացնող մարմնից մեղադրյալի թաքնվելու պայմաններում վերջինիս հակընդդեմ հարցման իրավունքի իրացման հարցը՝ հարկ է փաստել, որ քրեական գործով վարույթի արդարացիության գնահատման համատեքստում Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլնի, առանձնացնում է քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և հետախուզման մեջ գտնվելու ժամանակահատվածի տևողությունը, վարույթին պաշտպանի ներգրավվածությունը, անձի հայտնաբերման և վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ հայտնվելու հանգամանքները, ինչպես նաև իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման մասին տեղեկացված լինելը: Նշված հանգամանքների գնահատումը և դրանց առանձնահատկությունների վերհանումը քրեական գործով վարույթի արդարացիության ելակետերն են:



Ուղեցույց

Դասի հիմնական ուղղվածությունը տեսական գիտելիքի հաղորդումն է, սակայն նախատեսվում է նաև գործնական հմտությունների որոշակի ծավալ: Օգտագործեք Սահիկ 2-ը դասի առաջին մասի ընթացքում: Երկրորդ ժամում կազմակերպեք տեսաֆիլմի դիտում, որից հետո հրավիրեք փոխակտիվ քննարկում ֆիլմում բարձրացված հարցերի վերաբերյալ: Ունկնդիրներին առաջարկեք, որ ներկայացնեն օրինակներ սեփական փորձից, երբ հակընդդեմ հարցման իրացմանը հանդիպել են խոչընդոտներ կամ հանգամանքներ, որոնք սահմանված են օրենքով և որոնք դժվարացրել են այդ իրավունքը իրացնել՝ ինչպես նշված է վերը նշված օրինակներում:

Տեսաֆիլմը կարող եք դիտել հետևյալ հղումով.

<https://aglaw.am/public/am/trainingmaterialsubfolder/14>



Գրականություն

- | | |
|--------------|--|
| 1. Սահիկ 2 | Հակընդդեմ հարցման իրավունքի սահմանափակումները |
| 2. Տեսաֆիլմ | Տեսաֆիլմ ցուցմունք տալուց հրաժարվելու մասին |
| 3. ՄԻԵԴ վճիռ | Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի |
| 4. ՄԻԵԴ վճիռ | Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի |



ԴԱՍ 3

Բացակա վկա և հակընդդեմ հարցման իրավունք

Դաս 3 Երեք պայմաններ բացակա վկայի նախաքննական ցուցմունքն օգտագործելու համար
Վարժություն

1 ժամ
 1 ժամ



Դասի նպատակն է բացակա վկայի նախաքննական ցուցմունքի օգտագործման հիմքերի ու պայմանների մասին տեսական գիտելիքներ յուրացնելը:



Ակնկալվող արդյունքները .

- ունկնդիրները կսովորեն բացակա վկայի նախաքննական ցուցմունքը որպես ապացույց օգտագործելու երեք պայմանների մասին, որոնք սահմանվել են Մարդու իրավունքների եվրոպական դափարանի կողմից,
- ձեռք կբերեն գործնական գիտելիքներ այդ պայմանների կիրառության մասին,
- կտիրապետեն այն նախադեպային իրավունքին, որով կարգավորվում է չափանիշների կիրառումը:



Նախորդ բաժնում ներկայացվեցին հակընդդեմ հարցման իրավունքի իրականացման ընդհանուր սկզբունքները, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք խոչընդոտում են այդ իրավունքի իրականացմանը: Առաջինի առումով նշվեց, որ, որպես կանոն, մեղադրյալը պետք է հնարավորություն ունենա հակընդդեմ հարցման իրավունքը իրականացնել դատական քննության փուլում, քանի որ այդ փուլում մեղադրյալը ունի երկու կարևոր երաշխիքներ. դատավարության հրապարակային բնույթը և ապացույցների հետազոտման մրցակցային կարգը: Նշվեց նաև, որ դատարանում վկային հարցաքննելու կանոնից թույլատրվում է բացառություն, որն է վկայի նախաքննական ցուցմունքը որպես ապացույց օգտագործելը, սակայն դա պետք է արվի պայմանով, եթե մեղադրյալն ունեցել է պատշաճ ու համարժեք հնարավորություն նախաքննության փուլում վկային հակընդդեմ հարցման ենթարկելու կամ վկայի հետ կապված այլ ապացույցը վիճարկելու համար:

Ինչ վերաբերում է հանգամանքներին, որոնք խոչընդոտում են հակընդդեմ հարցման իրավունքի իրացմանը դատական քննության փուլում, նշվեց, որ դրանցից առավել տարածվածը վկայի բացակայությունն է դատաքննության փուլում, որի պատճառով էլ դատավորները հաճախ ստիպված են լինում նահանջել հիմնական կանոնից և բացառության կարգով մեղադրական դատավճռում հիմնվել նախաքննական ցուցմունքի վրա: Ստացվում է, որ ապացույցների զանգվածում հայտնվում է մի ապացույց, որը հրապարակային դատավարության պայմաններում և մրցակցային դատավարության կարգով չի ստուգվել հակընդդեմ հարցման եղանակով:

Հաշվի առնելով, որ ամենատարածված խոչընդոտը վկայի բացակայությունն է, ինչպես նաև հաշվի առնելով, որ դրա վերաբերյալ Եվրոպական դատարանը կայացրել է առավել շատ որոշումներ, որը վկայում է այն մասին, որ վկաների բացակայությունը դատաքննության փուլում խնդրահարույց է նաև

Եվրոպայի խորհրդի այլ պետություններում, որոշեցինք դասընթացի մեծ մասը նվիրել այդ խնդրին՝ հատկապես հաշվի առնելով, որ հակընդդեմ հարցման ընդհանուր սկզբունքները կիրառելի են նաև այդ իրավունքի այլ սահմանափակումների նկատմամբ, որոնց մասին նշվել է նախորդ բաժնում:

Նախաքննական ցուցմունքը մեղադրական դատավճռում որպես ապացույց օգտագործելիս պետք է հաշվի առնել հետևյալ երեք պայմանները.



Առաջին, արդյոք առկա է վկայի դատական քննությանը չներկայանալու հիմնավոր պատճառ:

Երկրորդ, արդյոք վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ ապացույց է ապացույցների ընդհանուր զանգվածում:

Երրորդ, արդյոք առկա են բավարար հակակշռող գործոններ, որոնք կարող են փարապել հակընդդեմ հարցման եղանակով չստուգված ապացույցի արժանահավատության վերաբերյալ կասկածները, և որոնք կարող են հակակշռել դատարանում հակընդդեմ հարցման հնարավորության բացակայությանը:

Եթե առաջին պայմանը բավարարված չէ, այսինքն՝ վկայի բացակայությունը հարգելի չէ, անհիմն է, դա ինքնին բավարար չէ արդար դատաքննության իրավունքը խախտված ճանաչելու համար, թեև, միևնույն ժամանակ, էական հանգամանք է դատավարության արդարացիությունը գնահատելու համար, քանի որ վկաները, որպես կանոն, պետք է ցուցմունք տան հրապարակային դատական քննության պայմաններում: Այդուհանդերձ, եթե առաջին պայմանը բավարարված չէ, անհրաժեշտ է անցնել երկրորդ կանոնին՝ պարզելու համար վկայի նախաքննական ցուցմունքն ապացուցողական ուժը: Եթե նախաքննական ցուցմունքը ապացույցների ընդհանուր զանգվա-

ծում միակ կամ վճռորոշ ապացույցն է, անհրաժեշտ է անցնել երրորդ կանոնին՝ պարզելու համար, թե արդյոք առկա են հակակշռող գործոններ, որոնք կարող են ցրել հակընդդեմ եղանակով չստուգված ապացույցի արժանահավատության վերաբերյալ չփարատված կասկածները: Երրորդ պայմանը չբավարարվելու դեպքում նոր կարելի է արձանագրել, որ հակընդդեմ հարցման եղանակով չստուգված ապացույցի օգտագործումը մեղադրական դատավճռում հանգեցրել է մեղադրյալի արդար դատական քննության իրավունքի խախտմանը:

Նշենք, որ վերը նշված երեք պայմանները բխում են հակընդդեմ հարցման իրավունքի ընդհանուր սկզբունքից, որի մասին նշվել է առաջին դատում: Հիշեք, որ ընդհանուր սկզբունքը սահմանում էր նախաքննական ցուցմունքը՝ որպես բացառություն օգտագործելու հնարավորությունը, իսկ նշված երեք պայմանները կոչված են ապահովելու նախաքննական ցուցմունքը՝ որպես բացառություն կիրառելու այդ հնարավորությունը:

Հաջորդ դատում կուսումնասիրենք երեք պայմաններն առանձին-առանձին:



Ուղեցույց

Օգտագործեք Սահիկ 3-ը տեսական նյութը ներկայացնելիս: Բնականաբար, ամենակարևորը նախաքննական ցուցմունքի օգտագործման երեք պայմաններն են: Կարող եք պատրաստել այդ չափանիշների վերաբերյալ առանձին ազդարար ու բաժանել ունկնդիրներին: Գրադարանում ներառել ենք հակընդդեմ հարցման իրավունքի վերաբերյալ ՄԻԵԴ ամենակարևոր երկու վճիռների՝ Մանուչարյանի և Ավետիսյանի գործերով համառոտագրերը: Ներկայացված են միայն այն հատվածները, որոնցում դատարանը կիրառել է երեք չափանիշները: Տպեք այդ համառոտագրերը և բաժանեք լսարանին: Ունկնդիրներին հրավիրեք ուսումնասիրելու, թե ինչպես է ՄԻԵԴ-ը վերլուծում բացակա վկայի նախաքննական ցուցմունքի օգտագործման

վերաբերյալ երեք չափանիշները: Այս վարժության համար կարևոր չէ փաստերի ու սկզբունքների մանրամասն վերլուծություն: Վարժությունը միայն ճանաչողական նշանակություն ունի: Հրավիրեք լսարանին ներկայացնել հարցեր կամ նկատառումներ: Հարց տվեք, թե արդյոք ՄԻԵԴ-ի մոտեցումը տարբերվում է ներպետական պրակտիկայից, եթե այո, խնդրեք ներկայացնել, թե որոնք են տարբերությունները:



Գրականություն

- | | |
|--------------|---|
| 1. Սահիկ | 3 Երեք պայմաններ բացակա վկայի նախաքննական ցուցմունքն ընդունելու համար |
| 2. ՄԻԵԴ վճիռ | <i>Մանուշարյանն ընդդեմ Հայաստանի</i> |
| 3. ՄԻԵԴ վճիռ | <i>Ավեփիսյանն ընդդեմ Հայաստանի</i> |
| 4. ՄԻԵԴ վճիռ | <i>Շաչաշվիլին ընդդեմ Գերմանիայի</i> |



ԴԱՍ 4

Վկայի չներկայանալու հիմքերը

Դաս 4 Պայման 1 – Վկայի բացակայության հարգելի պատճառ	1 ժամ
Վարժություն	1 ժամ



Դասի նպատակն է բացակա վկայի ցուցմունքի օգտագործման առաջին պայմանի՝ բացակայության հարգելի հիմքերի վերաբերյալ տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ սովորելը:



Ակնկալվող արդյունքները .

- *ունկնդիրները կսովորեն, թե որ հիմքերն են համարվում հարգելի կամ անհարգելի վկայի բացակայության համար՝ ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի,*
- *կտիրապետեն ՄԻԵԴ և Վճռաբեկ դատարանի համապատասխան նախադեպային իրավունքին, որոնցում դատարաններն արտահայտել են իրավական դիրքորոշումներ այդ խնդրի մասին:*



Կանխավարկածը միշտ պետք է խոսի վկայի ներկայության օգտին, քանի որ ապացույցի հետազոտումը, որպես կանոն, պետք է արվի դատական քննության փուլում՝

հրապարակային դատավարության պայմաններում և մրցակցային դատավարության կարգով: Դա նշանակում է, որ դատարանը պետք է կիրառի նկատելի ջանքեր վկայի ներկայությունը դատարանում ապահովելու ուղղությամբ: Ձևական կամ նվազագույն ջանքերը կարող են անբավարար համարվել: Անհրաժեշտ է ցույց տալ, որ օրենքով սահմանված բոլոր հնարավորությունները, այդ թվում նաև, անհրաժեշտության դեպքում, միջազգային իրավական փոխօգնության իրավական մեխանիզմները փորձ է արվել օգտագործել: Ինչպես սահմանվել է *Ավերիսյանն ընդդեմ Հայաստանի* գործով ՄԻԵԴ վճռով, Եվրոպական դատարանը սովորաբար կոշտ մոտեցում է ցուցաբերում՝ որոշելու համար, թե արդյոք ազգային դատարանը բավարար փաստական կամ իրավական հիմքեր է ունեցել վկայի՝ դատական քննությանը չապահովելու համար: Ըստ Եվրոպական դատարանի, եթե վկայի գտնվելու վայրը պարզել հնարավոր չէ, ապա մարմինները պետք է «ակտիվորեն փնտրեն վկային» և ձեռնարկեն «բոլոր հնարավոր միջոցները՝ վկայի ներկայությունն ապահովելու համար» (տե՛ս *կետ 51-ում*):

Մյուս կողմից, դատավորի վրա չի կարող դրվել անհիմաստ կամ անհնար պարտականություն վկայի ներկայությունը դատարանում ապահովելու ուղղությամբ: Օրինակ, եթե դատարանը պարզել է, որ վկան գտնվում է Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ապա անհիմաստ ու անհամաչափ է պահանջելը, որ դատարանը նախաձեռնի իրավական փոխօգնության ընթացակարգ, քանի որ ՀՀ-ի և ԱՄՆ-ի միջև բացակայում է իրավական փոխօգնության որևէ պայմանագիր:

Թեև *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանը արտահայտել էր իրավական դիրքորոշում, որ վկայի չներկայանալու համար հարգելի պատճառի բացակայությունը հանգեցնում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի դ կետի խախտմանը, *Շաչաշվիլին ընդդեմ Գերմանիայի* գործով Մեծ Պալատը նշել է, որ վկայի՝ քննությանը չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը **չի կարող հնքնին որոշիչ լինել** դատաքննությունն անարդարացի

համարելու հարցում՝ չնայած այն շատ կարևոր գործոն է դատավարության արդարացիությունը բոլոր գործոնների հավասարակշռության մեջ գնահատելիս, և այդ իմաստով անհարգելի բացակայությունը կարող է որոշիչ դեր ունենալ այդ հավասարակշռությունը ի հոգուտ 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում արձանագրելիս:

«Հ դատական պրակտիկայում վկաների չներկայանալու դեպքերը տարածված են: Դրանք ունեն տարբեր պատճառներ: Դրանց մի մասի վերաբերյալ նշվեց վերևում: Երբեմն վկաները չներկայանալը պատճառաբանում են զբաղվածությամբ, հիվանդությամբ, միջոցների բացակայությամբ: Տարածված է նաև կարծրատիպ, որ դատարան ներկայանալը հակահասարակական երևույթ է, անբարոյականություն, մեղադրյալի վրա այսպես կոչված «գործ տալու» պարսավելի արարք: Հաճախ վկաները գրությամբ դիմում են դատարանին՝ խնդրելով բավարարվել հրապարակելով նախաքննական ցուցմունքը՝ ներկայացնելով ինչ-որ պատճառաբանություն դատարան ներկայանալու անհնարինության վերաբերյալ: Տարածված է նաև վկաների բացակայությունը հանրապետությունից՝ մշտական բնակության մեկնած լինելու կամ աշխատանքային միգրանտ լինելու պատճառով: Նման դեպքերում դատարանները կարող են փորձել միջազգային իրավական փոխօգնության մեխանիզմները, եթե, իհարկե, տվյալ պետության հետ փոխօգնության մեխանիզմ առկա է (*Շաչաշվիլին ընդդեմ Գերմանիայի* §121): Հանդիպում են նաև դեպքեր, երբ վկան թաքնվում է իրավապահ մարմիններից և գտնվում է միջազգային հետախուզման մեջ: Առավել հազվադեպ են, երբ վկան ստացել է ապաստանի հնարավորություն և փախստականի կարգավիճակ օտարերկրյա պետությունում, որի դեպքում, ելնելով միջազգային իրավունքի չվերադարձնելիության սկզբունքից, անհնարին է ապահովել նրա ներկայությունը հարկադրանքի միջոցի կիրառումով:

Հաճախ են հանդիպում նաև դեպքերը, երբ վկաների նկատմամբ իրականացվում է ճնշում կամ հնչում են սպառնալիքներ դատարան չներկայանալու վերաբերյալ: Եթե դա հնչում

է մեղադրյալի կողմից կամ նրա դրդմամբ, ապա դա հատուկ կարգավորման առարկա է, քանի որ բարձրացնում է իրավունքի չարաշահման մասին հարց: Ըստ Եվրոպական դատարանի՝



անհրաժեշտ է տարբերակում անցկացնել երկու տեսակի վախի միջև. վախը, որը պայմանավորված է մեղադրյալի սպառնալիքներով կամ այլ գործողություններով, և վախը, որը պայմանավորված է առավել ընդհանուր բնույթի վախով՝ կապված ընդհանրապես դատարանում ցուցմունք տալու հանգամանքով: Եթե վկայի վախը պայմանավորված է մեղադրյալի կամ նրա անունից գործող անձանց գործողություններով, ապա միանգամայն ընդունելի է, որպեսզի տվյալ վկայի ցուցմունքը դատարանում հետազոտվի առանց այդ վկայի ներկայության կամ որպեսզի այդ վկան հակընդդեմ հարցման չենթարկվի մեղադրյալի կամ նրա ներկայացուցիչների կողմից՝ նույնիսկ եթե նման ապացույցը մեղադրյալի դեմ միակ կամ վճռորոշ ապացույցն է: Տուժողների և վկաների իրավունքների հետ անհամատեղելի է, եթե թույլ տրվի, որ մեղադրյալն օգտվի վկաների նկատմամբ վախ սերմանելու հետևանքներից: Չի կարելի ակնկալել, որ որևէ դատարան երբևէ թույլ կտա, որ նման եղանակով աղավաղվի դատավարության ընթացքը: Հետևաբար, պետք է ակնկալել, որ նման քայլի դիմելով մեղադրյալը հրաժարվում է 6-րդ հոդվածի 3-րդ մասի դ կետով սահմանված վկային հարցաքննելու իր իրավունքից:

Ալ-Խավայան ու Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 26766/05 և 22228/06, §§ 122-123)

Այսպիսով, մեղադրյալի կողմից վկայի վրա ճնշում գործադրելը, դատարանն չներկայանալու ու ցուցմունք չտալու նպատակով, համարժեք է հակընդդեմ հարցման իրավունքից կամովին հրաժարվելուն՝ դրա իրավական բոլոր հետևանքներով: Այլ կերպ ասած, մեղադրյալը չի կարող օգտվել վկայի դատարանն չներկայանալու իր համար բարենպաստ հետևանքից, որից բխում է, որ դատավորը կարող է բավարարվել վկայի նախաքննական ցուցմունքների հրապարակումով՝ հաշվի առնելով, որ վկայի հասցեին իր կամ իր կողմնակիցների կողմից սպառնալիքներ հնչեցնելով և նրա մեջ վախ սերմանելով մեղադրյալը փաստորեն հրաժարվում է վկային դատարանում հակընդդեմ հարցման ենթարկելու իր կոնվենցիոն իրավունքից: Եթե անձն իր գործողություններով հրաժարվում է իր այս կամ այն դատավարական իրավունքից, դատարանը չի կարող պատասխանատվություն կրել այդ իրավունքի չտրամադրման համար: Այդուհանդերձ, պետք է նաև հաշվի առնել, որ մեղադրյալին հակընդդեմ հարցման իրավունքից զրկելը պետք է արվի զգուշորեն և միայն այն բանից հետո, երբ դատարանը համոզվի, որ բոլոր այլընտրանքային միջոցները (օրինակ, վկայի պաշտպանության միջոցները՝ շղարշ, պաշտպանիչ էկրան, թաղանթ) աննպատակահարմար է կամ անհնարին է կիրառել, քանի որ դա կվտանգի վկայի անվտանգությունը: Նման մոտեցումը վկայում է համաչափության սկզբունքի նկատմամբ դատարանի հարգանքի մասին:

Վկայի չներկայանալը կարող է պայմանավորված լինել նաև նրա խոցելիությամբ: Մասնավորապես, սեռական բռնության, գենդերային խտրականության, թրաֆիքինգի զոհերի, անչափահաս տուժողների, հաշմանդամություն ունեցող անձանց համար դատարանում կրկին ցուցմունք տալը, մեղադրայլի հետ առերեսվելը կարող է հանգեցնել երկրորդային զոհականացման: Դրանից խուսափելու համար դատարանները երբեմն կիրառում են զոհակենտրոն դատավարական ընթացակարգեր՝ որոշակիորեն սահմանափակելով դատավարության մասնակիցների իրավունքները՝ այս խոցելի խմբերի ներկայությունը

դատարանում ապահովելու, նրանց հարցաքննելու ուղղությամբ: Օրինակ, անչափահաս տուժողի շահերը մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի հետ փոխհավասարակշռելու նպատակով առաջարկվում է կիրառել ցուցմունքի դեպոնացման դատավարական ընթացակարգ նախաքննության փուլում, որպեսզի անչափահաս տուժողը կրկին դատարանում չհարցաքննվի: Ըստ զոհակենտրոն մոտեցման՝ դատախազները, մասնավորապես, պետք է խորհրդակցեն զոհերի հետ՝ ցուցմունք տալուն ամենահամապատասխան մոտեցումը որոշելու համար: Իրավակիրառողները պետք է ընդհանուր առմամբ ապահովեն գաղտնիության պաշտպանությունը, եւ դրա համար կարող է պահանջվել զոհի ինքնությունը գաղտնի պահել ոչ միայն լրատվամիջոցներից, այլ նաև դատական նիստերի արձանագրություններում: Ի հավելումն,

Անչափահաս տուժողի ցուցմունքների դեպոնացման մասին հոդվածն ամբողջությամբ կարող եք կարդալ հետևյալ հղումով
<http://investigative.am/news/view/deponacum.html>

դատավորները կարող են կայացնել որոշում՝ դռնփակ դատական քննություն անցկացնելու մասին, որի դեպքում մեղադրյալը զրկվում է հրապարակային քննության առավելությունից:

Ամփոփելով, նշենք, որ զոհակենտրոն ընթացակարգերը ևս մեկ խոչընդոտ են հակընդդեմ հարցման իրավունքի իրականացման համար: Դա և նման հանգամանքները պետք է հաշվի առնվեն նախաքննական մարմինների կողմից նախաքննության փուլում՝ խուսափելու համար, որ նման վկաների ցուցմունքները վճռորոշ ապացուցողական նշանակություն ձեռք բերեն քրեական գործում, քանի որ դա ևս, որպես երկրորդ պայմանի բավարարում, կմեկնաբանվի ի հոգուտ մեղադրյալի: Այդ մասին կխոսվի հաջորդ բաժնում:



Ուղեցույց

Օգտագործեք Սահիկ 4-ը տեսական նյութը ներկայացնելիս: Վկաների ներկայությունն ապահովելու վերաբերյալ սկզբունքները մանրամասնորեն ներկայացված են Շաչաշվիլի, Մանուչարյանի, Գաբրիելյանի և Ավետիսյանի գործերում: Կարող եք էկրանին պատկերել հատվածներ այդ դատական ակտերից: Գրադարանում ներառված են երկու վարժություններ, որոնց պատասխանները կարող եք գտնել Գաբրիելյանի և Տեր-Սարգսյանի գործերով վճիռներում: Առաջարկվում է պատասխաններից կազմել ազդարարներ և բաժանել ունկնդիրներին: Կարող եք նաև դեպոնացման վերաբերյալ հողվածի առանձին հատվածներից պատրաստել ազդարարներ:



Գրականություն

- | | |
|----------------|--|
| 1. Սահիկ 4 | Բացակայության հարգելի պատճառներ |
| 2. ՄԻԵԴ վճիռ | Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի |
| 3. ՄԻԵԴ վճիռ | Տեր-Սարգսյանն ընդդեմ Հայաստանի |
| 4. Հողված | Անչափահաս տուժողի ցուցմունքների դեպոնացում |
| 5. Վարժություն | Իրավիճակային խնդիր 1 |
| 6. Վարժություն | Իրավիճակային խնդիր 2 |



ԴԱՍ 5

Վկայի ցուցմունքի ապացուցողական ուժը

Դաս 5 Պայման 2 – Ապացույցի «միակ» կամ «վճռորոշ» լինելը

1 ժամ

Վարժություն

1 ժամ



Դասի նպատակն է բացակա վկայի նախաքննական ցուցմունքի օգտագործման երկրորդ պայմանի՝ ապացույցի գնահատման «միակ» կամ «վճռորոշ» կանոնի վերաբերյալ տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ սովորելը:



Ակնկալվող արդյունքները .

- ունկնդիրները կսովորեն ապացույցի գնահատման «միակ» կամ «վճռորոշ» կանոնի կիրառության մասին,
- կփրհապեպեն համապատասխան նախադեպային իրավունքին և կսովորեն, թե ինչպես կիրառել նախադեպերը:



Եթե անձի դատապարտման համար հիմք են ծառայել բացառապես կամ վճռորոշ մասով այն վկաների ցուցմունքները, որոնց մեղադրյալը հնարավորություն չի ունեցել հարցաքննել և նախաքննության, և դատաքննության փուլում, նրա

պաշտպանության իրավունքներն անհիմն սահմանափակվում են: Հակընդդեմ հարցման եղանակով չստուգված վկայի ցուցմունքը չի կարող լինել միակ կամ վճռորոշ ապացույցը քրեական գործի ապացույցների զանգվածում: Միակ բացառությունը այն է, որ առկա լինեն հակակշռող գործոններ, որոնց մասին խոսվում է հաջորդ դասում:

«Միակ» ապացույց ասելով պետք է հասկանալ մեղադրյալի դեմ ներկայացված մեկ ապացույց՝ այսինքն, բառը մեկնաբանվում է իր սովորական իմաստով (տես *Ալ-Խավաջայի և Թահերիի* գործը, վերևում հիշատակված, § 131): «Վճռորոշ» բառը մեկնաբանվում է նեղ իմաստով՝ որպես այնպիսի նշանակության կամ կարևորության ապացույց, որը կարող է որոշիչ լինել գործի ելքի համար: Եթե վկայի չստուգված նախաքննական ցուցմունքը հիմնավորվում է այլ, անուղղակի ապացույցներով, ապա ցուցմունքի վճռորոշ լինելու հանգամանքը գնահատելը կախված կլինի այլ ապացույցների ապացուցողական ուժից. որքան հիմնավոր լինեն անուղղակի ապացույցները (դրանց համակցության մեջ), այնքան նվազ է հավանականությունը, որ բացակա վկայի ցուցմունքը համարվի վճռորոշ (նույն տեղում, § 131): Այսպիսով, բացակա վկայի նախաքննական ցուցմունքի ապացուցողական նշանակությունը գնահատվում է այլ ապացույցների համակցության մեջ: Որքան մեծ է այլ ապացույցների համակցությունը և որքան մեծ է դրանց ապացուցողական նշանակությունը, այնքան նվազում է բացակա վկայի ցուցմունքի ապացուցողական նշանակությունը, ու այդ պատճառով բացակա վկայի ցուցմունքը կարող է չհամարվել վճռորոշ՝ անուղղակի ապացույցների համակցության մեջ՝ նույնիսկ ուղղակի ապացույցների բացակայության պարագայում: Եվրոպական դատարանի այս մոտեցումը համահունչ է Սիրակ Սաքանյանի և Արարատ Ավագյանի գործերով Վճռաբեկ դատարանի՝ ապացույցի բավարար համակցության վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումների հետ: Կարելի է վկայակոչել հետևյալ մեջբերումը Սիրակ Սաքանյանի գործով վճռից.



«... Որոշելով ապացույցների բավարարությունը՝ վարույթն իրականացնող մարմինները լուծում են քրեական գործի համար էական նշանակություն ունեցող հանգամանքների հետազոտման խորության աստիճանի հետ կապված հարցերը, մասնավորապես այն, թե ինչ աստիճանի պետք է մանրացվի յուրաքանչյուր հանգամանքը, և ինչ ծավալի ապացույցներ են անհրաժեշտ այդ հանգամանքները հավաստի պարզելու և դրա հիման վրա այս կամ այն դատավարական որոշումը կայացնելու համար:

Այսպիսով, ապացույցների բավարարությունը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման շրջանակների այնպիսի որոշումը, որպեսզի հավաքված ապացույցները որակական կողմից ապահովեն ապացուցման առարկայի յուրաքանչյուր տարրի պարզումը, իսկ քանակական կողմից՝ այդ հանգամանքների բացահայտման արժանահավատությունը և դատավարական որոշումների հիմնավորվածությունն ու պատճառաբանվածությունը»:

դեմ Սիրակ Սաքանյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԷԴ/0058/01/10 որոշման 14-15-րդ կետերը:

Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի գործում խնդրո առարկա հարցը նրանում էր, որ մեղադրյալը հնարավորություն չէր ունեցել հարցաքննել վկային ո՛չ նախաքննության փուլում (առերեսման եղանակով) և ո՛չ է դատաքննության փուլում: Դատարանը եզրահանգեց, որ մեղադրյալի մեղքը հաստատվում էր նաև այլ վկաների ցուցմունքներով, հետևաբար, բացակա վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ ապացույցը չէր:



44. Այնուամենայնիվ, սխալ է պնդելը, որ դիմումատուի դատապարտման համար վճռորոշ է եղել վկա Օ-ի ցուցմունքը ... Նրա դատապարտման հիմքում դրվել են նաև երկու կարևոր ականատես վկաների՝ Ժ-ի և Մ-ի ցուցմունքները, երեք այլ վկաների ցուցմունքները, ինչպես նաև մի շարք փորձագետների եզրակացությունները և զննությունների արձանագրությունները...: Ուստի վկա Օ-ի ցուցմունքները հաստատված են եղել գործում առկա այլ, հավասարապես կարևոր ապացույցներով...:

45. Ավելին, ի հակադրումն դիմումատուի պնդումների՝ վկա Օ-ի ցուցմունքը միակը չի եղել, որի արդյունքում դատարանները հանգել են այն եզրակացության, որ դիմումատուն խախտել է ճանապարհային երթևեկության կանոնները: Իրականում, վկա Օ-ի ցուցմունքը էական հակասության մեջ չի եղել երկու այլ ականատես վկաների՝ Կ-ի և Ը-ի ցուցմունքների հետ, քանի որ նրանք երեքն էլ հաստատել են, որ դիմումատուն մեքենան վարելիս գերազանցել է օրենքով թույլատրված առավելագույն 60 կմ/ժ արագությունը...:

46. Դատարանը եզրակացնում է, որ այն հանգամանքը, որ դիմումատուն չի կարողացել հարցաքննել վկա Օ-ին, սույն գործի պարագայում, չի սահմանափակել պաշտպանության կողմի իրավունքներն **այնչափ**, որ հանգեցնի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի խախտման:

Վերջին նախադասության մեջ «այնչափ» բառը ընդգծել ենք ցույց տալու համար, թե ինչպես է դատարանը փոխհավասարակշռում մեղադրյալի իրավունքներն արդարադատության շահի, դատավարության այլ մասնակիցների իրավունքների հետ: Դատարանը, փաստորեն, ընդունել է, որ մեղադրյալի հակ-

ընդդեմ հարցման իրավունքը սահմանափակվել է, քանի որ ի վերջո նա հնարավորություն չի ունեցել հարցաքննել իր դեմ ցուցմունք տված վկա Օ-ին, սակայն մեղադրյալը, միևնույն ժամանակ, հնարավորություն է ունեցել հակընդդեմ հարցման ենթարկել մյուս վկաներին, ինչպես նաև վիճարկել մեղադրանքի հիմքում ընկած այլ ապացույցները հրապարակային դատավարության պայմաններում և մրցակցային դատավարության կարգով: Հետևաբար, եթե դատավարության արդարացիությունը գնահատվի իր ամբողջության մեջ, մեղադրյալի իրավունքը սահմանափակվել է համարժեքորեն, համաչափորեն, անհրաժեշտաբար՝ ոչ ավելին, քան անհրաժեշտ է դատավարության նպատակներն իրագործելու նպատակով՝ առանց իմաստագրկելու հակընդդեմ հարցման իրավունքը ողջ դատավարության լույսի ներքո:

Ահա Եվրոպական դատարանի ևս մեկ վերլուծություն *Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռից, որում դատարանը վերլուծել է, թե բացակա վկայի նախաքննական ցուցմունքը վճռորոշ ապացույց է, թե՛ ոչ:

56. ... Վկայի մինչդատարանական ցուցմունքը միակ ուղղակի ապացույցն է, որով հիմնավորվում է այն ցուցմունքը, որ մեղադրյալն է կրակ արձակել Կ.Ս.-ի ավտոմեքենայի վրա: Այդ իմաստով ... Ք.Մ.-ն կարող է դիտարկվել որպես մեղադրող կողմի հիմնական վկա: Ինչ վերաբերում է ապացույցների մնացած մասին, Ս.Ս.-ի ցուցմունքը զուտ ապացուցում է, որ Կ.Ս.-ի և մեղադրյալի միջև առկա են եղել լարված հարաբերություններ, մինչդեռ Ք. Մ.-ի ծնողների՝ Ա.Մ.-ի և Ս.Մ.-ի ցուցմունքները հիմնված են եղել ... Ք.Մ.-ի ցուցմունքների վրա...: Վ.Զ.-ի ցուցմունքը, որը նա վերահաստատել է առերես հարցաքննության ժամանակ, հակասում է դիմումատուի պաշտպանական ցուցմունքին այն մասին, որ հանցագործության կատարման ժամանակ նա եղել է



Վ.Ջ.-ի տանը ...: Այդուհանդերձ, ...Վ.Ջ.-ի ցուցմունքն ինքնուրույն չի ապացուցում, որ ավտոմեքենայի վրա կրակ արձակողը եղել է դիմումատու...: Կառավարությունը չի կարողացել հիմնավորել, որ մնացած բոլոր ապացույցները, այդ թվում՝ դատաբժշկական փորձաքննությունը բավարար են որոշիչ կերպով պնդելու համար, որ հանցագործությունը կատարվել է դիմումատուի և ոչ թե մեկ այլ անձի ...կողմից: Օրինակ, դատարանների որոշումներից չի բխում, որ ... դիմումատուի հագին եղած հագուստի վրա կրակոցի՝ դատաբժշկական փորձաքննությամբ հաստատված հետքերն ապացուցում են, որ կրակոցների հեղինակը եղել է նա: Վերոնշյալից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ դիմումատուի դատապարտման համար որոշիչ են եղել քննությունից բացակայող վկա Ք.Մ.-ի ցուցմունքները:

Այսպիսով, ապացույցի գնահատման «միակ կամ վճռորոշ» չափանիշի ներքո՝ այն դեպքում, երբ ամբաստանյալին դատապարտելու համար հիմք են ծառայում բացառապես կամ հիմնականում այն վկաների տված ցուցմունքները, որոնց մեղադրյալը հնարավորություն չի ունեցել հարցաքննել դատավարության փուլերից որևէ մեկում, նրա պաշտպանության իրավունքներն անհիմն սահմանափակվում են: Այդ համատեքստում «վճռորոշ» ցուցմունք պետք է նշանակի միայն այնպիսի նշանակության կամ կարևորության ապացույց, որը կարող էր որոշիչ լինել գործի ելքի համար: Մինչդեռ, եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ ապացույցներով, ապա գնահատականն այն մասին, թե արդյոք չստուգված ապացույցը վճռորոշ ապացուցողական նշանակություն է ունեցել՝ կախված կլինի այլ ապացույցների արժանահավատությունից և հավաստիությունից. որքան հավաստի են մեղավորությունը հաստատող այլ, անուղղակի ապացույցները, այնքան քիչ հա-

վանական է, որ բացակա վկայի ցուցմունքը վճռորոշ ապացուցողական նշանակություն ունի:



Ուղեցույց

Դասը վարեք Սահիկ 5-ի կիրառմամբ: Ներկայացված են մեջբերումներ Ալ-Խավաճայի, Մամիկոնյանի և Մանուչարյանի գործերով ՄԻԵԴ վճիռներից, ինչպես նաև Սիրակ Սաքանյանի գործով Վճռաբեկ դատարանի որոշումից: Այդ մեջբերումներից կարող եք մշակել ազդարարներ և դրանք բաժանել ունկնդիրներին դասի ընթացքում օգտագործելու համար: Դրանք կարող եք օգտագործել նաև գործնական պարապմունքի ժամանակ: Գործնական պարապմունքի համար նախատեսված է Իրավիճակային խնդիր 3-ը: Նույն իրավիճակային խնդիրը կարող եք դիտել տեսաֆիլմերով: Դրանք ներառված են ձեր գրադարանում: Տես, այդ իմաստով, «Միակ կամ վճռորոշ կանոնը» - ՄԱՍ 1 և ՄԱՍ 2 տեսաֆիլմերը: Նույն տեսաֆիլմի ամբողջական երիզը DVD տարբերակով կարող եք գտնել Արդարադատության ակադեմիայի գրադարանում:



Գրականություն

1. Սահիկ 5 Պայման 2 - «Միակ» կամ «վճռորոշ» կանոնը
2. Վճռ. դատարանի որոշում
Սիրակ Սաքանյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի ԵԷԴ/0058/01/10 որոշում
3. ՄԻԵԴ վճիռ
Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի
4. Վարժություն
Իրավիճակային խնդիր 3
5. Տեսաֆիլմ
Միակ կամ վճռորոշ կանոնը: ՄԱՍ 1
6. Տեսաֆիլմ
Միակ կամ վճռորոշ կանոնը: ՄԱՍ 2

ԴԱՍ 6

Հակակշռող գործոններ

Դաս 6 Դատարանի մոտեցումը չստուգված ապացույցին	1 ժամ
Վարժություն	1 ժամ



Դասի նպատակն է բացակա վկայի նախաքննական ցուցմունքի օգտագործման երրորդ պայմանի՝ հակակշռող գործոններ հասկացության մասին տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ յուրացնելը:



Ակնկալվող արդյունքները .

-
- *ունկնդիրները կսովորեն, թե որ գործոններն են հակակշռում հակընդդեմ հարցման իրավունքի իրականացման անհնարինությանը,*
 - *կսովորեն, թե ինչպես է մեկնաբանվում «դատարանի վերաբերմունքը չստուգված ապացույցին» եզրը՝ որպես հակակշռող գործոն,*
 - *կտիրապետեն համապատասխան նախադեպային իրավունքին,*
 - *ձեռք կբերեն հմտություններ դատական պրակտիկայում հակակշռող գործոնի պայմանի կիրառության մասին:*
-



Հակակշռող գործոնները դատավարական միջոցներ են, որոնք լրացնում են վկային դատարանում հակընդդեմ հարցման ենթարկելու դատավարական բացը և վերականգնում խախտված հավասարակշռությունը պաշտպանական կողմի և մեղադրանքի կողմի միջև, այսինքն՝ իրավահավասարությունը, որը գոյացել էր այն պատճառով, որ պաշտպանական կողմը զրկված է եղել վկային հարցաքննել և նախաքննության, և դատաքննության փուլում: Իսկ եթե մեղադրյալը հնարավորություն ունեցել է հարցաքննել վկային նախաքննության փուլում, օրինակ՝ առերեսման միջոցով, դա ինքնին բավարար պայման չէ, քանի որ կարևոր է, թե արդյոք հարցաքննության ժամանակ պաշտպանական կողմը ունեցել է պատշաճ ու համարժեք հնարավորություն հակադրվելու վկայի ցուցմունքներին, դրանք վիճարկելու և հերքելու: Այդ իմաստով դատավարական «պատշաճ» ու «համարժեք» հնարավորությունները նույնպես հակակշռող գործոններ են պնդելու համար, որ, օրինակ՝ առերեսումը հանդիսացել է բավարար հակակշռող գործոն տարբեր պատճառներով չիրականացված հակընդդեմ հարցմանը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հետևյալ կերպ է մեկնաբանել հակակշռող գործոններ հասկացությունը.



«...Միջոցներ, որոնք թույլ են տվել արդարացի և պատշաճ կերպով գնահատել քննությունից բացակայող վկաների տված ցուցմունքների **հավաստիությունը**: Այս համատեքստում վերաբերելի են հետևյալ տարրերը. դատաքննություն իրականացնող **դատարանի մտերցումը չստուգված ապացույցներին**, մեղավորությունը հաստատող **լրացուցիչ ապացույցների** առկայությունը և դրանց ապացուցողական ուժը, ինչպես նաև դատաքննության ժամանակ վկաներին խաչաձև հարցաքննե-

լու հնարավորության բացակայությունը հատուցելու համար ձեռնարկված դատավարական միջոցները»:

(Մանուշարյանն ընդդեմ Հայաստանի, § 57)

Ըստ մեջբերման, հակակշռող գործոնները կոչված են հիմնավորելու հակընդդեմ հարցման եղանակով չստուգված վկայի նախաքննական ցուցմունքի արժանահավատությունը: Դատարանը միևնույն ժամանակ մասնավորեցրել է, թե որոնք են կոնկրետ հակակշռող գործոնները: Մինչ այժմ դատարանի նախադեպային իրավունքում սահմանվել են երեք հակակշռող գործոններ, որոնք հետևյալն են..



Դատարանի մոտեցումը չստուգված ապացույցներին
Լրացուցիչ ապացույցներ
Դատավարական միջոցներ

Դատարանի մոտեցումը չստուգված ապացույցներին.
դա, ըստ էության, վերաբերում է մեղադրական դատավճռում ապացույցները գնահատելու եղանակին ու, ընդհանուր առմամբ, դատական ակտի **պատճառաբանվածությանը**: Եթե մեղադրյալը հնարավորություն չի ունեցել հարցաքննել առանցքային վկային ո՛չ նախաքննության և ո՛չ էլ դատաքննության փուլում, ապա պատճառաբանված մեղադրական դատավճիռը կարող է լուրջ հակակշիռ հանդիսանալ դատավարական այդ բացին այն իմաստով, որ ապացույցների պատշաճ հետազոտումը և, արդյունքում, գնահատականը կարող է փարատել կասկածները բացակա վկայի նախաքննական ցուցմունքի արժանահավատության վերաբերյալ: Օրինակ, *Մանուշարյանն ընդդեմ Հայաստանի* գործում հենց մեղադրական դատավճռի թերի պատճառաբանվածությունն էր, որ որոշիչ ազդեցություն

ունեցավ եզրահանգելու համար, որ անհիմն կերպով սահմանափակվել էր մեղադրյալի՝ առանցքային վկային (սպանության միակ ականատես վկային) հարցաքննելու իրավունքը, ում վկայությունները որոշիչ դեր էին ունեցել մեղադրական դատավճռի համար, հետևաբար, տեղի էր ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ մասի «դ» կետի խախտում: Ուսումնասիրելով դատական ակտը՝ պարզում ենք, որ Եվրոպական դատարանն ուշադրություն էր դարձրել հետևյալ հանգամանքներին. առաջին, դատարանը մեղադրական դատավճռում ապացույցների գնահատում չէր կատարել, դրա փոխարեն ուղղակի շարադրել էր բոլոր ապացույցները դատական ակտի եզրահանգումների բաժնում ու այնուհետև վերացական կերպով հայտարարել, որ բոլոր ապացույցներով ապացուցվում էր մեղադրյալին վերագրվող հանցագործությունը: Որևէ ապացույց չէր գնահատվել ընդունելիության, արժանահավատության, վերաբերելիության և բավարար համակցության հիմքերով: Դատարանը նույնիսկ չէր նշել, որ վկայի նախաքննական ցուցմունքն առանցքային նշանակության ապացույց էր, քանի որ նա միակ ականատես վկան էր, չէր շարադրել, որ մեղադրյալը հնարավորություն չէր ունեցել նրան հակընդդեմ հարցման ենթարկել, և որ այդ ապացույցը ըստ էության հակընդդեմ հարցման եղանակով չստուգված ապացույց էր: Բոլոր ապացույցները հավասարապես ներկայացվել էին որպես մեղադրյալի կողմից հանցագործության կատարման ապացույց՝ առանց վկայի չստուգված ցուցմունքի հավաստիության գնահատման, առանց ապացույցների ապացուցողական նշանակության մասին նշումներ անելու (տե՛ս վճռի 26-րդ պարբերությունը): Հետևաբար, Եվրոպական դատարանը գտել էր, որ գործը քննող դատարանը պատշաճ կարգով չէր քննել վկայի ցուցմունքի հավաստիության հարցը: Բացի այդ, դատարանը թե՛ն վկայակոչել է նաև այլ վկայի ցուցմունքը որպես ապացույց (տե՛ս դատական ակտի 56-րդ պարբերությունը), որի միջոցով մեղադրյալը փորձել էր հիմնավորել իր այլուրեքությունը, սակայն չէր մասնավորեցրել, որ այդ վկայի ցուցմունքով չէր հիմնա-

վորվում մեղադրյալին մեղսագրվող հանցագործությունը, հետևաբար, այդ ապացույցն ինքնին չէր խաթարել մեղադրյալի պաշտպանության իրականացումը: Այսպիսով, դատական ակտն այն աստիճան թերի էր պատճառաբանված, որ չէր կարող հակակշիռ հանդիսանալ հակընդդեմ հարցման հնարավորության դատավարական բացին: Նշանակում է, չէր հարգվել մեղադրանքից պաշտպանվելու մեղադրյալի իրավունքը, քանի որ սահմանափակումն ավելին էր, քան տվյալ հանգամանքների ներքո՝ անհրաժեշտ:

Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի գործում Եվրոպական դատարանն ուշադրություն է դարձրել այն հանգամանքին, որ մեղադրական դատավճռում որևէ նշում չկար այն մասին, որ երեք վկաների նախաքննական ցուցմունքները նվազ ապացուցողական նշանակություն ունեին, քանի որ դրանք անուղղակի ապացույցներ էին: Ընդհակառակը, դատարանն այդ ապացույցները դասել էր մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող ապացույցների շարքին՝ առանց դրանց հավաստիությունը գնահատելու: Դատական ակտից հստակ չէր նաև, որ դատարանը պատշաճ կարգով հետազոտել էր բացակա վկաների ցուցմունքների հավաստիությունը: Ավելին, դատական ակտում, որպես բացակա վկաների ցուցմունքներին հակակշիռ, բացակայում էին մեղադրյալի մեղքը հաստատող լրացուցիչ ապացույցներ, որոնցով համակցության մեջ կգնահատվեր բացակա երեք վկաների նախաքննական, չստուգված ապացույցների արժանահավատությունը (տե՛ս դատական ակտի 57-րդ և 49-րդ պարբերությունները):



Ուղեցույց

Դասը վարեք Սահիկ 6-ով: Ներկայացված են մեջբերումներ Ավետիսյանի, Մանուչարյանի գործերով ՄԻԵԴ վճիռներից: Այդ մեջբերումներից կարող եք մշակել ազդարարներ և դրանք բաժանել ունկնդիրներին դասի ընթացքում օգտագործելու հա-

մար: Դրանք կարող եք օգտագործել նաև գործնական պարապմունքի ժամանակ: Գործնական պարապմունքի համար նախատեսված են նաև երկու խնդիրներ. Իրավիճակային խնդիր 4 և Իրավիճակային խնդիր 5: Յուրաքանչյուր խնդրում առաջադրված են հարցեր խմբային կամ լիանիստ քննարկման համար:



Գրականություն

- | | |
|----------------|--|
| 1. Սահիկ 6 | Հակակշռող գործոններ. Դատարանի մոտեցումը չստուգված ապացույցին |
| 2. ՄԻԵԴ վճիռ | Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի |
| 3. ՄԻԵԴ վճիռ | Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի |
| 4. Վարժություն | Իրավիճակային խնդիր 4 |
| 5. Վարժություն | Իրավիճակային խնդիր 5 |

Հակակշռող գործոններ

Դաս 6 2) Լրացուցիչ ապացույցներ	1 ժամ
Վարժություն	1 ժամ



Դասի նպատակն է բացակա վկայի նախաքննական ցուցմունքի օգտագործման երրորդ պայմանի՝ հակակշռող գործոններ հասկացության մասին տեսական գիտելիքների և գործնական հմտությունների յուրացումը:



Ակնկալվող արդյունքները.

-
- *ունկնդիրները կսովորեն, թե ինչպես է մեկնաբանվում «լրացուցիչ ապացույցներ» չափանիշը որպես հակընդդեմ հարցման իրավունքի հակակշռող գործոն,*
 - *կտիրապետեն համապատասխան նախադեպային իրավունքին,*
 - *ձեռք կբերեն հմտություններ վերը նշված հակակշռող գործոնի կիրառության մասին:*
-



Նախորդ դասին ուսումնասիրեցինք, որ դատական ակտի պատճառաբանվածությունը ապացույցների գնահատման մասով կարող է հակակշիռ հանդիսանալ հակընդդիր հարցման իրավունքի սահմանափակմանը: Դա նախաքննական ցուցմունքի օգտագործման երեք պայմաններից երրորդի՝ «հակակշռող գործոն» պայմանի երեք գործոններից մեկն էր: Այժմ ուսումնասիրենք երկրորդ հակակշռող գործոնը՝ «լրացուցիչ ապացույցներ» հասկացությունը:

«Լրացուցիչ» կամ «այլ» ապացույցներ ասելով՝ նկատի ունենք մեղադրական դատավճռի հիմքում ընկած ուղղակի կամ անուղղակի ապացույցները, որոնց միջոցով հնարավոր է փարատել կասկածները չստուգված ապացույցի արժանահավատության վերաբերյալ: Ըստ *Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճռի, եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ հետազոտված ապացույցներով, ապա դրա որոշիչ լինելու հանգամանքը գնահատելը կախված է հիմնավորող ապացույցների ապացուցողական ուժից. որքան ծանրակշիռ են մեղավորությունը հաստատող այլ ապացույցները, այնքան ավելի քիչ հավանական է, որ քննությունից բացակայող վկայի ցուցմունքը համարվի որոշիչ (կետ 47, ենթակետ (vi)):

Որոշելու համար մեղադրանքի կամ մեղադրական դատավճռի հիմքում ընկած այլ ապացույցների ծանրակշիռ լինելը, դրանց ապացուցողական ուժը, Եվրոպական դատարանը երբեմն հանձն է առնում հետազոտել այդ ապացույցների վերաբերելիությունը և արժանահավատությունը: Սակայն այդ քայլին դիմում է ոչ թե լուծելու համար մեղքի մասին հարց, որի իրավազորությունը Եվրոպական դատարանը չունի, այլ համեմատության մեջ որոշելու համար, թե արդյոք այդ ապացույցների համակցության համեմատ չստուգված ապացույցի վրա մեղադրական դատավճռում հիմնվելն անհամաչափորեն չի սահմանափակել մեղադրանքից պաշտպանվելու մեղադրյալի իրավունքը:

Պոպովն ընդդեմ Ռուսաստանի գործում Եվրոպական դատարանը քննության առավ մեղադրանքի հիմքում ընկած ապացույցների վերաբերելիությունը և բավարար համակցությունը՝ պարզելու համար, թե արդյոք դատարանի որոշումը մեղադրյալի միջնորդությունը մերժելու մասին, որով վերջինս ցանկանում էր դատարան հրավիրել իր այլուրեքությունը հաստատող վկաներին ու նրանց հարցաքննել հրապարակային դատավարության պայմաններում, անհամաչափորեն սահմանափակել էր պաշտպանության իրավունքները: Գնահատելով մեղադրանքի հիմքում ընկած ապացույցները, դատարանը եկավ այն համոզման, որ ապացույցները գերակշիռ մասով վերաբերելի չէին, դրանցով չէր հաստատվում մեղադրյալի կողմից տուժող սպանության փաստը, նրանց միջև թշնամական հարաբերությունների առկայություն և սպանության օրը մեղադրյալի՝ սպանության վայրում ներկա գտնված լինելու հանգամանքները: Միևնույն ժամանակ մեղադրանքի համար հիմք էին ընդունվել նաև չորս դպրոցականների նախաքննական և դատաքննության ցուցմունքները, որոնք հակասական էին, իրարամերժ, ինչպես նաև արժանահավատ չէին, քանի որ դպրոցականները հատուկ դպրոցի աշակերտներ էին: Այդ լույսի ներքո Եվրոպական դատարանը գտավ, որ դատարանի կողմից վկային դատարան հրավիրելու միջնորդության մերժումը պաշտպանական իրավունքի անհամարժեք սահմանափակում էր:

Հակակշռող գործոնների անհրաժեշտ շրջանակը կախված է չներկայացած վկայի ցուցմունքի ապացուցողական նշանակությունից: Որքան կարևոր նշանակություն ունենա այդ ցուցմունքը, այնքան ավելի կարևոր նշանակություն պետք է ունենան հակակշռող գործոնները, որ դատաքննությունն ընդհանուր առմամբ համարվի արդարացի:

Առավել խնդրահարույց են այն դեպքերը, երբ մեղադրանքի համար առանցքային վկայի ցուցմունքը (կամ վկաների ցուցմունքները) ածանցվում են չստուգված վկայի ցուցմունքից: Նման ապացույցը դատավարական լեզվով կոչվում է «ասեկոսե»՝

ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունք: Նման ցուցմունքն ապացուցողական նվազ նշանակություն ունի ու նման ապացույցի նշանակությունը էապես նվազում է, երբ դա ածանցվում է հակընդդեմ եղանակով չստուգված վկայի ցուցմունքից: Բոլոր դեպքերում, եթե ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքը միակ կամ վճռորոշ ապացույցն է ամբաստանյալի դեմ, այն որպես ապացույց ճանաչելն ինքնըստինքյան չի հանգեցնում Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտմանը: Իսկ եթե դատապարտման համար միակ կամ վճռորոշ հիմք են հանդիսացել բացակա վկաների ցուցմունքները, այդ դեպքում բացակա վկաների ցուցմունքների համար անհրաժեշտ կլինեն ուժեղ հակակշիռներ:

Ըստ էության, «ասեկոսե» է համարվում նաև տուժողի վերջին խոսքերը մահանալուց առաջ, որի հավաստիությունը կարելի է ստուգել միայն այլ անձանց վերարտադրած խոսքերով: Նման դեպքերում նույնպես պետք են ամուր հակակշռող գործոններ նման ցուցմունքները մեղադրանքի հիմքում դնելու համար:

Այլ ապացույցների՝ որպես հակակշռող գործի բավարարության լավ օրինակ է *Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի* գործով վճիռը, որում դատարանը եզրահանգեց, որ սխալ է պնդելը, որ մեղադրյալի դատապարտման համար վճռորոշ է եղել միայն դատարան չներկայացած վկա Օ-ի նախաքննական ցուցմունքը, քանի որ նրա դատապարտման հիմքում դրվել էին նաև երկու կարևոր ականատես վկաների ցուցմունքները, երեք այլ վկաների ցուցմունքները, ինչպես նաև մի շարք փորձագետների եզրակացությունները և զննությունների արձանագրությունները, որոնցով հիմնավորվում էր մեղադրյալին մեղսագործությունը, որն էր մեքենան մեծ արագությամբ վարելը և տուժողին մահվան ելքով վրաերթի ենթարկելը: Ավելին, դատարանը նաև նկատել է, որ բացակա վկայի ցուցմունքը էական հակասության մեջ չէր եղել երկու ականատես վկաների ցուցմունքների հետ, քանի որ նրանք երեքն էլ հաստատել էին, որ ամբաստանյալը մեքենան վարելիս գերա-

զանցել էր օրենքով թույլատրված առավելագույն արագության շարժումը: Նման պայմաններում Եվրոպական դատարանը որոշեց, որ այն հանգամանքը, որ ամբաստանյալը հնարավորություն չէր ունեցել հարցաքննել վկային, չէր սահմանափակել պաշտպանության կողմի իրավունքներն այնչափ, որ հանգեցնեի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետի խախտմանը: Այսինքն, այս դեպքում հակակշռող գործոնն այլ ապացույցների առատությունն էր կամ այլ կերպ ասած՝ բավարար համակցությունը, որում ապացույցները, ի տարբերություն վերևում վկայակոչված Պոպովն ընդդեմ Ռուսաստանի գործի, որևէ կերպ խոցելի չէին իրենց թույլատրելիության, վերաբերելիության, արժանահավատության և բավարար համակցության տեսանկյունից:



Ուղեցույց

Դասը վարեք Սահիկ 7-ով: Ներկայացված են մեջբերումներ Մանուչարյանի, Մամիկոնյանի գործերով վճիռներից, ինչպես նաև Պոպովն ընդդեմ Ռուսաստանի գործով ՄԻԵԴ վճռից: Այդ մեջբերումներից կարող եք մշակել ազդարարներ և դրանք բաժանել ունկնդիրներին դասի ընթացքում օգտագործելու համար: Դրանք կարող եք օգտագործել նաև գործնական պարապմունքի ժամանակ: Գործնական պարապմունքի համար նախատեսված են նաև երկու իրավիճակային խնդիրներ. Իրավիճակային խնդիր 6 և Իրավիճակային խնդիր 7: Յուրաքանչյուր խնդրում առաջադրված են հարցեր խմբային կամ լիանիստ քննարկման համար: Ուշադրություն դարձրեք, որ խնդիր 7-ը ուղեկցվում է պատասխանով, որը նախատեսված է դասվարի համար: Սակայն պատասխանը կարող եք առանձին տպել ու բաժանել ունկնդիրներին նրանց նկատառումները լսելուց հետո:



Գրականություն

1. Սահիկ 7 Հակակշռող գործոններ. լրացուցիչ ապացույցներ
2. ՄԻԵԴ վճիռ Պոպովն ընդդեմ Ռուսաստանի
3. Վարժություն Իրավիճակային խնդիր 6
4. Վարժություն Իրավիճակային խնդիր 7



ԴԱՍ 8

Հակակշռող գործոններ

Դաս 8 Հակակշռող դատավարական միջոցներ 1 ժամ
Վարժություն 1 ժամ



Դասի նպատակն է բացակա վկայի նախաքննական ցուցմունքի օգտագործման երրորդ պայմանի՝ հակակշռող գործոններ հասկացության մասին տեսական գիտելիքների և գործնական հմտությունների հաղորդումը:



Ակնկալվող արդյունքները.

- ունկնդիրները կսովորեն, թե ինչպես է մեկնաբանվում «դատավարական միջոցներ» չափանիշը որպես հակակշռող գործոն,
- կտիրապետեն համապատասխան նախադեպային իրավունքին,
- ձեռք կբերեն հմտություններ վերը նշված հակակշռող գործոնի կիրառության մասին:



Հակընդդեմ հարցման իրավունքի հնարավորության բացակայության դատավարական բացը կարող է լրացվել երրորդ խումբ հակակշռող գործոնների առկայությամբ, այն է՝ դա-

տավարական գործողությունները, որոնք ձեռնարկվել են դատական քննության և նախաքննության ժամանակ վկաներին հակընդդեմ հարցման ենթարկելու հնարավորության բացակայությունը լրացնելու համար: Նման դատավարական գործողությունները բազմաթիվ են, բայց պետք է առանձնացնել այն գործողությունները, որոնք հիմնավոր երաշխիք են խախտումների ու կամայականությունների դեմ: Որպես կանոն, դրանք ընթացակարգեր են, որոնք պաշտպանում են մարդու հիմնարար իրավունքները: Հայաստանի իրավակիրառ պրակտիկայում այս հարցը առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերել առերեսում քննչական գործողության պարագայում: Տարածված պրակտիկա է, երբ դատարանները հիմնվում են առերեսման արձանագրության վրա՝ որպես հակընդդեմ հարցման իրավունքի իրացման ապացույց՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպես է իրականացվել առերեսումը: Իր հերթին, նախաքննական մարմինները ձգտում են առերեսումը դատարաններում ներկայացնել որպես հակընդդեմ հարցման իրացված հնարավորություն, ու այդ հիմքով պնդում են, որ այլևս կարիք չկա դատարանում ապահովել հակընդդեմ հարցման հնարավորություն, կամ որ դատարանը կարող է անվերապահորեն հիմնվել առերեսման միջոցով ստացված փաստական տվյալների վրա որպես լիարժեք ապացույց: Մինչդեռ հարցին պետք է նայել հակընդդեմ հարցման հիմնարար սկզբունքի տեսանկյունից, որի մասին խոսվել է այս դասընթացի սկզբում, այն է՝ արդյոք պաշտպանական կողմը՝ հանձինս առերեսմանը, ունեցել է մեղադրանքից պաշտպանվելու **պատշաճ** ու **համարժեք** հնարավորություն: Դա պարզելու համար եկեք ուսումնասիրենք, թե ինչ սահմանափակումներ ունի առերեսումը հակընդդեմ հարցման համեմատ և թե արդյոք առերեսումը երբևէ կարող է հակընդդեմ հարցմանը համարժեք մեղադրանքից պաշտպանվելու դատավարական գործողություն համարվել:

Unuzhin, առերեսման ժամանակ պաշտպանական կողմին հասու չեն քրեական գործի բոլոր նյութերը: Այդ իրավունքը, որն ամրագրված է Սահմանադրության 67-րդ հոդվածի 1-ին կետով

կամ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի ա կետով, հասու է դառնում միայն նախաքննության ավարտին: Դա ՀՀ քրեադատավարական համակարգի առանձնահատկությունն է: Անգլո-սաքսոնական համակարգում, օրինակ, այդ իրավունքը վրա է հասնում քննության առաջին կամ երկրորդ շաբաթվա ընթացքում, քանի որ այդ համակարգումը քրեական դատավարությունը երկփեղկված չէ: Այդուհանդերձ, կոնվենցիոն մեխանիզմները դա հաշվի են առել ու այդ պատճառով արդար դատաքննության երաշխիքների իրականացումը, այդ թվում՝ նաև հակընդդեմ հարցման իրավունքի, տեսնում են դատակենտրոն միջավայրում: Ուստի այն պահին, երբ մեղադրյալն առերեսվում է, նա կամ նրա պաշտպանը տեղյակ չեն քրեական գործի ողջ ծավալի մասին և, բնականաբար, տեղյակ չեն, թե տվյալ վկան ինչ ցուցմունք է տվել նախկինում: Դա զրկում է պաշտպանին «տնային աշխատանք» կատարելու, այսինքն, հարցերը նախօրոք պատրաստելու հնարավորությունից: Այդ ամենը ստեղծում է անհավասար իրավիճակ, այսինքն, խախտվում է մրցակցային դատավարության սկզբունքը, որը, ի դեպ, նաև իրավունք է: Ասվածի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ առանձին դեպքերում վկաներն առերեսման ընթացքում տալիս են նախորդ ցուցմունքներից էականորեն տարբերվող ցուցմունք, որպիսի պայմաններում առաջ է գալիս նախորդ ցուցմունքները հրապարակելու վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը: Այլ խոսքով՝ վերոհիշյալ իրավիճակում մեղադրյալի իրավունքի պատշաճ իրացումը փոխկապակցվում է քննիչի բարեխղճության հետ, ինչը ևս կասկածի տակ է դնում առերեսման միջոցով մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի պատշաճ իրացման հնարավորությունը:

Երկրորդ, առերեսման ժամանակ պաշտպանի իրավունքները սահմանափակ են, իսկ դերակատարումը՝ պասիվ, ու դա սահմանված է օրենքով: Հարցերը տալիս է քննիչը, այլ ոչ թե մեղադրյալը կամ նրա պաշտպանը: Հիմնականում քննիչի կամքից է կախված, թե պաշտպանը պաշտպանական ինչ

հնարավորություններ կունենա առերեսման ժամանակ: Կողմերն իրավունք չունեն առանց քննիչի թույլտվության միմյանց հարցեր ուղղել: Քննիչը կարող է թույլ չտալ պաշտպանին ինքնուրույն հարցեր տալ վկային կամ հուշել իր պաշտպանյալին, թե այս կամ այն հարցին ինչպես պատասխանի, կամ հուշել իր պաշտպանյալին, որ նա կարող օգտվել լռելու իրավունքից: Այս հանգամանքը նույնպես պաշտպանական կողմին զրկում է պաշտպանվելու համարժեք ու պատշաճ հնարավորությունից:

Երրորդ, առերեսումը, որը կատարվում է ապացույց ստանալու նպատակով, իսկ հակընդդեմ հարցման համատեքստում՝ ապացույց հետազոտելու նպատակով, չի իրականացվում հրապարակային դատավարության պայմաններում: Հիմնականում իրականացվում է քննչական մարմնի վարչական շենքում, քննիչի աշխատասենյակում: Դա պաշտպանական կողմի զրկում է էական պաշտպանական միջոցից: Հրապարակային դատական քննությունն ինքնուրույն հիմնարար իրավունք է: Դրա նպատակն է ապահովել հանրային վերահսկողությունն արդարադատության նկատմամբ: Դա կամայականության ու խախտումների դեմ լուրջ հակակշիռ է: Հրապարակային դատաքննության մեղադրյալի իրավունքը ոչ միայն լրացուցիչ երաշխիք է ճշմարտությունը բացահայտելու, այլև՝ անհրաժեշտ միջոց է ապահովելու, որ մեղադրյալը բավարարված լինի, որ իր գործը քննել է դատարանը, որի անկախությունը և անաչառությունը երաշխավորված են: Դատական ատյաններում ընթացակարգերի հրապարակային բնույթը պաշտպանում է դատավարության կողմերին՝ գաղտնի, առանց հանրային հսկողության արդարադատության իրականացումից, միաժամանակ սա միջոցներից մեկն է, որով և՛ առաջին ատյանի, և՛ վերադաս դատարանների նկատմամբ վստահությունը կարող է պաշտպանվել: Արդարադատության իրականացումը դարձնելով տեսանելի, հրապարակայնությունն օգնում է հասնելու արդար դատաքննության նպատակին, որի երաշխավորումը, Կոնվենցիայի իմաստով, հանդիսանում է ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքը (Գալս-

տյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 26986/03, պարբ. 80): Հետևաբար, ոչ հրապարակային եղանակով առերեսման իրականացումը, որն այնուհետև ներկայացվում է, թե արվել է ապացույց հետազոտելու նպատակով, պաշտպանական կողմին զրկում է պաշպանվելու արդյունավետ միջոցից:

Չորրորդ, առերեսումը մեղադրյալի իրավունքը չէ, այլ քննիչի պարտականությունը: Քննիչը պարտավոր է իրականացնել առերեսում վկայի և մեղադրյալի ցուցմունքների միջև էական հակասության առկայության դեպքում: Հետևաբար, առերեսման անցկացումը կախված չէ մեղադրյալի կամքից, այլ քննիչի հայեցողությունն է: Եթե որևէ դատավարական գործողության անցկացումը հայեցողական է, դա չի կարող համարվել իրավունք, քանի որ իրավունքն անձին աներկբայորեն, անվերապահորեն տրված հնարավորություն է, որը կարող է սահմանափակվել, բայց՝ ոչ օտարվել: Այդ հանգամանքը նույնպես պետք է հաշվի առնել՝ որոշելու համար, թե արդյոք առերեսումն օբյեկտիվորեն տրամադրում է մեղադրանքից պաշտպանվելու համարժեք ու պատշաճ հնարավորություն: Ի դեպ, հենց այդ հակասությունն է պատճառը, որ ներկայումս ձևավորվել է պրակտիկա, ըստ որի՝ անձի հրաժարումը առերեսումից չի բացառում առերեսումը որպես իրականացված քննչական գործողություն ներկայացնելը ու դրա արդյունքը՝ մեղադրյալի՝ լռության իրավունքից օգտվելու պարագայում, որպես ապացույց ներկայացնելը: Դատավարական այդ գործողության օրինականությունն ամրագրված է Վճռաբեկ դատարանի որոշումով (տես Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԴ/0189/01/12 որոշումը Սարիբեկ Հարությունյանի գործով, կետ 27): Մինչդեռ պետք է հիշել, որ Վճռաբեկ դատարանն այս որոշումը կայացրել է այն մտայնությամբ, որ առերեսումն առաջին հերթին քննչական գործողություն է, այլ ոչ թե ապացույց հետազոտելու եղանակ: Որպեսզի դա համարվի Սահմանադրության 67-րդ հոդվածի պահանջին համապատասխանող ապացույց հետազոտելու եղանակ, պետք է ապահովի մեղադ-

րանքից պաշտպանվելու համարժեք ու պատշաճ հնարավորություն, որը, վերը նշված պատճառներով, իրատեսական չէ:

Հինգերորդ, առերեսումն իրականացվում է քննիչի ներկայությամբ, մինչդեռ արդար դատաքննության պահանջներից մեկն այն է, որ մեղադրյալին տրվի այն **դատավորի ներկայությամբ** վկաներին առերես հարցաքննելու հնարավորություն, որը վերջնական որոշում է կայացնելու գործի վերաբերյալ, քանի որ դատավորի դիտարկումները տվյալ վկայի վարքագծի վերաբերյալ և այն մասին, թե որքանով կարելի է վստահել նրան, կարող են հետևանքներ ունենալ մեղադրյալի համար (*Ասատրյանն ընդդեմ Հայաստանի*, պարբ. 61): Այսպիսով, կարևոր երաշխիք է, որ դատավորն անձամբ տեսնի վկային:

Վերը նշված բոլոր հանգամանքները կասկածի տակ են դնում, որ առերեսումը կարող է համարվել մեղադրանքից պաշտպանվելու հակընդդեմ հարցմանը համարժեք միջոց:

Մենք հիմնականում կանգ առանք առերեսման վրա՝ որպես հակակշռող դատավարական գործողություն: Սակայն բազմաթիվ այլ դատավարական գործողություններ նույնպես կարող են լուրջ հակակշռող դեր ունենալ: Բոլորի վրա կանգ չենք կարող առնել, քանի որ նման հնարավորություն չունենք: Բացի այդ, մեր խնդիրն է ցույց տալ, թե սկզբունքորեն ինչ է նշանակում հակընդդեմ հարցման իրավունքին հակակշռող դատավարական գործողություն հասկացությունն ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի:

Այսպիսով, այս դատավոր մենք ավարտեցինք հակընդդեմ հարցման իրավունքի ամենատարածված սահմանափակման՝ բացակա վկայի նախաքննական ցուցմունքի օգտագործման վերաբերյալ դատընթացը: Հաջորդ երկու բաժիններում կուսումնասիրենք խոցելի վկաների և անանուն վկաների հակընդդեմ հարցման առանձնահատկությունները:



Ուղեցույց

Դասը վարեք Սահիկ 8-ով: Ներկայացված են մեջբերումներ Գալստյանի, Ասատրյանի գործերով ՄԻԵԴ վճիռներից, ինչպես նաև Սարիբեկ Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի որոշումից: Ուշադրություն դարձրեք, որ Սարիբեկ Հարությունյանի գործով որոշումը վերաբերում է առերեսում-հակընդդեմ հարցում գործողությունների հարաբերակցությանը: Այդ հարցն ունկնդիրներին առաջադրվել էր առաջին դասին: Այժմ դուք հնարավորություն ունեք կրկին ստուգել ունկնդիրների դիրքորոշումն այդ հարցի վերաբերյալ՝ գնահատելով, թե արդյոք նրանք առաջադիմել են իրենց մոտեցումներում այդ հիմնարար հարցի վերաբերյալ: Այդ նպատակով կարող եք Սարիբեկ Հարությունյանի որոշումից կազմել համառոտագիր կամ ազդագիր և լիանիստ քննարկման ժամանակ առաջարկել զուգահեռներ անցկացնել: Գործնական պարապմունքի համար նախատեսված է ընդարձակ Իրավիճակային խնդիր 8-ը: Այդ խնդրի փաստերն առկա են նաև «Օպերատիվ-հետախուզական գործունեություն» անվանումով տեսաֆիլմում, որի DVD տարբերակը առկա է նաև Արդարադատության ակադեմիայի գրադարանում:



Գրականություն

- | | |
|--------------------------|---|
| 1. Սահիկ 8 | Հակակշռող գործոններ. դատավարական միջոցներ |
| 2. ՄԻԵԴ վճիռ | Գալստյանն ընդդեմ Հայաստանի |
| 3. Վճռ. դատարանի որոշում | Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԲԴ/0189/01/12 որոշումը Սարիբեկ Հարությունյանի գործով |
| 4 Վարժություն | Իրավիճակային խնդիր 8 |



ԴԱՍ 9

Խոցելի վկաների հարցաքննությունը

**Դաս 9 Գենդերային խտրականության,
սեռական բռնության զոհեր ու
անչափահասներ**

1 ժամ

Վարժություն

1 ժամ



Դասի նպատակն է խոցելի վկաներին հակընդդեմ հարցման նյութաիրավական և դատավարական առանձնահատկություններին ծանոթացնելը:



Ակնկալվող արդյունքները .

- ունկնդիրները կսովորեն, թե ինչ սահմանափակումների են ենթարկվում դատավարական ընթացակարգերը խոցելի վկաներին հարցաքննելիս,
- ինչպես խուսափել անհարկի սահմանափակումներից, որին կարելի է հասնել խոցելի վկաների իրավունքները հարգելով,
- կփրապեպեն անհրաժեշտ նախադեպային իրավունքին, և ձեռք կբերեն հմտություններ դրանք կիրառելու համար:



Խոցելի վկաների հարցաքննությունը կարող է ենթարկվել ընթացակարգային ու բովանդակային սահմանափակումների, երբ ծագում է անհրաժեշտություն նրանց իրավունքները դատարանի դահլիճում պաշտպանելու համար, մասնավորապես՝ վատ վերաբերմունքի արգելքի, հոգեկան անձեռնմխելիության, անձնական կյանքի հարգման ու խտրականությունից զերծ մնալու իրավունքները:

Սեռական բռնության զոհի հարցաքննությունը դատարանում կարող է նրան պատճառել նվաստացուցիչ վերաբերմունքի, անչափահասի հարցաքննությունը՝ անձնական կյանքի հարգման իրավունքի, գենդերային խտրականության զոհի հարցաքննությունը՝ խտրականությունից զերծ մնալու իրավունքի և ընտանեկան բռնության զոհի հարցաքննությունը՝ հոգեկան անձեռնմխելիության իրավունքի



խախտմանը: Ընդ որում, նշված խախտումները կարող են լինել փոխհատվելի: Օրինակ, որոշակի էթնիկ խմբի պատկանող բռնաբարության անչափահաս զոհը որպես վկա հարցաքննվելիս միաժամանակ կարող է ենթարկվել, ելնելով հարցերի բնույթից ու եղանակից, գենդերային ու ռասայական խտրականության, նվաստացուցիչ վերաբերմունքի և հոգեկան անձեռնմխելիության իրավունքների խախտմանը: Նման խախտումները կարող են հիմք հանդիսանալ դատավորի համար ընթացակարգերը փոփոխելու համար, օրինակ՝ անցնել դռնփակ դատական քննության, սահմանափակել վկայի հարցաքննության համար նախատեսված ժամանակահատվածը, սահմանափակել հարցերի շրջանակը, հարցաքննությունը իրականացնել միջնորդավորված եղանակով, կիրառել պաշտպանության միջոցներ և այլն: Այդ դեպքում պաշտպանական կողմը զրկվում է կարևոր պաշտպանական համակարգերից, օրինակ՝ հրապարակային դատական քննու-

թյան հնարավորությունից, վկային դատարանում դեմ առ դեմ հարցաքննելու հնարավորությունից, հարցաքննության համար հարցերի լայն շրջանակ առաջադրելու հնարավորությունից և այլն: Նման սահմանափակումները կարող են իրավաչափ հիմքեր ունենալ, քանի որ դատավորը պարտավոր է փոխհավասարակշռել դատավարության մասնակիցների շահերը և արդարադատության շահը:

Պատկերացրեք մի իրավիճակ, երբ մեղադրյալի պաշտպանը բռնաբարության զոհին հարցեր է ուղղում նրա սեռական կյանքի, կուսության մասին, տալիս է հարցեր նրա հագուստի, հագ ու կապի մասին՝ ակնարկելով անբարոյական կեցվածքով հանցագործությունը սադրելու մասին: Նման հարցադրումները խտրական են, կարծրատիպային, որոնք վիրավորում են տուժողի արժանապատվությունը, և դատավորը կամ դատախազը պետք է միջամտեն տուժողի իրավունքները դատարանի դահլիճում ապահովելու համար: Նման միջամտությամբ թեև սահմանափակվում են մեղադրյալի հակընդդեմ հարցման հնարավորությունները, սակայն դատավորը պարտավոր է ապահովել գենդերազգայուն ընթացակարգեր, եթե վկան խոցելի իրավիճակում գտնվող կին է:

Գենդերազգայուն ռազմավարություններն այլևս իրականություն են տարբեր ոլորտներում, այդ թվում՝ նաև քրեական արդարադատությունում: Դա պայմանավորված է է խտրականության, մասնավորապես, գենդերային խտրականության համընդհանուր արգելքով: Հաշվի առնելով, որ իրավական պաշտպանության միջոցների մատչելիությունը կանանց համար առավել մեծ բարդությունների հետ է կապված, քան տղամարդկանց համար, որը պայմանավորված է մշակութային, հասարակական, տնտեսական բնույթի տարբեր գործոններով, այդ թվում՝ նաև հասարակական, ընտանեկան կարծրատիպերով, կանայք, ու հատկապես սեռական բռնության, թրաֆիքինգի,



ընտանեկան բռնության զոհերը կամ նման գործերով վկանե-
րը գտնվում են առավել խոցելի վիճակում: Դա նշանակում է,
որ որոշ դեպքերում ընթացակարգերը պետք է հարմարեցվեն
նրանց խոցելիությանը, որն էլ կոչվում է գենդերազգայուն
արդարադատություն: Ինչ վերաբերում է հակընդդեմ հարցմա-
նը, ապա դատավարական այս գործողությունը նույնպես, ան-
հրաժեշտության դեպքում, պետք է կազմակերպել այնպես, որ
վկան չենթարկվի հտրականության:

Տուժողի երկրորդային զոհականացումը ևս մեկ հիմնավոր
պատճառ է, որ կարող է բացասաբար ազդել հակընդդեմ հարց-
ման ընթացքի վրա: Այնպիսի հանգամանքներ, երբ սեռական
բռնության անչափահաս զոհի հարցաքննությունը մեղադրյա-
լի պաշտպանների ու անձամբ մեղադրյալի կողմից ձգձգվում է
չորս դատական նիստերով և ընդհանուր առմամբ տևում է յոթ
ամիս, որի ընթացքում մեղադրյալին տալիս են անձնական
բնույթի մանիպուլյացիոն հարցեր, որոնց արդյունքում վկան
ստիպված է պաշտպանվել, հիմք են Եվրոպական կոնվենցի-
այի 3-րդ նվաստացուցիչ վերաբերմունք) և 8-րդ (անձնական
կյանքի հարգման իրավունք) հոդվածների խախտում արձա-
նագրելու համար՝ այն հիմքով, որ դատարանին չի հաջողվել
հավասարակշռել տուժողի անձնական կյանքի հարգման
իրավունքը մեղադրյալի մեղադրանքից պաշտպանվելու
իրավունքի հետ (Y-ն ընդդեմ Սլովենիայի, թիվ 41107
/10, 28/05/2015):



Իրավաբան-գիտնական Արթուր
Ղամբարյանի կողմից առաջարկվել
է դեպոնացնել անչափահաս վկայի
ցուցմունքը՝ որպես անչափահաս
տուժողի շահերի և մեղադրյալի
հակընդդեմ հարցման իրավունքի
հավասարակշռման իրավաչափ
միջոց: Հաշվի առնելով, որ դեպո-
նացումն իրականացվում է դատարանի կողմից և հարցման
արդյունքում վկան ստիպված է պաշտպանվել, հիմք են Եվրոպական
կոնվենցիայի 3-րդ նվաստացուցիչ վերաբերմունք) և 8-րդ (անձնական
կյանքի հարգման իրավունք) հոդվածների խախտում արձանագրելու համար՝
այն հիմքով, որ դատարանին չի հաջողվել հավասարակշռել տուժողի անձնական
կյանքի հարգման իրավունքը մեղադրյալի մեղադրանքից պաշտպանվելու
իրավունքի հետ:

դատավարության կարգի պահպանմամբ, դեպոնացման առաջարկվող ընթացակարգը տեղավորվում է հակընդդեմ հարցման ընդհանուր սկզբունքի մեջ, որի մասին նշվեց Դաս 1-ում: Սակայն նույնիսկ դեպոնացման ընթացակարգը կարող է իր հերթին ենթարկվել սահմանափակումների՝ ելնելով երեխայի լավագույն շահից: Վերևում վկայակոչված ուսումնասիրության մեջ հղում է կատարվում Եվրոպական դատարանի վճռին, որում դատարանն իրավաչափ է համարել դեպոնացման գործընթացին մեղադրյալի մասնակցությունը տեսակապով՝ պաշտպանելու համար երեխային կրկին անգամ զոհականացման ենթարկվելուց: Մասնավորապես, դեպոնացումը իրականացվել է հետևյալ կերպ (տես էջ 22-ում)։

Նախաքննության ընթացքում երեխաների հարցաքննությունն իրականացրել է քննիչ-դատավորը՝ հոգեբանի մասնակցությամբ: Մեղադրյալները, նրանց պաշտպանները և դատախազը գտնվել են կիսաթափանցիկ ապակիով առանձնացված հարակից սենյակում և կարող էին լսել ու տեսնել հարցաքննությունը: Պաշտպանները կարող էին դատավորի միջոցով հարցեր տալ երեխաներին: Հարցաքննությունը տեսագրվել է, որը հետագոտվել է գործն ըստ էության լուծող դատավորի կողմից:



Նշենք, որ դեպոնացումը նախատեսված է քրեական դատավարության օրենսգրքի նոր նախագծով, որի 306-րդ հոդվածը սահմանում է, որ **դատաքննությանը ներկայանալու հնարավորություն չունենալու կամ դատաքննության ընթացքում իրավաչափորեն ցուցմունք չտալու հիմնավոր ենթադրության պարագայում՝ պատշաճ ապացուցումն ապահովելու նպատակով՝ քննիչի կամ վարույթի մասնավոր մասնակցի միջնորդությամբ կարող է կատարվել դեպոնացում:**

Տ.Կ.-ը ընդդեմ *Լիպովայի* գործում քննության առարկա էր զատագրվման՝ իր երկու երեխաների նկատմամբ սեռական ոտնձգության համար: Նրա դեմ առանցքային վկաներ էին երկու երեխաները և նախկին կինը: Դատաքննության փուլում հնարավոր չի եղել հայտնաբերել կնոջը, ու դատարանը մեղադրական դատավճռում հիմնվել է նրա նախաքննական ցուցմունքի վրա: Դատաքննության փուլում մեղադրյալը միջնորդել է դատարան հրավիրել իր երկու որդիներին: Ազգային դատարանը մերժել էր նրա միջնորդությունները երեխաներին դատարան հրավիրելու մասին: Եվրոպական դատարանը գտավ, որ թեև երեխաների նախաքննական ցուցմունքները վճռորոշ ապացույցներ էին ամբաստանյալի դեմ, միջնորդության մերժումը համաչափ էր, քանի որ դա բխում էր երեխաների լավագույն շահից՝ նրանց համար հարցաքննությունը դատարանում կհանգեցներ երկրորդային զոհականացման, հատկապես հաշվի առնելով, որ նախկինում ամբաստանյալը նրանց նկատմամբ կիրառել է բռնություն: Ինչ վերաբերում էր երեխաների մորը, Եվրոպական դատարանը որոշեց, որ նրան հայտնաբերելու ու դատարան հրավիրելու համար դատարանը բավարար ջանքեր չէր կիրառել ու հաշվի առնելով նրա ցուցմունքների կարևորությունը ու հատկապես այն հանգամանքը, որ գործում կային փաստեր, որ նա ազդեցություն էր գործադրել երեխաների վրա իր նախկին ամուսնու դեմ ցուցմունք տալու համար, նրա ներկայությունը դատարանում ձեռք էր բերել մեծ կարևորություն: Ելնելով նախաքննական ցուցմունքի օգտագործման առաջին պայմանի պահանջից, մասնավորապես, որ վկայի չներկայանալը հիմնավոր չէր, Եվրոպական դատարանը գտավ, որ խախտվել էր ամբաստանյալի հակընդդեմ հարցման իրավունքը:

Անչափահաս տուժողի իրավունքների և մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի վերաբերյալ կարող եք կարդալ նաև ՀՀ քննչական կոմիտեի՝ «Անչափահասների մասնակցությամբ քրեական վարույթը» ձեռնարկի 42-րդ էջում:

Այսպիսով, հակընդդեմ հարցման իրավունքի իրականացման շրջանակները փոփոխվում են, երբ վկան պատկանում է խոցելի որևէ խմբի: Այդ դեպքում դատավարության մասնակիցների իրավունքները ու շահերը հավասարակշռելիս առաջ է գալիս նոր գործոն՝ վկայի զոհականացումը, որի դեպքում հավասարակշռության առանցքը փոխվում է:



Ուղեցույց

Դասը վարեք Սահիկ 9-ով: Ներկայացված են մեջբերումներ սեռական բռնության զոհերի վերաբերյալ ՄԻԵԴ վճիռներից, որոնց փաստերը կարող եք օգտագործել դասի ընթացքում: Առաջարկում ենք նաև ուսումնասիրել ցուցմունքի դեպոնացման վերաբերյալ Արթուր Ղամբարյանի հոդվածը, որի մասին հիպերլինքով հղում կա տեքստում: Տեքստում կա հղում նաև Քննչական կոմիտեի՝ Անչափահասների մասնակցությամբ քրեական վարույթը ձեռնարկի վրա, որում կա առանձին բաժին հակընդդեմ հարցման վերաբերյալ: Դրանում նշված են իրավիճակային խնդիրներ, որոնք նույնպես կարող եք օգտագործել դասի ժամանակ: Գրադարանում ներառել ենք նաև Իրավիճակային խնդիր 9-ը գործնական պարապմունքի համար:



Գրականություն

1. Սահիկ 9 Գենդերային խտրականության, սեռական բռնության զոհեր ու անչափահաս տուժողներ
2. ՄԻԵԴ վճիռ Կ-ն ընդդեմ Սլովենիայի
3. ՄԻԵԴ վճիռ T.K.-ն ընդդեմ Լիտվայի
4. Հոդված Ցուցմունքի դատական դեպոնացումը որպես անչափահաս տուժող շահերի և մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի հավասարակշռման միջոց

5. Ձեռնարկ Անչափահասների մասնակցությամբ քրեական վարույթը
6. Վարժություն Իրավիճակային խնդիր 9
-



ԴԱՍ 10

Խոցելի վկաների հարցաքննությունը
Դաս 10 Անանուն վկաներ, պաշտպանության
միջոցների կիրառում
Վարժություն

1 ժամ

1 ժամ



Դասի նպատակն է անանուն վկաների, պաշտպանության տակ գտնվող վկաներին հակընդդեմ հարցման ենթարկելու նյութաիրավական և դատավարական առանձնահատկություններին ծանոթացնելը:



Ակնկալվող արդյունքները.

- ունկնդիրները կսովորեն, թե ինչ սահմանափակումների են ենթարկվում դատավարական ընթացակարգերը պաշտպանության փակ գտնվող վկաներին հարցաքննելիս,
- ինչպես խուսափել անհարկի սահմանափակումներից, որին կարելի է հասնել պաշտպանության փակ գտնվող վկաների իրավունքները հարգելով,
- կփրապեպեն անհրաժեշտ նախադեպային իրավունքին, և ձեռք կբերեն հմտություններ դրանք կիրառելու համար:



Հակընդդեմ հարցման իրավունքի իրացման համար խնդրահարույց է նաև պաշտպանության տակ գտնվող վկանների հարցաքննությունը: Քրեական դատավարության օրենսգիրքը մի ամբողջ գլուխ է նվիրել վկանների պաշտպանությանը (Գլուխ 12), որում սահմանված են պաշտպանության բազմաթիվ միջոցներ: Դրանցից յուրաքանչյուրն, ըստ էության, միջամտություն է հակընդդեմ հարցման իրավունքին: Օրինակ, այն դեպքում, երբ սեռական բռնության զոհը (կին կամ երեխա) ենթարկվել է հոգեբանական կամ ֆիզիկական բռնության և վախենում է բռնարարի հետ դատարանում հանդիպելուց, որպես ապացույց կարող է ներկայացվել նախապես տեսագրված ցուցմունքը: Նույնիսկ եթե հանգամանքների բերումով հակընդդեմ հարցման անհրաժեշտությունը մեծանա, դատախազը կարող է միջնորդել և դատարանը կարող է կարգադրել, որ ցուցմունքը տրվի մյուս սենյակից՝ տեսակապի կամ տեսահսկման փակ համակարգի միջոցով՝ որպես պաշտպանության միջոցների կիրառում: Նման միջոցները պաշտպանության կողմին զրկում են արդյունավետ հարցադրումների հնարավորությունից: Թվենք այն խնդիրները, որոնք առաջանում են անանուն վկանների հարցաքննության հետ կապված:

Առաջին, պաշտպանության միջոցները զրկում են հարցեր ուղղելիս օգտվել վկայի ներկայությունից՝ նրան տեսնելու, նրա վարքագծին հետևելու և ըստ դրա՝ մարտավորություն մշակելու: Այդ ամենը շատ կարևոր է, քանի որ մրցակցային դատավարության պայմաններում հակընդդեմ հարցման նպատակը նաև վկայի ցուցմունքներին հակադրվելն է, այդ ցուցմունքների արժանահավատությունը հրապարակայնորեն կասկածի տակ դնելը, վկայի անձը հանրության ու դատավարության մասնակիցների աչքերում «հեղինակազրկելը», իսկ նրա բերած փաստարկները՝ հիմնազուրկ դարձնելը: Այդ նպատակով պաշտպանները կիրառում են հռետորական խոսքի հմտություններ: Պաշտպանը պետք է հնարավորություն ունենա դիտարկել

վկայի վարքագիծը ուղիղ հարցադրման տակ ու այդպիսով ստուգել ցուցմունքի արժանահավատությունը (*P.S.-ն ընդդեմ Գերմանիայի*, թիվ 33900, 20/12/2001, պարբ. 26): Մինչդեռ վկայի բացակայությունը կամ վկային հեռախոսով, տեսակապով կամ այլ միջնորդավորված եղանակով հարցաքննելը զրկում է պաշտպանության կողմին նշված առավելություններից: Հակընդդեմ հարցման հիմնական սկզբունքը, որ մեղադրյալը պետք է քրեական դատավարության ժամանակ ունենա իր դեմ ուղղված վկայությունը վիճարկելու արդյունավետ հնարավորություն, գործում է նաև անանուն վկաների դեպքում: Այս սկզբունքը ոչ միայն պահանջում է, որ պաշտպանյալը պարզապես իմանա իրեն մեղադրողների ինքնությունը, որ կարողանա վիճարկել նրանց անաչառությունը և արժանահավատությունը, այլև պահանջում է, որ պաշտպանյալը կարողանա ստուգել վկայության ճշմարտացիությունը և վստահելիությունը, իր ներկայությամբ բանավոր քննելով վկային՝ վկայություն տալու ժամանակ կամ էլ դատավարության հետագա այլ փուլերում (*Ալ-Խավայան ու Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության (ՄՊ)*) թիվ 26766/05, 22228/06, 15/12/2011, § 127):

Երկրորդ, դատավորը նույնպես զրկվում է վկային տեսնելու հնարավորությունից, թեև դատավորն ունի կապի միջոցներով վկայի անձը ստուգելու հնարավորություն: Այդուհանդերձ, ինչպես արդեն նշվեց վերևում, արդար դատաքննության պահանջներից մեկն այն է, որ մեղադրյալին տրվի **դատավորի ներկայությամբ** վկաներին առերես հարցաքննելու հնարավորություն, քանի որ դատավորն է այն անձը, ով վերջնական որոշում է կայացնելու գործի վերաբերյալ, հետևաբար, դատավորի դիտարկումները տվյալ վկայի վարքագծի վերաբերյալ և այն մասին, թե որչափ կարելի է վստահել նրան, կարող են հետևանքներ ունենալ մեղադրյալի համար (*Ասպրոյանն ընդդեմ Հայաստանի*, պարբ. 61):

Երրորդ, որոշ հանցագործությունների դեպքում նույնիսկ անանունությունը չի կարող ապահովել վկայի անվտանգությունը,

քանի որ ցուցմունքի բովանդակությունը արդեն իսկ կարող է բացահայտել վկայի ինքնությունը: Այդ դեպքում դատարանը ստիպված պետք է լինի գաղտնի պահել նույնիսկ ցուցմունքի բովանդակությունը: Այդ դեպքում նման ցուցմունքը որպես ապացույց չի կարող օգտագործվել, քանի որ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ չբացահայտված բովանդակությամբ ապացույցի հիման վրա անձին դատապարտելու արգելքը բացարձակ բնույթ է կրում՝ անկախ ապացույցների ընդհանուր զանգվածում այդ ապացույցի դերից: Այդ արգելքը խախտելն ինքնին քրեադատավարական օրենքի էական խախտում է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով (**Համայակ Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի LԴ/0212/01/10 որոշում, պարբ. 21**): Նման իրավիճակներից խուսափելու համար վարույթ իրականացնող մարմինները որպես ապացույց օգտագործում են միայն ցուցմունքի այն մասը, որը չի կարող բացահայտել վկայի ինքնությունը: Սակայն այդ հանգամանքը պաշտպանական կողմի համար կարող է ստեղծել լրացուցիչ անհարմարություններ ու այդպիսով զրկել հակընդդեմ հարցումն իր արդյունավետությունից:

Չորրորդ, անանուն վկաների ցուցմունքների օգտագործումը հատկապես խնդրահարույց է, երբ վկաներն օպերատիվի հետախուզական մարմնի աշխատակիցներ են և իրականացրել կամ մասնակցել են օպերատիվ-հետախուզական միջոցառմանը, որի միջոցով ստացվել է ապացույցը: Նման դեպքերում խնդիրներ են առաջանում պաշտպանական կողմի և օպերատիվ հետախուզական մարմնի աշխատակցի շահերը փոխհավասարակշռելու հարցում: Չնայած վերջիններս նույնպես ունեն անձնական ու ընտանեկան կյանքի պաշտպանության իրավունք, նրանց վիճակը, այդուհանդերձ, տարբերվում է սովորական անշահախնդիր վկաների կամ տուժողների վիճակից: Որպես պետական մարմնի աշխատակիցներ, պաշտոնատար անձինք, նրանք ենթակայության որոշակի պարտավորություն

ունեն երկրի գործադիր իշխանության հանդեպ և, որպես կանոն, ունեն կապեր իրավապահ մարմինների, մասնավորապես, դատախազության հետ: Հենց միայն այս պատճառով նման վկաների ցուցմունքները որպես ապացույց օգտագործելը պետք է թույլատրվի միայն բացառիկ դեպքերում (*Վան Մեքելենն ու այլոք ընդդեմ Նիդեռլանդների*, թիվ 21363/93, 23/04/1997, պարբ. 56):

Վերը նշված պատճառներով անանուն վկաների ցուցմունքների օգտագործումը հակընդդեմ հարցման իրավունքի տեսանկյունից ոչ պակաս վտանգներ է պարունակում, քան բացակա վկաների ցուցմունքները: Այդուհանդերձ, պետք է նաև հիշել, որ անանուն վկաների առնչությամբ կիրառվում է հակընդդեմ հարցման իրավունքի պաշտպանական նույն համակարգը, ինչ բացակա վկայի դեպքում: Այդ համակարգը հակընդդեմ հարցման իրավունքի ընդհանուր սկզբունքն է, որի մասին խոսվեց առաջին դասում: Ամփոփենք այդ սկզբունքը:

Ա Մ Փ Ո Փ ՈՒ Մ



Որպես կանոն, վկայի ցուցմունքը պետք է հետազոտվի **հրապարակային դատավարության** պայմաններում և **մրցակցային դատավարության** կարգով: Որպես բացառություն, վկայի նախաքննական ցուցմունքը կարող է օգտագործվել մեղադրական դատավճռում՝ պայմանով, որ ցուցմունքը ստանալու պահին պաշպանական կողմն ունեցել է վկայի ցուցմունքը վիճարկելու **պատշաճ ու համարժեք** հնարավորություն:

Եթե վկան բացակայում է դատական փուլում, նման վկայի նախաքննական ցուցմունքը կարող է օգտագործվել մեղադրական դատավճռում այն դեպքում, եթե, առաջին, վկայի բացակայությունը ունի **հարգելի** պատճառ: Սակայն դա կարող է վճռորոշ նշանակություն չունենալ: Կարևոր են նաև

երկրորդ ու երրորդ պայմանները, որոնք են՝ թե արդյոք վկայի ցուցմունքը **միակ կամ վճռորոշ** ապացույց է ապացույցների ընդհանուր զանգվածում, եթե այո՝ արդյոք առկա են **հակակշռող գործոններ** հակընդդեմ հարցման իրավունքի հնարավորության բացակայությանը:

Հակակշռող գործոններն են, առաջին, դատական ակտի վերաբերմունքը մեղադրանքի հիմքում ընկած այլ ապացույցներին, այլ կերպ ասած՝ դատական ակտի **պատճառաբանվածությունը** և թե ինչպես է դատարանը կատարել **ապացույցների գնահատում**, երկրորդ, այլ ապացույցների **ապացուցողական ուժը**, որը կարող է ցրել հակընդդեմ հարցման եղանակով չստուգված ապացույցի արժանահավատության վերաբերյալ չփարատված կասկածները, երրորդ, **դատավարական ընթացակարգերը**, որոնք կարող են հակակշռել նախաքննական ցուցմունքի ստացման պահին ապացույցի վերաբերյալ կասկածները:

 **Ուղեցույց**

Դասը վարեք Սահիկ 10-ով: Նախադեպային որոշումների հիման վրա ներկայացված է, թե վկայի պաշտպանության միջոցների կիրառումն ինչ սահմանափակող ազդեցություն է ունենում պաշտպանության իրավունքների վրա: Կարող եք կատարել մեջբերումներ այդ դատական ակտերից: Ունկնդիրներին առաջարկեք ներկայացնել օրինակներ իրենց սեփական փորձառությունից, որից հետո կազմակերպեք փոխակտիվ քննարկում: Հատկապես մանրամասնորեն կանգ առեք օպերատիվ հետախուզական միջոցառումների մասնակից վկաների թեմայի վրա: Այդ իմաստով Վան Մեքելենի գործով

նախադեպը շատ կարևոր է: Գրադարանում ներառված է մեկ իրավիճակային խնդիր այդ թեմայի վերաբերյալ: Զուգահեռ կարող եք ներկայացնել նաև օպերատիվ հետախուզական գործունեության մասին ֆիլմից հատվածներ, որի DVD տարբերակը կա Արդարադատության ակադեմիայի գրադարանում: Եվ, վերջապես, դասընթացն ավարտվում է հակընդդեմ հարցման իրավունքի հիմնական սկզբունքի ամփոփումով: Կարող եք այդ տեքստից պատրաստել ազդարար ու բաժանանել ունկնդիրներին:



Գրականություն

1. Սահիկ 10 Գենդերային խտրականության, սեռական բռնության զոհեր ու անչափահաս տուժողներ
2. ՄԻԵԴ վճիռ P.S.-ն ընդդեմ Գերմանիայի
3. ՄԻԵԴ վճիռ Ալ-Խավայան ու Թաեերին ընդդեմ Մ.Թ.-ի
- 4 ՄԻԵԴ վճիռ Ասատրյանն ընդդեմ Հայաստանի
- 5 Վճռ.դատարանի որոշում Համայակ Սահակյանի գործով որոշում
6. ՄԻԵԴ վճիռ Վան Մեխելենն ու այլոք ընդդեմ Նիդեռլանդների
7. Վարժություն Իրավիճակային խնդիր 10

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ 1

Կարդացեք իրավիճակային խնդիրը և պատասխանեք վերջում նշված հարցերին: Խնդրի փաստերը հիմնված են իրական հանգամանքների վրա:

Վկայի բացակայության հարգելի կամ անհարգելի պատճառներ

2004 թվականի հունիսի 30-ի դատական նիստին՝ դիմումատուի հարցաքննությունից հետո, նախագահող դատավորը հայտարարել է, որ անհրաժեշտ է ծանուցել և հարցաքննել վկաներ Օ.Վ.-ին, Վ.Զ.-ին և Ս.Խ.-ին: Այնուհետև նա նշել է, որ նախորդ օրը զանգահարել է բոլոր երեք վկաներին: Օ.Վ.-ի կինը պատասխանել է, որ մոտավորապես մեկ ամիս առաջ Օ.Վ.-ն աշխատելու նպատակով մեկնել է Ռուսաստան, և նրա գտնվելու վայրը հայտնի չէ: Վ.Զ.-ի կինը պատասխանել է, որ Վ.Զ.-ն աշխատելու նպատակով գնացել է մեկ այլ մարզ, և ինքը որևէ այլ տեղեկություն չունի նրա մասին: Ս.Խ.-ի ազգականները պատասխանել են, որ Ս.Խ.-ն մեկնել է Հայաստանից՝ աշխատելու նպատակով, սակայն չեն ասել, թե որ երկիր: Վերաքննիչ դատարանը կայացրել է որոշում վկաներին բերման ենթարկելու մասին: Դատական նիստը հետաձգվել է:

Հաջորդ դատական նիստին նախագահող դատավորը հայտարարել է, որ ոստիկանության հայտնած տեղեկության համաձայն՝ վկաները բացակայում են իրենց բնակության վայրերից: Ոստիկանությունը խոստացել է գրավոր տրամադ-

րել լրացուցիչ տեղեկություններ: Կողմերը չեն առարկել դատական նիստը շարունակելուն և պահանջել են միջոցներ ձեռնարկել հաջորդ դատական նիստին վկաների մասնակցությունն ապահովելու համար:

Հաջորդ նիստին նախագահող դատավորը տեղեկացրել է կողմերին, որ ոստիկանությունից պաշտոնական գրություն է ստացվել, որտեղ նշված է, որ վկաներ Օ.Վ.-ն, Վ.Զ.-ն և Ս.Խ.-ն բացակայում են իրենց բնակության վայրերից: Գրությունն ընթերցելիս նախագահող դատավորը նկատել է, որ ոստիկանությունը սխալ հասցեով է որոնել վկա Վ.Զ.-ին: Այնուհետև դատախազը միջնորդել է հրապարակել վկաների նախաքննական ցուցմունքները: Պաշտպանը պնդել է, որ նշված վկաները նախաքննության ընթացքում դիմումատուի դեմ անարժանահավատ, մեղադրող ցուցմունքներ են տվել, և այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ոստիկանության օգնությամբ նրանց բերման ենթարկել: Դիմումատուն միացել է իր պաշտպանի պահանջին և խնդրել, որ նշված վկաները ներկայանան դատարան, ինչպես նաև ներկայացնեն իրենց անձը հաստատող փաստաթղթերը: Վերաքննիչ դատարանը որոշել է, որ քանի որ Վ.Զ.-ին բերման ենթարկելու մասին որոշման մեջ սխալ հասցե է նշված եղել, ապա անհրաժեշտ է ոստիկանությանը հայտնել ճիշտ հասցեն: Ինչ վերաբերում է վկաներ Օ.Վ.-ին և Ս.Խ.-ին, նրանցից առաջինը Ռուսաստանում է եղել, մինչդեռ երկրորդը բացակայել է քաղաքից: Այդ փաստը նաև հաստատվել է նախագահող դատավորի կողմից կատարած հեռախոսային զանգերով: Վերաքննիչ դատարանը գտել է, որ տվյալ հանգամանքներում ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության ճշմարտացիությանը կասկածելու որևէ հիմք չկա, ինչպես նաև հայտարարել է, որ որպես դատավարական երաշխիքներ այդ վկաների՝ մինչդատական վարույթում տրված ցուցմունքները կհրապարակվեն և կհետազոտվեն դատական քննության ընթացքում, այնուհետև դրանք կհետազոտվեն նաև խորհրդակցական սենյակում և դրանց արժանահավատության մասով կտրվի գնահատական, քանի որ դատարանում ուսում-

նասիրված ապացույցները բավարար են նման գնահատական տալու համար:

Հաջորդ նիստում նախագահող դատավորը հայտարարել է, որ պաշտոնական գրություն է ստացվել ոստիկանությունից, համաձայն որի՝ վկա Վ.Զ.-ի բնակության հասցեն ճիշտ է եղել, սակայն ոստիկանության այցի ժամանակ դռան զանգերին ոչ ոք չի պատասխանել: Նախագահող դատավորը, բավարար չհամարելով ոստիկանության գրությամբ ներկայացված տեղեկությունը, ինքն անձամբ զանգահարել է Վ.Զ.-ի տուն և համոզվել, որ տանը մարդ չկա, քանի որ ոչ ոք չի պատասխանել հեռախոսազանգին: Դատախազը միջնորդել է, որ վկա Վ.Զ.-ի ցուցմունքները հրապարակվեն դատարանում, իսկ դիմումատուն և նրա պաշտպանն առարկել են, որ վկա Վ.Զ.-ի ցուցմունքներն անարժանահավատ են և պահանջել են մերժել դատախազի միջնորդությունը: Այնուհետև դատարանը հրապարակել է ցուցմունքը:

Քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանն ուժի մեջ է թողել դիմումատուի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը: Այդ դատավճիռը կայացնելիս Վերաքննիչ դատարանը հղում է կատարել վկաներ Ն.Ս.-ի, Մ.Մ.-ի, Օ.Վ.-ի և Ս.Խ.-ի և ոստիկանության ծառայողներ Գ.Դ.-ի և Գ.Ա.-ի ցուցմունքներին: Ինչ վերաբերում է վկա Վ.Զ.-ի ցուցմունքին, Վերաքննիչ դատարանը գտել է, որ այն չպետք է դրվի դատավճռի հիմքում, քանի որ, չնայած դատարանի որոշմանը, վկան չի ներկայացել դատարան:

Հարց.

1. արդյոք վերաքննիչ դատարանը ձեռնարկել է բավարար գործողություններ վկաներ Օ.Վ.-ին և Ս.Խ.-ի ներկայությունը դատարանում ապահովելու ուղղությամբ:
2. Արդյոք այդ գործողությունները փոխհավասարակշռված էին մեղադրյալի՝ հակընդդեմ հարցման իրավունքի կարևորության հետ:

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ 2

Կարդացեք իրավիճակային խնդիրը ու պատասխանեք վերջում նշված հարցերին: Խնդրի փաստերը կազմվել են իրական դատական գործի հիման վրա:

Բացակա վկայի նախաքննական ցուցմունքի օգտագործում

2000 թվականի հոկտեմբերի 7-ին Ղազախստանի Կուստանայ քաղաքի սրճարաններից մեկում մի միջոցառման ժամանակ Ս.Մ.-ն դանակահարվել է երկու անձանց կողմից: Նա մահացել է հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին: Հաջորդ օրը Ղազախստանի համապատասխան մարմինները դեպքի առթիվ հարուցել են քրեական գործ՝ դիմումատուին և նրա ընկերոջը՝ Բ.Մ.-ին ներգրավելով որպես հիմնական կասկածյալներ: Հարցաքննվել են մի քանի ականատեսներ: Մասնավորապես, վկա Խ.Հ.-ն՝ սրճարանի տերը, նշել է, որ տեսել է դիմումատուին և Բ.Մ.-ին տուժողի ու նրա քրոջ որդի Գ.Թ.-ի հետ զրուցելիս: Դեպքի պահին նա գտնվել է սրճարանից դուրս և ներս է մտել, երբ լսել է աղմուկը: Այնուհետև նա ներկաներից տեղեկացել է, որ Բ.Մ.-ն և դիմումատուն դանակահարել են տուժողին ու դիմել փախուստի:

Վկա Կ.Հ.-ն՝ Խ.Հ.-ի որդին, նշել է, որ ինքը եղել է խոհանոցում, երբ լսել է աղմուկը և դուրս է եկել սրահ: Այնուհետև տեսել է դիմումատուին՝ դանակը ձեռքին փութողին մոտենալիս:

Վկա Գ.Թ.-ն նշել է, որ ինքն իր մորեղբոր՝ փութողի հետ, եղել է սրճարանում և ականատես է եղել, թե ինչպես են դիմումատուն ու Բ.Մ.-ն դանակահարել նրան:

Վկա Օ.Դ.-ն՝ խոհարարը, որը փոխառ ժամանակահատվածում աշխատել է այդ սրճարանում, նշել է, որ տեսել է, թե ինչպես են դիմումատուն և Բ.Մ.-ն վիճել փութողի հետ ու նրան դանակահարել, որից հետո դիմել են փախուստի:

Վկա Վ.Հ.-ն՝ Խ.Հ.-ի եղբայրը, որն այդ գիշեր նույնպես եղել է սրճարանում, նշել է, որ տեսել է տուժողին և Բ.Մ.-ին վիճելիս, որից հետո վերջինս դանակահարել է տուժողին, և այնուհետև դիմումատուին նույնպես դանակահարել է նրան:

Վկա Գ.Ա.-ն պնդել է, որ դեպքի օրն ինքն իր կնոջ հետ եղել է սրճարանում և ականատես է եղել, թե ինչպես են Բ.Մ.-ն ու դիմումատուին հարձակվում տուժողի վրա, նշել է նաև, որ դիմումատուի ձեռքին դանակ է տեսել:

Մի շարք այլ անձինք, մասնավորապես՝ երգիչներ Ա.Օ.-ն և Ա.Գ.-ն, հյուրեր Վ.Կ.-ն և Ե.Բ.-ն, ինչպես նաև Լ.Տ.-ն՝ միջոցառումը նկարահանելու համար պատասխանատու անձը, նույնպես հարցաքննվել են: Այդ վկաները կոնկրետ մանրամասներ չեն տրամադրել, անուններ նույնպես չեն նշել, այլ հայտնել են, որ իրենք կամ վիճաբանող անձանցից հեռու են եղել, կամ որևէ այլ պատճառով չեն տեսել, թե կոնկրետ ինչ է տեղի ունեցել: Վկա Լ.Տ.-ն ճանաչել է դիմումատուին լուսանկարում, որն իրեն ցույց են տվել նախաքննության ժամանակ: Ղազախստանի քննչական մարմինները մեղադրանք են առաջադրել ամբաստանյալին և որոշում են կայացրել նրան կալանավորելու մասին: Քանի որ նրա գտնվելու վայրը պարզ չի եղել, նրա նկատմամբ հետախուզում է հայտարարվել: Նոյեմբերի 5-ին նա ձերբակալվել է Հայաստանում: Ղազախստանի դիմումը հանձնման մասին մերժվել է: Մեկ տարի անց նա դատապարտվել է 17 տարվա ազատազրկման ՀՀ դատարանի կողմից:

Դատարանն ամբաստանյալի մեղքը հիմնավորել է.

- վկա Գ.Թ.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Գ.Թ.-ի նախաքննական ցուցմունքները)
- Վկա Օ.Դ.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Օ.Դ.-ի նախաքննական ցուցմունքները)
- Վկա Վ.Հ.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Վ.Հ.-ի նախաքննական ցուցմունքները)

- Վկա Գ.Ա.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Գ.Ա.-ի նախաքննական ցուցմունքները)
- Վկա Ա.Օ.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Ա.Օ.-ի նախաքննական ցուցմունքները)
- Վկա Ա.Գ.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Ա.Գ.-ի նախաքննական ցուցմունքները)
- Վկա Վ.Կ.-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Վ.Կ.-ի նախաքննական ցուցմունքները)
- Վկա Լ.Տ-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Լ.Տ.-ի նախաքննական ցուցմունքները)
- Վկա Ե.Բ-ի ցուցմունքներով ... (դատարանը հրապարակել է վկա Ե.Բ.-ի նախաքննական ցուցմունքները)

Ամբաստանյալի մեղավորությունը ... հիմնավորվել է նաև.

- Կուստանայի մարզային դատարանի 2006 թվականի մայիսի 29-ի դատավճռով ...
- Վերը նշված քրեական գործով դատաքննության ժամանակ փորձագետ ... տված պարզաբանումներով ... ըստ որի դիակի վրա առկա են եղել դանակի երկու թափանցող վերքեր ... յուրաքանչյուր մարմնական վնասվածք առանձին կարող էր առաջացնել մահ:
- Ֆիզիկատեխնիկական փորձաքննության եզրակացությամբ [Կուստանայի մարզային դատարանում գործի քննության ընթացքում] ...
- ... դատաբժշկական փորձաքննության 2000 թվականի հոկտեմբերի 31-ի եզրակացությամբ ... Ս.Մ.-ի մահվան պարճառ է հանդիսացել հետարյունահոսային սակավարյունությունը, որը զարգացել է լյարդի վնասվածքների հետևանքով:
- Դատաբժիշկ ... ցուցմունքով [Կուստանայի մարզային դատարանում գործի քննության ընթացքում] ... Յուրաքանչյուր դանակի հարվածի դեպքում վնասվել է լյարդը:

- Ֆիզիկատեխնիկական փորձաքննության 2005 թվականի հոկտեմբերի 21-ի եզրակացությամբ, ըստ որի ... Ս.Մ-ի պիջակի վրա հայտնաբերվել են երկու թափանցող հեփքեր ... կարող էին պատճառովել ... դանակով:
- Դեպքի վայրի զննության արձանագրություններով, տուժող Ս.Մ-ի հագուստի ... զննության արձանագրություններով, միջոցառման նկարահանման երկու տեսանկյուններով, դեպքի վայրի զննության և դատաբժշկական փորձաքննություն իրականացնելիս դիակի զննման ընթացքում նկարահանումներ կատարելու տեսանկյունով:»:

Գործի նյութերով հիմնավորվել է, որ վկաները պատշաճ կարգով ծանուցվել են դատական նիստի մասին, սակայն հայտարարություններ են ուղարկել ֆինանսական միջոցների բացակայության, ընտանեկան կամ աշխատանքային հանգամանքներով պայմանավորված՝ դատական նիստին չներկայանալու պատճառների վերաբերյալ՝ պնդելով նախաքննության ընթացքում իրենց տված ցուցմունքները և խնդրելով դատարանին հիմնվել այդ ցուցմունքների վրա:

Գործի նյութերը նաև ցույց են տալիս, որ առաջին ատյանի դատարանը որոշակի քայլեր է ձեռնարկել՝ վկաների ներկայանալն ապահովելու համար: Փոստային անդորրագրերի համաձայն՝ Ղազախստանի Հանրապետության համապատասխան մարմինների կողմից կատարված նախաքննության ժամանակ հարցաքննված տասնմեկ վկաները կանչվել են առաջին ատյանի դատարանի առնվազն երեք նիստի: Այնուամենայնիվ, միայն վկաներ Լ.Տ-ն, Օ.Դ-ն և Խ.Հ-ն են ստացել մեկ կամ ավելի դատական ծանուցագիր: Տասնմեկ վկաներից ութն առաջին ատյանի դատարան են ներկայացրել Ղազախստանում նոտարական կարգով վավերացված գրավոր հայտարարություններ, որոնցում նշել են իրենց՝ դատական քննությանը չներկայանալու մի շարք պատճառներ և խնդրել են դատարաններին որպես

ապացույց ճանաչել նախաքննության ժամանակ տված իրենց ցուցմունքները: Մասնավորապես, վկաներ Վ.Հ-ն և Ե.Բ-ն նշել են, որ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով չեն կարող ներկայանալ դատական քննությանը, վկա Օ.Դ-ն նշել է ընտանեկան հանգամանքների հետ կապված պատճառ, իսկ վկաներ Ա.Գ-ն, Գ.Թ-ն, Վ.Կ-ն, Լ.Տ-ն և Կ.Հ-ն նշել են, որ չեն կարող ներկայանալ աշխատանքային հանգամանքների հետ կապված պատճառով: Բացի աշխատանքային հանգամանքներից, վկաներ Լ.Տ-ն և Կ.Հ-ն նշել են նաև ֆինանսական միջոցների բացակայությունը: Բավարար չափով պարզ չէ, թե դատական ծանուցագրեր չստացած վկաներից մի քանիսն ինչպես են ծանուցվել դիմումատուի դատական քննության վերաբերյալ և ներկայացրել համապատասխան հայտարարությունները, սակայն գործի նյութերից երևում է, որ առնվազն ութ վկա ծանուցվել է Հայաստանում դիմումատուի վերաբերյալ գործով դատական քննության վերաբերյալ, իսկ վկա Խ.Վ-ն, ստանալով դատական ծանուցագիրը, չի ներկայացրել դատական քննությանը և չի ներկայացրել այնպիսի հայտարարություն, ինչպիսին ներկայացվել է մյուսների կողմից:

Հարց.

Արդյոք դատարանը կիրառել է բոլոր ջանքերը վկաների ներկայությունը դատարանում ապահովելու ուղղությամբ:

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ 3

Կարդացեք իրավիճակային խնդիրը ու պատասխանեք նշված հարցերին: Խնդրի փաստերը կազմվել են Եվրոպական դատարանի մի դատական գործի հիման վրա, սակայն հատուկ անունները և փաստերի որոշ հատվածներ փոխված են: Ի տարբերություն մյուս խնդիրների, այս խնդրի պատասխանը, ելնելով ուսումնառության նպատակներից, ներկայացված է վերջում:

* * *

Դատերից հետո համալսարանի բակում Արմենը նկատեց, թե ինչպես են իր երկու ընկերները վիճաբանում երկու այլ տղաների հետ: Նա մոտեցավ նրանց և փորձեց կողմերին հաշտեցնել: Քիչ անց խոսակցությունը վերածվեց հրմշտոցի ու բարձրաձայն վիրավորանքների, որից հետո նրանց մոտեցան այլ ուսանողներ: Վեճին մասնակցող տղաներից մեկը, ում անունը Վարդան էր, առաջարկեց Արմենին հեռանալ խմբից ու գրուցել առանձին: Խմբից մոտ 20 մետր հեռանալուց հետո նրանք սկսեցին զրուցել, որը քիչ անց վերածվեց բարձրաձայն վիճաբանության: Այդ պահին Արմենը բռունցքով հարվածեց Վարդանի դեմքին և նրանց միջև սկսվեց ծեծկռտուք: Դա տեսնելով տղաները, ովքեր հեռվից հետևում էին, վազեցին նրանց ուղղությամբ: Նրանց մի մասը փորձում էր բաժանել կռվողներին, իսկ մյուս մասը մասնակցում էր ընդհանուր ծեծկռտուքին: Կռվի ընթացքում Արմենին հաջողվեց Վարդանին ամբողջ ուժով հետ հրել, սակայն այդ պահին զգաց սուր ծակող ցավ մեջքի շրջանում: Նա նստեց գետնին, փորձելով հասկանալ, թե ինչ տեղի ունեցավ: Այդ պահին գետնին, ոտքերի մոտ տեսավ արյունոտ դանակ ու հասկացավ, որ իրեն դանակահարել են: Նա ձգվեց ու փորձեց դանակը վերցնել, սակայն այդ պահին ինչ-որ մեկը դանակը վերցրեց գետնից և նստեց հեռու: Այդ պահին լսեց, թե ինչպես ինչ-որ մեկն ասաց. «Կասես, հետքից մեկը խփեց»: Արմենը հարցրեց Վարդանին, թե արդյոք նա է իրեն դանակահարել, սակայն վերջինս ժխտեց: Այնուհետև Վարդանը նստեց

Արմենի կողքին, խոստերի վրա և իր թաշկինակով փորձեց արյունահոսությունը դադարեցնել: Քիչ անց ժամանեց շտապօգնության մեքենան և Արմենին տեղափոխեց հիվանդանոց: Վարդանն ուղեկցում էր Արմենին շտապօգնության մեքենայում: Մեքենայի ներսում Արմենը կրկին հարցրեց Վարդանին, թե արդյոք նա է իրեն դանակահարել, Վարդանը կրկին ժխտեց, որ ինքն է հարվածել և ասաց, որ ամենայն հավանականությամբ նրա թիկունքում կանգնած տղաներից մեկն է դա արել: Այնուհետև Արմենը հարցրեց, թե ով ասաց, թե «*կասես, մեկը հետևից խփեց*», որին Վարդանը պատասխանեց, որ չի լսել նման բան: Դրանից հետո Արմենը կորցրեց գիտակցությունը: Արմենի և Վարդանի խոսակցությունը մեքենայի ներսում լսեցին շտապօգնության բժիշկը և բուժքույրը:

Հարուցված քրեական գործի քննության շրջանակներում հարցաքննվեցին վիճաբանության մասնակից բոլոր անձինք: Նրանք բոլորն իրենց ցուցմունքներում նշեցին, որ չեն տեսել, թե ով է դանակահարել Արմենին, սակայն տեսել են, թե ինչպես է Վարդանը գետնից վերցրել դանակը և դեն նետել:

Հարցաքննվեց նաև Վարդանը, ով նշեց, որ թեև ինքն էր կռվում Արմենի հետ, սակայն չի տեսել, թե և ով և ինչպես է հարվածել դանակով, սակայն կարծում է, որ ամենայն հավանականությամբ դա արել է Արմենի թիկունքում գտնվող տղաներից մեկը: Նա նաև նշեց, որ այն պահին, երբ Արմենը թուլացավ ու նստեց խոտերին, ինքը նրա ոտքերի մոտ նկատել է արյունոտ դանակ, որը վերցրել ու դեն է նետել:

Շտապօգնության բժիշկն ու բուժքույրը որպես վկա իրենց ցուցմունքներում հայտնել են, որ մեքենայի ներսում Արմենը կասկած է հայտնել, որ Վարդանն է իրեն դանակահարել, ինչպես նաև, որ Արմենը մահանալուց առաջ Վարդանին հարցրել է, թե ով ասաց «*կասես, որ հետևից խփեցին*», որին ի պատասխան Վարդանն ասել է, որ չի լսել նման բան:

Նախաքննության ընթացքում վկաներից մեկը, Սարգիսը, ներկայացավ քննիչին ու հայտնեց, որ նախկինում ճիշտ ցուցմունք չի տվել, քանի որ վախեցել է հաշվեհարդարից կամ հան-

րային պարսավանքից, և որ պատրաստ է ասել որջ ճշմարտությունը: Քննիչը որոշեց նրան հարցաքննել որպես վկա: Նա ցուցմունք տվեց, որ վեճի պահին եղել է համալսարանի բակում, իսկ կռվի պահին կռվի թոհուբոհի մեջ նկատել է, թե ինչպես Վարդանը, Արմենի վիզը ծախ թևով սեղմած պահելով, աջ ձեռքում գտնվող դանակով երկու անգամ հարվածել է Արմենի մեջքին, որից հետո դանակը վայր է գցել: Դրանից հետո Արմենը, ով ըստ երևույթին դեռ չէր զգացել հարվածը, հրել է Վարդանին ու ազատվել նրանից, սակայն հետո թուլացել է ու նստել խոտերին, և այդ պահին Վարդանը Արմենի ոտքերի մոտ ընկած դանակը վերցել է ու դեն նետել:

Սարգսի ցուցմունքից հետո Վարդանը ձերբակալվեց և նրան առաջադրվեց մեղադրանք՝ խուլիգանական դրդումներով սպանության հիմքով (<< քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով): Դատական քննության ընթացքում Սարգսիսը հարցաքննվել է հեռախոսով՝ ձայնը փոխած՝ որպես պաշտպանության միջոց: Հեռախոսային խոսակցության ժամանակ պնդել է իր ցուցմունքը: Հարցին, թե որտեղ էր ինքը կոնկրետ կանգնած եղել, որ այդ անկյունից տեսել է, թե ինչպես է Վարդանը դանակով հարվածել Արմենին, իսկ այնուհետև դանակը խոտի վրայից վերցրել ու դեն է նետել, չի հասցրել պատասխանել, քանի որ դատավորը միջամտել է և այդ հարցը հանել՝ հայտարարելով, որ դրանով կարող է բացահայտվել վկայի ինքնությունը:

Մեղադրանքի հիմքում նախաքննության մարմինը դրեց հետևյալ ապացույցները.

Դանակը	Որպես իրեղեն ապացույց
<p>Տուժողին բուժող բժշկի կողմից տրված տեղեկանքը:</p>	<p>Ըստ որի՝ տուժողի մարմնի վրա առկա են երկու թափանցող վերքեր, որոնք առաջացել են ծակող կտրող առարկայի երկու հարվածների արդյունքում, որոնք վնասել էին կենսական օրգանները:</p>
<p>Սարգսի նախաքննական ցուցմունքն այն մասին, որ ինքը տեսել է, թե ինչպես է Վարդանը դանակահարել Արմենին:</p>	<p>Այդ ցուցմունքը փակ ծրարով կցված էր մեղադրական եզրակացությանը, իսկ մեղադրական եզրակացության մեջ Սարգսի անունը, ազգանունը, հայրանունը և ինքնությունը հաստատող բոլոր տվյալները փոխված էին, քանի որ նրա նկատմամբ կիրառվել էր վկայի պաշտպանության միջոց:</p>
<p>Դատական քննության ընթացքում Սարգսի հարցաքննությունը հեռախոսով պաշտպանության կողմից, որի ժամանակ նրա ձայնը հեռախոսով փոխած էր:</p>	<p>Հեռախոսային խոսակցությունից առաջ Սարգսի ինքնությունը ստուգել էր դատավորը Հեռախոսային խոսակցության ժամանակ Սարգսիը պնդել է իր նախաքննական ցուցմունքը, սակայն չի հասցրել պատասխանել այն հարցին, թե որտեղ էր ինքը կանգնած, քանի որ դատավորը հանել է այդ հարցը՝ վկայակոչելով Սարգսի անվտանգությունը:</p>

<p>Դանակի դատահետքաբանական փորձաքննության եզրակացությունը:</p>	<p>Համաձայն որի դանակի բռնակի վրա հայտնաբերված մատնահետքերը պատկանում էին Վարդանին</p>
<p>Վարդանի վերնաշապիկի և տաբատի վրայի արյան հետքերի դատակենսաբանական փորձաքննության եզրակացությունը</p>	<p>ըստ որի վերնաշապիկի և տաբատի վրա հայտնաբերված արյան խումբը համապատասխանում էր տուժողի արյան խմբին: Սակայն փորձաքննությունը չէր պատասխանել այն հարցին, թե ինչ եղանակով էին արյան հետքերը հայտնվել մեղադրյալի շորերի վրա</p>
<p>Շտապօգնության բժշկի ցուցմունքները</p>	<p>այն մասին, որ մահանալուց առաջ Արմենը կարծիք էր հայտնել, որ իրեն դանակահարել էր Վարդանը, ինչպես նաև, որ տուժողը լսել էր, թե ինչպես էր ինչ-որ մեկն ասել, որ «կասես, հետևից խփեցին»</p>
<p>Շտապօգնության բուժքրոջ ցուցմունքները</p>	<p>Դրանք նույնանման էին բժշկի ցուցմունքներին</p>
<p>Վարդանի նախաքննական ցուցմունքը</p>	<p>Ըստ որի տուժողի հետ կոպելիս հանկարծ զգացել է, որ նա չի դիմադրում ու թուլացել է, գետնին նստելու պահին տեսել է դանակ, որը վերցրել ու դեն է նետել, չի լսել, թե ինչ-որ մեկն ասել է, որ «կասես, հետևից խփեցին», չի տեսել, թե ով է դանակահարել տուժողին, նրան առաջին օգնությունն ինքն է ցուցաբերել, փորձելով իր թաշկինակով կանգնեցնել հոսող արյունը մինչև շտապօգնության ժամանելը:</p>

Դատաքննության ընթացքում, բացի Սարգսից, հարցաքննվեցին մնացած բոլոր վկաները, ովքեր պնդեցին իրենց նախաքննական ցուցմունքները: Սարգսիսը դատարանին գրավոր դիմել էր՝ խնդրելով հրապարակել նրա նախաքննական ցուցմունքը և առերեսման արձանագրությունները: Դիմումի հիմքում ընկած էր այն պնդումը, որ Վարդանն իր ազգականն էր ու նա, օգտվելով իր սահմանադրական իրավունքից, ցանկություն չունեի նրա վերաբերյալ ցուցմունք տալ հրապարակային դատավարության պայմաններում: Միջնորդությունը բավարարվեց դատարանի կողմից: Վարդանի պաշտպանների միջնորդությունը Սարգսին դատարան հրավիրելու ու նրան հակընդդեմ հարցման ենթարկելու վերաբերյալ դատարանի կողմից մերժվեց:

Դատարանը Վարդանին ճանաչեց մեղավոր և մեղադրական դատավճիռը հիմնավորեց վերը նշված ապացույցներով:

Հարց.

Արդյոք խախտվել է Վարդանի՝ արդար դատաքննության իրավունքը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենիցայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ նույն հոդվածի 3-րդ մասի դ կետով սահմանված իրավունքի լույսի ներքո: Մասնավորապես, արդյոք մեղադրական դատավճռում հակընդդեմ հարցման եղանակով չստուգված ապացույցը միակ կամ վճռորոշ ապացույցն էր ապացույցների զանգվածում:

ԽՆԴԻՐ 3-Ի ՊԱՏԱՍԽԱՆԸ

Առաջադրված հարցի բովանդակությունն արդեն հուշում է ունկնդրին, թե խնդիրը լուծելիս իր փաստարկներն ինչպես պետք է կառուցի: Ըստ այդմ, պահանջվում է որոշել, թե արդյոք Վարդանի հակընդդեմ հարցման իրավունքի սահմանափակումը դատական քննության ընթացքում (6-րդ հոդվածի 3-րդ մասի դ ենթակետով սահմանված իրավունքը) ազդել է դատավարության արդարացիության վրա (6-րդ հոդվածի 1-ին մաս):

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք... նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի... արդարացի դատական քննության իրավունք»:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի դ կետը սահմանում է.

«Քրեական հանցագործության կատարման մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

...

հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դմ ցուցմունք տված վկաները»:

Նույնը կարելի է պնդել նաև՝ վկայակոչելով ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասը 67-րդ հոդվածի 4-րդ մասի համակցությամբ: Այսինքն, խնդրին պետք է մոտենալ **մրցակցային** դատավարության և կողմերի (զենքերի) **հավասարու-**

թյան սկզբունքների ներքո, որոշելով, թե արդյոք Վարդանին տրվել է իր դատավարական մրցակցի ապացույցները վիճարկելու, այդ ապացույցներին հակադրվելու **համարժեք** ու **պատշաճ** հնարավորություն: Այս լույսի ներքո անհրաժեշտ է ուսումնասիրել, թե արդյոք Սարգսին դատարանում հարցաքննելու հնարավորությունից զրկելու և դրա փոխարեն դատարանի կողմից նրա նախաքննական ցուցմունքի հրապարակման վրա հիմնվելու հանգամանքը Վարդանին չէն դրել իր դատավարական մրցակցի համեմատ էապես անբարենպաստ ու անհավասար վիճակում, որի արդյունքում նրա դատավարական իրավունքները սահմանափակվել են այնչափ, որ խախտվել է դատավարության՝ իր ամբողջության մեջ արդարացիության իրավունքը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի ներքո:

Շեռնաբար, ունկնդիրը պետք է կիրառի մի շարք սկզբունքներ, որոնք ՄԻԵԴ-ը սահմանել է իր մի շարք նախադեպերում, որոնք են, օրինակ՝ *Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի* (կետ 46), *Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի* (կետեր 81-87), *Ավետիսյանն ընդդեմ Հայաստանի* (կետեր 46-49), *Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի* (կետեր 45-48) գործերով վճիռները, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի Համայակ Սահակյանի (ԼԴ/0212/01/10), Արմեն Սարգսյանի (ԵՔԲԴ/ 0295/01/08) և Արարատ Ավագյանի գործերով (ԵԿԴ/ 0252 /01/13) կայացրած որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումները:

Այդ սկզբունքները հետևյալն են.

- 1) արդյոք բացակայող վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ ապացույց էր ապացույցների ընդհանուր զանգվածում – այսինքն, այդ ապացույցի ապացուցողական նշանակությունը,
- 2) արդյոք առկա էր հիմնավոր պատճառ՝ քննությունից բացակայող վկայի տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելու համար՝ հաշվի առնելով այն հանգա-

մանքը, որ վկաները, որպես ընդհանուր կանոն, պետք է ցուցմունք տան դատաքննության ժամանակ,

- 3) արդյոք մեղադրյալն ունեցել է համարժեք ու պատշաճ հնարավորություն վիճարկելու և հակադրվելու այդ ապացույցին այն պահին, երբ դրանք ստացվել են,
- 4) արդյոք առկա էին հակակշռող գործոններ, որոնք կարող են լրացնել դատաքննության ընթացքում դատավարական բացը, և այդպիսով ապահովել դատավարության՝ իր ամբողջության մեջ արդարացիությունը:

Վերը նշված այս սկզբունքները հանգամանալիորեն ներկայացվել են դասընթացի ընթացքում, և ունկնդիրներին հանձնարարվել է կարդալ վերը նշված բոլոր նախադեպերը: Հետևաբար, ունկնդիրները պետք է իրազեկ լինեն վերը նշված սկզբունքներից և դրանք կիրառեն գործի փաստերի նկատմամբ՝ կատարելով վերլուծություն հետևյալ եղանակով:

- 1) արդյոք բացակայող վկայի ցուցմունքը միակ կամ վճռորոշ ապացույցն էր ապացույցների ընդհանուր զանգվածում – այսինքն, պետք է գնահատել Սարգսի ցուցմունքի ապացուցողական նշանակությունն ապացույցների ընդհանուր զանգվածում:

Ըստ ՄԻԵԴ-ի.

««Որոշիչ» ապացույցը պետք է մեկնաբանվի նեղ իմաստով՝ որպես այնպիսի նշանակության կամ կարևորության ապացույց, որը կարող է որոշիչ լինել գործի ելքի համար: Եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ հաստատված ապացույցներով, ապա դրա որոշիչ լինելու հանգամանքը գնահատելը կախված է լինում հիմնավորող ապացույցների ապացուցողական ուժից. որքան ծանրակշիռ են հաստատող մյուս ապացույցները,

այնքան ավելի քիչ հավանական է, որ քննությունից բացակայող վկայի ցուցմունքը համարվի որոշիչ (Մանուշարյան, § 54):

Տվյալ դեպքում Սարգսիսը միակ ականատես վկան էր, հետևաբար, նրա ցուցմունքը վճռորոշ նշանակություն ուներ Վարդանի մեղքի հիմնավորման համար: Նույնիսկ թեև մեղադրական եզրակացությունը լի էր այլ ապացույցներով, որոնք կասկած չէին հարուցում իրենց վերաբերելիության, հավաստիության, ընդունելիության տեսանկյունից, սակայն Սարգսի ցուցմունքը միակն էր որպես ապացույց, որով ուղղակիորեն մատնանշվում էր սպանություն կատարող անձը: Այլ ապացույցները, մասնավորապես, բժշկի և բուժքրոջ ցուցմունքները, որոնցով կարևոր տեղեկություն էր հաղորդվում դեպքի մասին, այնուամենայնիվ, ածանցվում էին Վարդանի և տուժողի երկխոսությունից, իսկ Վարդանի վերնաշապիկի և տաբատի վրայի արյան հետքերի դատակենսաբանական փորձաքննության եզրակացությունը չէր հիմնավորում, թե ինչ եղանակով էին արյան հետքերը հայտնվել Վարդանի շորերի վրա: Նույնը կարելի է պնդել նաև դանակի դատահետքաբանական փորձաքննության մասին: Այդ բոլոր ապացույցները հիմնավորում էին հանցագործության դեպքը, սակայն դրանք չէին ապացուցում, որ սպանությունը կատարել էր Վարդանը: Այսպիսով, Սարգսի նախաքննական ցուցմունքը վճռորոշ նշանակություն ուներ ապացույցների զանգվածում:

- 2) Արդյոք առկա էր հիմնավոր ու հարգելի պատճառ վկայի դատարան չներկայանալու և քննությունից բացակայող վկայի տված նախաքննական ցուցմունքը որպես ապացույց ճանաչելու համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վկաները, որպես ընդհանուր կանոն, պետք է ցուցմունք տան դատաքննության ժամանակ:

Տվյալ դեպքում դատարանը բավարարել է Սարգսի միջնորդությունը հրապարակային դատավարության պայմաններում Վարդանի՝ որպես իր մերձավոր ազգականի դեմ ցուցմունք չտալու մասին և հրապարակել է նրա նախաքննական ցուցմունքը և առերեսման արձանագրությունը: Թեև Սահմանադրությունը սահմանում է, որ անձն իրավունք ունի ցուցմունք չտալ իր մերձավոր ազգականի դեմ, սակայն տվյալ դեպքում Վարդանը Սարգսի համար մերձավոր ազգական չէր, քանի որ Քրեական դատավարության օրենսգրքում «մերձավոր ազգական» հասկացությունը սահմանում է «հարազատ և ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրներ» հասկացությունը, մինչդեռ Վարդանը Սարգսի հոր նախկին կնոջ որդին էր: Փաստերը միևնույն ժամանակ չեն մասնավորեցնում, թե արդյոք Սարգսի հայրն ընդունել էր Վարդանի հայրությունը օրենքի ուժով: Այսպիսով, վկայի դատարան չներկայանալը չուներ հարգելի պատճառ, նույնիսկ եթե դատարանն ուներ հայեցողության իրավունք նախընտրելու համար բավարարվել վկայի ցուցմունքի հրապարակումով, քան թե ապահովել նրա ներկայությունը: Այդուհանդերձ, միայն այս պայմանի չբավարարելն ինքնին չի վկայում դատավարության անարդարացի լինելու մասին, թեև այն շատ կարևոր գործոն է մյուս համապատասխան անդումների հետ ընդհանուր հավասարակշռության մեջ դիտարկելու հարցում (*Մանուշարյան*, § 113):

- 3) Արդյոք դատավարության որևէ փուլում մեղադրյալին հնարավորություն տրվել է ստուգելու բացակայող վկայի ցուցմունքների ճշմարտացիությունը և հավաստիությունը՝ վկայի ցուցմունք տալու ժամանակ կամ վարույթի հետագա փուլերում:

Սա շատ կարևոր պայման է և նույնիսկ կարող է վճռորոշ լինել խնդրի լուծման համար: Ըստ ՄԻԵԴ-ի,

«բոլոր ապացույցները, որպես կանոն, պետք է ներկայացվեն մեղադրյալի մասնակցությամբ գործի հրա-

պարակային քննության ընթացքում՝ հակափաստարկ ունենալու հնարավորությամբ: Սակայն սա չի նշանակում, որ որպեսզի վկաների ցուցմունքներն օգտագործվեն իբրև ապացույց, դրանք անպայման պետք է տրված լինեն միայն հրապարակային դատաքննության ընթացքում: Նախաքննության ընթացքում տրված նման ցուցմունքներն իբրև ապացույց դիտարկելն ինքնին չի հակասում 6-րդ հոդվածի 1-ին մասին և 3-րդ մասի (դ) կետին, եթե երաշխավորվել են պաշտպանական կողմի իրավունքները: Որպես կանոն, այս իրավունքների իրականացումը պահանջում է, որ մեղադրյալին համարժեք և պատշաճ հնարավորություն տրվի վիճարկելու և հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկային ինչպես ցուցմունք տալու պահին, այնպես էլ գործի քննության հետագա փուլերում» (Մամիկոնյան, § 42):

Այսպիսով, ՄԻԵԴ-ը թույլ է տալիս մեղադրական դատավճռում հիմնվել առանցքային վկայի նախաքննական ցուցմունքի վրա, եթե այդ ցուցմունքը ստացվել է պաշտպանական կողմին համարժեք դատավարական հնարավորություններ տալով: Առավել խնդրահարույց է, երբ մեղադրական դատավճիռը հիմնվում է այնպիսի առանցքային վկայի ցուցմունքի վրա, որի ցուցմունքը նրան հարցեր ուղղելու եղանակով չի ստուգվել ոչ նախաքննության, ոչ դատաքննության պայմաններում, որը տվյալ դեպքում տեղի չի ունեցել:

Տվյալ դեպքում նախաքննության փուլում տեղի է ունեցել առերեսում Սարգսի և Վարդանի միջև, որի ժամանակ Սարգիսը պնդել է քննիչին որպես վկա տված իր նախկին ցուցմունքը: Առերեսումը տևել է չորս ժամ, որի ընթացքում քննիչը հնարավորություն է տվել Վարդանին ու նրա պաշտպանին հարցեր ուղղել Սարգսին ու ստուգել նրա ցուցմունքների ճշմարտացիությունը: Այսպիսով, քննիչը ապահովել է Վարդանի համար իր դեմ ցուցմունք տված անձին հարցեր ուղղելու, նրա տված ցուցմունքներին հակադրվելու պատշաճ ու համար-

Ժեք հնարավորություն: Ու թեև դատավարական այդ գործողությունը չի իրականացվել հրապարակային դատավարության պայմաններում ու դատավորի ներկայությամբ, որոնք լուրջ գործոններ են, սակայն ոչինչ չի հուշում, որ Վարդանը զրկված է եղել մրցակցային պայմաններում և հավասարության սկզբունքի հիման վրա վիճարկելու և հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկային՝ այդ ցուցմունքը ստացվելու պահին: Այսպիսով, կարելի է պնդել, որ նախաքննության փուլում իրականացված առերեսումն իր բնույթով կարող էր համարվել մեղադրյալին տրված ապացույցի ստուգման պատշաճ ու համարժեք հնարավորություն:

- 4) Արդյոք առկա են եղել բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ միջոցներ, որոնք թույլ են տվել արդարացի և պատշաճ կերպով գնահատել քննությունից բացակայող վկաների տված ցուցմունքների հավաստիությունը:

Ըստ ՄԻԵԴ-ի, «այս համատեքստում վերաբերելի են հետևյալ տարրերը. դատաքննություն իրականացնող դատարանի մոտեցումը չստուգված ապացույցներին, մեղավորությունը հաստատող լրացուցիչ, այլ ապացույցների առկայությունը և դրանց ապացուցողական ուժը, ինչպես նաև դատաքննության ժամանակ վկաններին հակընդդեմ հարցման ենթարկելու հնարավորության բացակայությունը հատուցելու համար ձեռնարկված դատավարական միջոցները» (Մանուսկրիպտ, § 57):

Նույնիսկ այն դեպքում, երբ բացակայող վկայի նախաքննական ցուցմունքը վճռորոշ ապացուցողական նշանակություն ունի, և նույնիսկ այն դեպքում, երբ նման վկայի ցուցմունքը չի ստուգվել հակընդդեմ հարցման կամ առերեսման եղանակով ոչ դատաքննության և ոչ էլ նախաքննության ընթացքում, ՄԻԵԴ-ը այդուհանդերձ կարող է որոշել, որ դատավարությունն իր ամբողջության մեջ եղել է արդարացի, եթե դատարանը

հիմնվում է այլ ապացույցների վրա, որոնց հավաստիությունը կասկած չի հարուցում, որոնք բավարար չափով համահունչ են, ունեն բավարար համակցություն, և որոնց ստացման ու հետազոտման համար օգտագործվել են կայուն դատավարական ընթացակարգեր՝ զուգորդված ամուր դատավարական երաշխիքներով:

Վերը նշվածի լույսի ներքո ունկնդիրը պետք է մանրամասնորեն վերլուծի մնացած այլ ապացույցները դրանց ընդունելիության, վերաբերելիության, հավաստիության և բավարար համակցության տեսանկյունից՝ ըստ ապացույցի գնահատման ազգային օրենսդրությամբ սահմանված ապացույցի գնահատման չորս սկզբունքների: Դա անելով, ունկնդիրը կհանգի այն եզրահանգման, որ ապացույցները կասկած չեն հարուցում իրենց վերաբերելիության ու հավաստիության տեսանկյունից: Ունկնդիրն այստեղ կարող է կիրառել նաև Արարատ Ավագյանի գործով Վճռաբեկ դատարանի «հիմնավոր կասկածից վեր» ապացույցի շեմը՝ պնդելու համար, որ այլ ապացույցները կազմում էին բավարար համակցություն հանցանքը Վարդանին վերագրելու համար և, հետևաբար, իրենց համակցության մեջ այլ ապացույցների ապացուցողական ուժը մեծանում է, քանի որ դրանք համահունչ են և լրացնում են մեկը մյուսին: Ինչ վերաբերում է դատավարական միջոցին, որը կարող էր լրացնել հակընդդեմ հարցման ենթարկելու հնարավորության բացակայությունը, այստեղ ունկնդիրը կարող է վերլուծել դատաքննության ժամանակ, հրապարակայնության պայմաններում և մրցակցային սկզբունքի պահպանմամբ նախաքննական ցուցմունքի հրապարակման դատավարական ընթացակարգը, ինչպես նաև նախաքննության ընթացքում առերեսման ժամանակ քննիչի կողմից մեղադրյալին տրված դատավարական հնարավորությունները որպես դատարանում հակընդդեմ հարցման հնարավորության բացակայության արդյունավետ հակակշիռ:

Կիրառելով վերը նշված չորս սկզբունքները և դրանց հիմքով կատարելով վերլուծություն, ունկնդիրը կհանգի այն եզրա-

հանգման, որ թեև դատաքննության ժամանակ սահմանափակվել են պաշպանական կողմի դատավարական իրավունքը (հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքը 6-րդ հոդվածի 3-րդ մասի դ կետի ներքո), սակայն այդ իրավունքը չի սահմանափակվել **այնչափ**, որ հանգեցնի դատավարության՝ իր ամբողջության մեջ անարդարացիությանը՝ 6-րդ հոդվածի 1-ին մասի ներքո (*Մամիկոնյան*, § 46):

Նույնը ունկնդիրը կարող է պնդել՝ հիմնվելով «էական քրեադատավարական խախտում» հասկացության վրա՝ ըստ *Համայակ Սահակյանի* գործով որոշման մեջ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշման (կետ 22)՝ դա վերլուծելով Քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո, ըստ որի

«2. Ապացույցներ ձեռք բերելիս էական են այն խախտումները, որոնք, դրսևորվելով մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների կամ սույն օրենսգրքի որևէ պահանջի խախտմամբ, դատավարության մասնակիցներին՝ օրենքով երաշխավորված իրավունքների զրկմամբ կամ սահմանափակմամբ կամ որևէ այլ կերպ ազդել են կամ կարող էին ազդել ստացված փաստական տվյալների հավաստիության վրա»:

Այսպիսով, ճիշտ պատասխանն է, որ արդար դատաքննության իրավունքի խախտում տեղի չի ունեցել:

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ 4

Կարդացեք Եվրոպական դատարանի վճռի համառոտագիրը՝ Մանուչարյանն ընդդեմ Ավետիսյանի գործով, ու պատասխանեք առաջադրված հարցին:

* * *

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Ա Գ Ի Ր

iii) Արդյոք առկա են եղել բավարար «հակակշռող գործոններ»

57. Ի վերջո, Դատարանը պետք է որոշի՝ արդյոք առկա են եղել բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ միջոցներ, որոնք թույլ են տվել արդարացի և պատշաճ կերպով գնահատել քննությունից բացակայող վկաների տված ցուցմունքների հավաստիությունը: Այս համատեքստում վերաբերելի են հետևյալ տարրերը. դատաքննություն իրականացնող դատարանի մոտեցումը չստուգված ապացույցներին, մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցների առկայությունը և դրանց ապացուցողական ուժը, ինչպես նաև դատաքննության ժամանակ վկաներին խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը հատուցելու համար ձեռնարկված դատավարական միջոցները (տես Շաչաշվիլիի գործը՝ վերևում հիշատակված, §§ 125-131):

58. Դատարանը նշում է, որ մարզային դատարանի վճիռը չի պարունակում իրեն ներկայացված ապացույցների վերլուծություն, ինչպես նաև ավելի փոքր նշում այն մասին, որ դատարանը տեղյակ է եղել վկայի չստուգված ցուցմունքների, այդ թվում՝ Ք. Մ.-ի ցուցմունքի նվազ ապացուցողական արժեքի

մասին: Բոլոր ապացույցները պարզապես ներկայացվել են որպես դիմումատուի կողմից հանցագործության կատարման ապացույց՝ առանց վկայի չստուգված ցուցմունքի հավաստիության գնահատման (տես վերևում՝ 26-րդ պարբերությունը): Հետևաբար, Դատարանը գտնում է, որ դատաքննություն անցկացնող դատարանը պատշաճ կարգով չի քննել Ք. Մ.-ի ցուցմունքի հավաստիության հարցը:

59. Դատարանն այնուհետև նշում է, որ, ինչպես արդեն վերևում նշվել է, մարզային դատարանն ունեցել է դիմումատուի մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույց (տես վերևում՝ 56-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվել է, լրացուցիչ ապացույցը, ի տարբերություն Ք. Մ.-ի ցուցմունքի, ինքնին չի խաթարել դիմումատուի պաշտպանության իրականացումն այն մասով, որ իր մահացած եղբայրն է կատարել սպանությունը:

60. Ի վերջո, Դատարանը նշում է, որ դատավարական որևէ միջոց չի ձեռնարկվել՝ իր գործով դատաքննության ժամանակ Ք. Մ.-ին խաչաձև հարցաքննելու հնարավորության բացակայությունը հատուցելու համար: Դիմումատուն հնարավորություն չի ունեցել հարցաքննելու Ք. Մ.-ին վարույթի որևէ փուլում: Ավելին, դիմումատուն Վերաքննիչ դատարանից պահանջել է Ք. Մ.-ի ցուցմունքը հայտարարել անընդունելի, սակայն իր պահանջը որևէ կերպ չի բավարարվել (տես վերևում՝ 30-րդ և 31-րդ պարբերությունները):

61. Վերոնշյալ պնդումները բավարար են, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ անհիմն կերպով սահմանափակվել է դիմումատուի՝ վկա Ք. Մ.-ին հարցաքննելու իրավունքը, ում վկայությունները որոշիչ դեր են ունեցել իր դատապարտման հարցում:

62. Հետևաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի և 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում:

Հարց.

Համաձայն եք Եվրոպական դատարանի հետ առ այն, առաջին, որ նման պատճառաբանությունը թերի պատճառաբանություն է, երկրորդ, որ թերի պատճառաբանությունը չի կարող հանդիսանալ հակակշռող գործոն հակընդդեմ հարցման հնարավորության բացակայությանը: Այսինքն, եթե դատարանը մանրամասնորեն պատճառաբանած լիներ բոլոր առկա ապացույցները՝ դրանց վերաբերելիության, արժանահավատության, ընդունելիության և բավարար համակցության հիմքերով, դա արդյոք որևէ բան կփոխեր, կազդեր գործի ելքի վրա:

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ 5

Կարդացեք Եվրոպական դատարանի վճռի համառոտագիրը՝ Ավետիսյանն ընդդեմ Հայաստան գործով, ու պատասխանեք առաջադրված հարցին:

* * *

ԱՎԵՏԻՍՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Ա Գ Ի Ր

iii) Արդյոք եղել են բավարար «հակակշռող գործոններ»

63. Ինչ վերաբերում է ներպետական դատարաններ չներկայացած վկաներ Մ. Ս.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի ցուցմունքները որպես ապացույց ճանաչելուն, ապա Դատարանը նշում է, որ Մարզային դատարանն այդ ցուցմունքները հաշվի առնելիս շրջահայացություն չի ցուցաբերել: Մարզային դատարանի դատավճիռը չի պարունակում որևէ նշում այն մասին, որ այն տեղյակ է եղել վկաների չստուգված ցուցմունքի սահմանափակ ապացուցողական նշանակության մասին: Ընդհակառակը, վկաների չստուգված ցուցմունքները դասվել են դիմումատուի մեղավորությունը հիմնավորող ապացույցներին՝ առանց դրանց հավաստիությունը գնահատելու (տե՛ս վերևում՝ 29-րդ պարբերությունը): Այդ պատճառով Դատարանը կարծում է, որ Մարզային դատարանը պատշաճ կերպով չի քննել չներկայացած վկաների ցուցմունքների հավաստիությունը:

64. Դատարանը նաև նշում է, որ Մարզային դատարանը, ինչպես նշվել է վերևում (տե՛ս 57-րդ և 49-րդ պարբերությունները), չի ունեցել մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցներ, որոնք կհաստատեին Մ. Ս.-ի, Դ. Թ.-ի և Դ. Օ.-ի տված ցուցմունքները:

Հարց.

Համաձայն էք Եվրոպական դատարանի եզրահանգման հետ, առաջին, որ պատճառաբանությունը թերի է, երկրորդ, որ թերի պատճառաբանությունը չի կարող հանդիսանալ հակակշռող գործոն հակընդդեմ հարցման հնարավորության բացակայությանը: Այսինքն, եթե դատարանը մանրամասնորեն գնահատած լիներ բոլոր առկա ապացույցները՝ դրանց վերաբերելիության, արժանահավատության, ընդունելիության և բավարար համակցության հիմքերով, արդյոք այդ հանգամանքը որևէ կերպ կազդեր գործի լուծման վրա:

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ 6

2010թ.-ի մարտի 4-ին ժամը 23:30-ի սահմաններում Ա.Բ.-ն և Գ.Դ.-ն Երևան քաղաքի Թումանյան փողոցով զբոսնելիս նկատել են օտարերկրացիներ, ԱՄՆ քաղաքացիներ Ե.-ին և Զ.-ին: Վերջիններիս խոսակցությունից հասկանալով, որ նրանք զբոսաշրջիկներ են և մտածելով, որ Զ.-ի ձեռքում գտնվող պայուսակում հնարավոր է գումար լինի, որոշում են հափշտակել այն: Այդ նպատակով հետևում են նրանց, և երբ Ե.-ն և Զ.-ն հասնում են Թումանյան-Աբովյան փողոցների խաչմերուկ, իրենց հանցավոր դիտավորությունն իրականացնելու նպատակով, հետևի կողմից վազքով մոտենում են վերջիններիս, Ա.Բ.-ն Ե.-ի կողմից հնարավոր դիմադրությունը կանխելու նպատակով նրան դեպի աջ կողմ է հրում և շարունակում վազել դեպի Սայաթ-Նովա փողոցի կողմը, իսկ Գ.Դ.-ն նույն պահին Զ.-ի ձեռքից խլում է պայուսակը և վազում Ա.Բ.-ի հակառակ ուղղությամբ: Նույն պահին հանցագործությանն ականատես է լինում ոստիկանության աշխատակիցը, որը

հետապնդում է Գ.Դ.-ին, սակայն կարողանում է նրան բռնել այն ժամանակ, երբ վերջինս պայուսակը դեռ նետած է լինում: Արդյունքում Գ.Դ.-ն ձերբակալվում է և բերվում ոստիկանություն: Նույն օրը Ե.-ն և Զ.-ն հանցագործության մասին հաղորդում են ներկայացնում, հարուցվում է քրեական գործ ՀՀ քր. օր. 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերի հատկանիշներով:

2010թ.-ի մարտի 5-ին Ա.Բ.-ն և Գ.Դ.-ն որպես մեղադրյալ են ներգրավվում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով: Ա.Բ.-ի նկատմամբ հայտարարվում է հետախուզում:

Նույն օրը Ե.-ն և Զ.-ն հարցաքննվում են և իրենց ցուցմունքում մանրամասն նկարագրում են հանցագործության հանգամանքները: Գ.Դ.-ն ներկայացվում է ճանաչման, որի արդյունքում Ե.-ն և Զ.-ն ճանաչում են Գ.Դ.-ին, որպես կողոպուտը կատարած երկու անձանցից մեկի: Ե.-ն և Զ.-ն պնդում են իրենց ցուցմունքը նաև Գ.Դ.-ի հետ առերես հարցաքննության ժամանակ: Ե.-ին և Զ.-ին ներկայացվում է նաև Ա.Բ.-ի լուսանկարը և լուսանկարով ճանաչման արդյունքում վերջիններս ճանաչում են Ա.Բ.-ին որպես իրենց նկատմամբ կողոպուտ կատարած երկրորդ անձի: Հաջորդ օրը՝ հունվարի 6-ին, տուժողներ Ե.-ն և Զ.-ն լքում են Հայաստանի Հանրապետությունը և մեկնում ԱՄՆ: 2010թ.-ի ապրիլի 2-ին Ա.Բ.-ն հայտնաբերվում է, վերջինիս մեղադրանք է առաջադրվում ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով: Ա.Բ.-ն հերքում է իր մասնակցությունը կատարված հանցագործությանը: Մայիսի 10-ին նախաքննությունն ավարտվում է և գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվում է դատարան: Դատարանում Ա.Բ.-ն և Գ.Դ.-ն ցանկություն են հայտնում հարցաքննել իրենց դեմ վկայություն տված անձանց և միջնորդում են դատարան հրավիրել Ե.-ին և Զ.-ին: Դատարանի բուլոր ջանքերը՝ ապահովելու վերջիններիս ներկայությունը, ապարդյուն են անցնում, քանի որ ԱՄՆ-ի հետ ՀՀ-ն չունի իրավական փոխօգնության որևէ պայմանագիր:

Ընդհանուր իրավասության դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված հանցանքը կատարելու համար մեղավոր է ճանաչում Ա.Բ.-ին և Գ.Դ.-ին: Դատարանն իր դատավճիռը հիմնավորում է տուժողների նախաքննական ցուցմունքներով, տուժողի և Գ.Դ.-ի առերես հարցաքննության արձանագրությամբ, անձին ճանաչման ներկայացնելու արձանագրությամբ, Գ.Դ.-ին ձերբակալած ոստիկանի ցուցմունքով և լուսանկարով ճանաչման ներկայացնելու արձանագրությամբ:

Հարց.

Արդյոք խախտվել է Ա.Բ.-ի արդար դատական քննության իրավունքը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիմքով: Մասնավորապես, արդյոք հակընդդեմ հարցման իրավունքի հնարավորության բացակայությունը հակակշռվում էր լրացուցիչ բավարար ապացույցներով:

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ 7

Կարդացեք ներկայացված փաստերը: Խնդիրն ուղղակիորեն չի վերաբերում հակընդդեմ հարցման իրավունքի իրացմանը, սակայն առնչվում է այն իրավունքին նրանով, որ պետք է հիմնավորել, թե արդյոք իր վկաներին դատարան հրավիրելու միջնորդության մերժումը հանգեցրել է մրցակցային դատավարության իրավունքի խախտմանը:

Փաստերը

Օժանդակ դպրոցի չորս դպրոցականներ այգու մոտով անցնելիս ականատես են եղել, թե ինչպես են երկու երիտասարդ վիճաբանում և միմյանց հարվածում: Դպրոց հասնելիս դպրոցականները դեպքի մասին պատմել են իրենց ուսուցչին: Վիճաբանողներից մեկին այնուհետև հայտնաբերել են այգում մահացած:

Դեպքից երկու օր անց Ա.-ին բերման են ենթարկել ոստիկանություն, որտեղ հարցաքննվել է որպես վկա, որից հետո ներկայացրել են ճանաչման 1-ին և 2-րդ դպրոցականների հետ, ովքեր հաստատել են, որ Ա-ն այն անձանցից մեկն էր, ում իրենք տեսել էին այգում: Դրանից հետո կայացվել է որոշում Ա-ին որպես կասկածյալ ներգրավելու մասին, որից հետո կազմվել է ձերբակալման համապատասխան արձանագրություն և նրան հայտարարվել է այդ մասին: Այնուհետև ներգրավվել է պաշտպան, որից հետո բնակարանում կատարվել է խուզարկություն: Խուզարկության արդյունքում առգրավվել է նրա համակարգիչը: Երկու օր հետո Ա-ի և 3-րդ և 4-րդ դպրոցականների միջև տեղի է ունեցել առերեսում (վերջիններս՝ մանկավարժի ներկայությամբ): 3-րդ դպրոցականը նշել է, որ Ա-ն այգում իր տեսած անձանցից մեկն է, իսկ 4-րդ դպրոցականը նշել է, որ երբևիցե չի տեսել նրան: Նույն օրը Ա-ին ներկայացվել է մեղադրանք և նա կալանավորվել է:

Փաստաբանը նախաքննության փուլում միջնորդել է որպես վկա հարցաքննել իր կողմից հարցման ենթարկված երեք անձանց, ովքեր կարող են հաստատել մեղադրյալի այլուրեքությունը՝ մեղադրյալի հարևանին, մասնագիտությամբ հյուսն մի անձնավորության և մեղադրյալի մորը, ովքեր կարող են վկայել, որ դեպքի օրը և ժամին մեղադրյալը գտնվել է տանը: Քննիչը համաձայնվել է որպես վկա հարցաքննել նշված անձանց, սակայն նշված գործողությունները չեն կատարվել:

Դատաքննության ընթացքում պաշտպանը միջնորդել է 1-ին և 2-րդ դպրոցականների հետ ճանաչման արձանագրությունները համարել անընդունելի, սակայն միջնորդությունը մերժվել է: Պաշտպանը միջնորդել է հրավիրել դատարան ու հարցաքննել Ա-ի հարևանին՝ հյուսնին, ով դեպքի օրն աշխատել է Ա-ի տանը, և Ա-ի մորը, ովքեր կարող էին վկայել, որ դեպքի օրը մեղադրյալը եղել է տանը և տնից դուրս չի եկել: Դատարանը բավարարել է Ա-ի մորը դատարան հրավիրելու միջնորդությունը: Դատարանում Ա-ի մայրը ցուցմունք է տվել, որ դեպքի օրը Ա-ն եղել է տանը, որ նրան տեսել են հարևանը՝

հյուսնը, ով այդ օրը տանը կատարում էր դռների վերանորոգում, ինչպես նաև, որ Ա-ն այդ ընթացքում հեռախոսով մի քանի անգամ շփվել է իր ընկերուհու ու նրա մոր հետ: Նույն օրը պաշտպանը միջնորդել է դատարան հրավիրել այդ անձանց և հարցաքննել, սակայն դատարանը մերժել է միջնորդությունը:

Դատաքննության ընթացքում մեղադրյալի պաշտպանի կողմից հակընդդեմ հարցման են ենթարկվել դպրոցականները: Բոլոր դպրոցականների հարցաքննությունը դատարանում կատարվել է նրանց ուսուցչի ներկայությամբ: Վերջինս դատարանում հայտարարել է, որ երեխաների հարցաքննությունը պետք է կատարվի զգուշորեն, քանի որ նրանք, ելնելով նրանց առողջական վիճակից, կարող են հեշտությամբ շփոթվել և ունենալ հիշողության կորուստ: 1-ին դպրոցականը պնդել է, որ մեղադրյալն այն անձն է, ում տեսել է այգում, 2-րդ դպրոցականը նույնպես պնդել է, որ մեղադրյալն այն անձն է, ում տեսել է այգում: 3-դ դպրոցականը նշել է, որ վստահ չէ, իսկ 4-րդ դպրոցականի հարցաքննությունը չի ավարտվել, քանի որ նա հուզմունքից չի կարողացել պատասխանել հարցերին և ուսուցիչը խնդրել է դադարեցնել հարցաքննությունը:

Դատարանը Ա-ին դատապարտել է ազատազրկման սպանության համար: Մեղադրական դատավճռի հիմքում դրվել են հետևյալ ապացույցները.

- Ա-ի ճանաչման արձանագրությունները 1-ին և 2-րդ դպրոցականների հետ,
- նշված երկու դպրոցականների՝ ճանաչումից հետո որպես վկա հարցաքննության արձանագրությունները,
- Ա-ի և 3-րդ և 4-րդ դպրոցականների առերեսման արձանագրությունները,
- նշված երկու դպրոցականների՝ որպես վկա հարցաքննության արձանագրությունները,
- Ա-ի համակարգչի և էլեկտրոնային էջի փորձաքննությունը, ըստ որի հաստատվել է, որ Ա-ն ու մահացածը

երկար ժամանակ վարել են գրագրություն, և որ Ա-ն դեպքի օրը նրա հասցեին հնչեցրել է սպառնալիքներ և առաջարկել է այդ օրը հանդիպել.

- դատաքննության ընթացքում 1-ին, 2-րդ և 3-րդ դպրոցականների հակընդդեմ հարցման արձանագրությունները,
- դեպքի վայրի զննության արձանագրությունը, ըստ որի մահացածի մարմինը գտնվել է այն վայրում, որը մատնացույց էին արել դպրոցականներն իրենց նախաքննական ու դատաքննական ցուցմունքներում,
- դեպքի վայրում հայտնաբերված դանակը՝ որպես իրեղեն ապացույց, որի վրա, սակայն, չեն հայտնաբերվել մատնահետքեր,
- դատաբժշկական փորձաքննությունը, որով հաստատվել է, որ մահը վրա է հասել դանակահարության արդյունքում, և որ մահացածի արյան խումբը համապատասխանում է դանակի վրա հայտնաբերված արյան խմբի հետ:

Դատավճռում նշվել է, որ Ա-ի մոր, հարևանի, հյուանի, Ա-ի ընկերուհու և նրա մոր պնդումներն արժանահավատ չէին, քանի որ շահագրգիռ անձինք էին:

Հարց.

Արդյոք հարգվել է Ա-ի արդար դատաքննության իրավունքը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասի դ կետի հիմքերով

ՊԱՏԱՍԽԱՆ

Որոշելու համար, թե արդյոք դատավարությունը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով եղել է արդարացի, խնդ-

րին պետք է մոտենալ **մրցակցային** դատավարության և կողմերի (զենքերի) **հավասարության** սկզբունքների ներքո, այսինքն, պետք է որոշել, թե արդյոք Ա-ին տրվել է իր ապացույցները ներկայացնելու և հակընդդեմ կողմի ապացույցները վիճարկելու, այդ ապացույցներին հակադրվելու **համարժեք ու պատշաճ** հնարավորություն: Այս լույսի ներքո անհրաժեշտ է ուսումնասիրել մեղադրյալի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի դ կետի հիմքով իր՝ վկաներին դատարան հրավիրելու և նրանց դատարանում հարցաքննելու միջնորդությունների մերժման հանգամանքը դատարանի կողմից, և թե արդյոք այդ միջնորդությունների մերժումը մեղադրյալին չեն դրել իր դատավարական մրցակցի համեմատ էապես անբարենպաստ, անհավասար վիճակում: Եթե այո, նշանակում է դատավարությունն իր ամբողջության մեջ եղել է անարդարացի:

Որոշելու համար, թե արդյոք նշված միջնորդությունների մերժումը պաշտպանական կողմի իրավունքների էական սահմանափակում է հանդիսացել (ըստ Վճռաբեկ դատարանի և Քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի՝ էական քրեադատավարական խախտում), անհրաժեշտ է գնահատել, թե արդյոք պաշտպանական կողմը նշված դատավարական իրավունքից օգտվելով ցանկանում էր վիճարկել **առանցքային** ապացույցներ, և թե արդյոք այդ ապացույցները կարող էին ազդել գործի **ելքի** վրա: Այլ կերպ ասած, կարելի է հանգել ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանած սկզբունքին առ այն, թե արդյոք սահմանափակումները հանգեցրել են քրեադատավարական իրավունքի **էական** խախտումների:

Որոշելու համար ապացույցների առանցքային բնույթը, կարևորությունը, դրանց ապացուցողական մեծ նշանակությունը, ուսումնասիրության առարկա կարող է դառնալ դատապարտման հիմքում ընկած ապացույցների «որակը» (ըստ ՄԻԵԴ-ի), կամ արժանահավատությունը, ընդունելիությունը և վերաբերելիությունը, ինչպես նաև բավարար համակցությունը (ըստ Քրեական դատավարության օրենսգրքի): Եթե դատապարտման հիմքում ընկած ապացույցները չեն բավարարում նշված պա-

հանջներին, նշանակում է մեծանում Ա-ի միջնորդությունները բավարարելու և իր վկաներին դատարանում հարցաքննելու անհրաժեշտությունը: Որքան մեծ են դատապարտման հիմքում ընկած ապացույցների թերությունները՝ ըստ դրանց ընդունելիության վերաբերելիության, արժանահավատության և համակցության, այնքան ավելի է մեծանում միջնորդությունները բավարարելու անհրաժեշտությունը, և դրանց մերժելու պարագայում ավելի վստահ կարելի է պնդել, որ Ա-ն հայտնվել է էապես անհավասար վիճակում, և որ դատավարական սահմանափակումները էական են եղել:

Վերը նշված մոտեցումները սահմանված են ՄԻԵԴ մի շարք վճիռներում (Գալստյանն ընդդեմ Հայաստանի, § 77, Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի (§ 46), Գաբրիելյանն ընդդեմ Հայաստանի (§§ 81-87), ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում (Համայակ Սահակյանի գործով որոշում ԼԴ/0212/01/10, Արմեն Սարգսյանի գործով որոշում ԵՔՐԴ/0295/01/08): Ինչ վերաբերում է ապացույցների բավարար համակցությանը, ապա կարելի է վերհիշել Վճռաբեկ դատարանի Արարատ Ավագյանի գործով հայտնի որոշումը, որով վերջինս սահմանեց բավարար համակցության շեմ՝ հիմնավոր կասկածից վեր:

Տվյալ դեպքում տեղի է ունեցել մրցակցային դատավարության խախտում, քանի որ պաշտպանական կողմի իրավունքները սահմանափակվել են ավելին, քան տվյալ հանգամանքների ներքո անհրաժեշտ էր, որի արդյունքում պաշտպանական կողմը հայտնվել է էապես անհավասար, անբարենպաստ վիճակում: Դատապարտման հիմքում ընկած ապացույցների մեծ մասը լուրջ թերություններ ունեն՝ դրանց արժանահավատությունը և վերաբերելիությունը, և այս լույսի ներքո դատարանը պետք է բավարարեր Ա-ի միջնորդությունները՝ իր վկաներին դատարան հրավիրելու և նրանց հրապարակային պայմաններում հարցաքննելու համար: Այսպես,

1-ին և 2-րդ դպրոցականների հետ ճանաչման գործողությունը նախաքննության փուլում կատարվել է դատավարական

իրավունքի խախտումով, քանի որ ճանաչումը տեղի է ունեցել, փաստորեն, հետաքննության փուլում, մինչև անձին ձերբակալելը և նրան այդ մասին հայտարարելը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Նշանակում է, ըստ թունավոր ծառի պտուղների սկզբունքի, անթույլատրելի պետք է համարվի նաև այդ դպրոցականների՝ որպես վկա հարցաքննության արձանագրությունները, քանի որ դրանք բխում են ճանաչման գործողությունից: 3-րդ դպրոցականը ճանաչել է Ա-ին, իսկ 4-ը նշել է, որ չի ճանաչում: Նախաքննական այս ցուցմունքները հակասության մեջ են մտել դատարանում նրանց տված ցուցմունքների հետ, մասնավորապես, 3-րդ դպրոցականը դատարանում նշել է, որ վստահ չէ, որ Ա-ն այն անձն է, ում տեսել է այգում, իսկ 4-րդ դպրոցականի հարցաքննությունը չի ավարտվել, քանի որ հնարավոր չի եղել նրանից ստանալ պատասխան նրա առողջական վիճակի պատճառով: Հակասություն չկա 1-ին և 2-րդ դպրոցականների՝ դատարանում և մինչդատական փուլում տված ցուցմունքների միջև, այդուհանդերձ, ճանաչման գործողության վերը նշված խախտումն արդեն իսկ բացասաբար է անդրադառնում դատարանում նրանց ցուցմունքների արժանահավատության վրա: Բացի այդ, ընդհանուր առմամբ բոլոր դպրոցականները հատուկ դպրոցի աշակերտներ էին, և այս հանգամանքը նույնպես ազդում է նրանց ցուցմունքների արժանահավատության վրա:

Ինչ վերաբերում է մնացած ապացույցներին (դատաբժշկական փորձաքննությունը, իրեղեն ապացույցը, համակարգչի և էլեկտրոնային հաղորդագրությունը, դեպքի վայրի զննությունը), ապա սրանք թեև վստահելի ապացույցներ են իրենց բնույթով, այդ թվում՝ նաև ընդունելիության հիմքով, սակայն վերաբերելիության առումով խնդրահարույց են, քանի որ այդ ապացույցներով հիմնականում հիմնավորվում է սպանության հանգամանքը, այլ ոչ թե Ա-ի կողմից սպանություն կատարելու փաստը: Այսինքն, ապացույցների այս խումբը վերաբերելիության տեսանկյունից խնդրահարույց է: Վերաբերելիության առումով առավել վստահելի է էլեկտրոնային հաղորդագրու-

թյունը, սակայն այս ապացույցը բավարար համակցության չի կազմում մյուս ապացույցների հետ Ա-ին սպանության փաստը վերագրելու համար՝ հատկապես եթե դա դիտարկենք Վճռաբեկ դատարանի կողմից անձի մեղքի հարցը որոշելիս «հիմնավոր կասկածից վեր» ապացույցի չափանիշի ներքո (Արարատ Ավագյանի գործով որոշում, կետ 33):

Այսպիսով, եթե Ա-ի միջնորդություններն իր վկաներին դատարան հրավիրելու և նրանց հարցման ենթարկելու մասին չմերժվեին, նա, անկախ գործի ելքից, կունենար արդյունավետ հնարավորություն այլուրեքության մասին իր ապացույցները և պնդումները վիճարկելու համար: Մինչդեռ միջնորդությունների մերժման արդյունքում նրա իրավունքները սահմանափակվեցին ավելին, քան տվյալ հանգամանքների ներքո ողջամտորեն անհրաժեշտ էր, որի արդյունքում նա հայտնվեց էապես անհավասար դիրքերում իր դատավարական մրցակցի նկատմամբ, որն էլ հանգեցրեց մրցակցային դատավարության սկզբունքի խախտմանը: Հետևաբար, Ա-ն զրկվել է մրցակցային դատավարության պայմաններում դատաքննության հնարավորությունից, որի հիմքով էլ դատավարությունն արդարացի չի եղել: Այլ կերպ ասած, զրկվելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի դ կետի հիմքով իր վկաներին դատարանում հարցաքննելու հնարավորությունից, նա զրկվեց արդարացի դատաքննության իրավունքից՝ 6-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով:

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ 8

Ա-ին առաջադրվել է մեղադրանք խոշոր չափի թմրանյութ ձեռք բերելու, պահելու և իրացնելու մեջ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հիմքով: Մեղադրանքի հիմքում դրվել են ապացույցներ, որոնք ստացվել են «վերահսկելի գնում» օպերատիվ հետախուզական միջո-

ցառման իրականացման արդյունքում: Գործի հանգամանքները հետևյալն են.

Ա-ն զանգահարել է Բ-ին և խնդրել իր համար ձեռք բերել թմրանյութ: Բ-ն պատասխանել է, որ կփորձի թմրանյութ ձեռք բերել և առաջարկել է հանդիպել իր բնակարանում նույն օրը երեկոյան: Այդ հեռախոսազանգից մի փոքր անց Ա-ին զանգահարել է իր վաղեմի ընկերուհին՝ Գ-ն և խնդրել, որպեսզի Ա-ն իր համար անհապաղ թմրանյութ ձեռք բերի: Գ-ն հեռախոսով նշել է, որ մի քանի օր թմրանյութ չի ընդունել և այժմ իրեն վատ է զգում, տառապում է գրկանքի համախտանիշով (աբստինենցիա կամ այլ կերպ՝ «լոմկա»): Ա-ն մտահոգված լինելով Գ-ի հոգեվիճակով և կարծելով, որ վերջինս կարող է նույնիսկ ինքնասպանություն գործել, խոստանում է օգնել Գ-ին և այդ նպատակով առաջարկում է երեկոյան հանդիպել և հանդիպումը նշանակում է այն շենքի մոտ, որտեղ ապրում էր Բ-ն: Երեկոյան Ա-ն ու Գ-ն հանդիպել են Բ-ի շենքի մոտ, Գ-ն Ա-ին տվել է գումար, վերջինս խոստացել է վերադառնալ քիչ անց և առաջարկել է սպասել իրեն շենքի շքամուտքի մոտ, իսկ ինքը մտել է շքամուտքից և բարձրացել Բ-ի բնակարան, որտեղ Բ-ից գնել է երկու փաթեթ հերոին տեսակի թմրանյութ: Այնուհետև դուրս է եկել բնակարանից, իջել աստիճաններից և շքամուտքի ելքի մոտ մի փաթեթը հանձնել է Գ-ին, իսկ մյուսը դրել իր գրպանը: Գ-ն բացել է պայուսակը, որպեսզի թմրանյութի փաթեթը դնի պայուսակի մեջ, սակայն պայուսակը փակելիս անսպասելի կերպով վայր է գցել այն: Իրականում պայուսակի վայր գցելը ոստիկանության աշխատակիցների հետ նախօրոք պայմանավորված ազդանշան էր թմրանյութի ստանալու մասին: Ստանալով ազդանշանը, ոստիկանները, ովքեր քողարկված սպասում էին դրսում և շքամուտքում, ձերբակալել են Ա-ին և Գ-ին և տեղափոխել ոստիկանություն:

Նախաքննությունը

Ոստիկանություն բերվելուց հետո Գ-ն ենթարկվել է անձնական խուզարկության՝ հրավիրված երկու ընթերականների ներկայությամբ: Խուզարկության ընթացքում Գ-ի պայուսակից հայտնաբերվել է թմրանյութը: Հարցին, թե թմրանյութն ում է պատկանում, Գ-ն հայտարարել է, որ պատկանում է իրեն և որ այն ձեռք է բերել Ա-ից՝ նրան վճարած գումարի դիմաց: Նա նշել է, որ թմրանյութն իր սեփական օգտագործման համար է, քանի որ ինքը տառապում է թմրամոլությամբ: Այդ ամենը, ինչպես նաև հայտնաբերված թմրանյութի քաշն արձանագրվել է Անձնական խուզարկություն կատարելու մասին արձանագրության մեջ: Արձանագրությունն այնուհետև ստորագրվել է խուզարկությունը կատարող երկու ոստիկանների և ներկա գտնվող երկու ընթերականների կողմից, ինչպես նաև Գ-ի կողմից: Այնուհետև Գ-ն հարցաքննվել է քննիչի կողմից որպես կասկածյալ, որի ընթացքում պնդել է իր բացատրության մեջ տված հայտարարությունները:

Ոստիկանության բաժնի մեկ այլ սենյակում խուզարկության է ենթարկվել նաև Ա-ն, ում մոտ նույնպես հայտնաբերվել է թմրանյութով փաթեթ: Քննիչի կողմից կատարված հարցաքննության ընթացքում Ա-ն հայտարարել է, որ Բ-ի հետ հեռախոսագրույցից հետո իրեն զանգահարել է իր նախկին ընկերը՝ Գ-ն, և օգնելու նպատակով համաձայնվել է նրա համար ձեռք բերել թմրանյութ, քանի որ վերջինս տառապում էր զրկանքի համախտանիշով: Ինքը հայտարարել է, որ Գ-ին թմրանյութը փոխանցելու պահին վերջինս խիստ լարված և շփոթված տեսք ուներ, և ինքը կարծում էր, թե դա նրանից էր, որ Գ-ն երկար ժամանակ թմրանյութ չընդունելու պատճառով իրեն վատ էր զգում, սակայն հիմա է հասկանում, որ Գ-ն այդ պահին հանդես էր գալիս քողարկված գործակալի դերում և միզուցե ափսոսում էր իր արարքից կամ վախենում էր որևէ բանից: Ա-ն իր տված բացատրության մեջ նշել է, որ թմրանյութի այն մասը, որը հայտնաբերվել է իր մոտ, ձեռք է բերել Բ-ից իր սեփական

օգտագործման համար, իսկ երկրորդ մասը, որը տվել էր Գ-ին շքամուտքի մոտ, ձեռք է բերել ոչ թե իրացման նպատակով, այլ գուտ Գ-ին օգնելու նպատակով և այդ իմաստով իր նպատակը գումար աշխատելը չի եղել, և ինքը այդ գործարքից որևէ եկամուտ չի ստացել: Նա պնդել է, որ ինքը երբեք իրացնելու նպատակով թմրանյութ ձեռք չէր բերել, որ ինքը թմրանյութի իրացումով երբեք նախկինում չի զբաղվել, և որ Գ-ն հրահրել ու այդ իմաստով սադրել է իր կողմից հանցագործության կատարումը: Այդ նպատակով Ա-ն նախաքննության փուլում պահանջել է քննիչից անցկացնել առերեսում Գ-ի հետ, որը բավարարվել է, և անցկացվել է առերեսում, որի ժամանակ Գ-ն պնդել է որպես կասկածյալ տված իր ցուցմունքները՝ Ա-ի կողմից իր տված գումարի դիմաց իրեն թմրանյութ իրացնելու մասին:

Դատաքննությունը

Դատաքննության փուլում մեղադրյալի պաշտպանը միջնորդել է դատական քննության առարկա դարձնել ՕՀՄ-ի թույլտվության իրավական և փաստական հիմքերը, մասնավորապես, դատարան ներկայացնել և որպես ապացույց հետազոտել ՕՀՄ-ի անցկացման անհրաժեշտության մասին օպերատիվ աշխատակցի միջնորդությունը՝ ուղղված օպերատիվ ստորաբաժանման ղեկավարին և վերջինիս թույլտվությունը ՕՀՄ-ի անցկացման մասին: Պաշտպանը նաև միջնորդել է դատարան հրավիրել և հարցաքննել Գ-ին՝ որպես առանցքային վկա, քանի որ նրա գործողությունները վճռորոշ ազդեցություն են մեղադրանքի առաջադրման համար:

Այս միջնորդությունները մերժվել են դատարանի կողմից այն պատճառաբանությամբ, առաջին, որ օպերատիվ հետախուզական միջոցառում անցկացնելու հիմքերը և դրա վերաբերյալ փաստաթղթերը պարունակում են գաղտնի գործակալների տվյալներ, այդ թվում՝ նաև տվյալներ նրանց հավաքագրման մեթոդների մասին, որոնք իրենց բնույթով գաղտնի տվյալներ են և չեն հանդիսանում դատական ստուգման առարկա: Ինչ

վերաբերում է Գ-ին հարցաքննելու մասին միջնորդությանը, դատարանը նույնպես մերժել է միջնորդությունը՝ պատճառաբանելով, որ նախաքննության փուլում արդեն կատարվել է առերեսում:

Ինչ վերաբերում է ապացույցների շրջանակներին, դատարանները գտել են, որ գործով ստացվել և դատարանում հետազոտվել են բազմաթիվ ապացույցներ, որոնք կազմում են բավարար համակցություն, որի պայմաններում նվազում է ՕՀՄ-ի հիմքերի ստուգման և Գ-ին դատարանում հարցաքննելու ապացուցողական նշանակությունը: Այդ ապացույցներն են.

- Ա-ի և Գ-ի անձնական խուզարկության արձանագրությունները,
- խուզարկությանը մասնակցած չորս ընթերականների բացատրության արձանագրությունները,
- Ա-ի և Գ-ի ձերբակալման մասին արձանագրությունները,
- որպես ձերբակալվածներ նրանց հարցաքննության արձանագրությունները,
- նրանց մոտից հայտնաբերված զանգվածի դատանարկոլոգիական և տոկսիկոլոգիական փորձաքննությունների եզրակացությունները, ըստ որոնց հաստատվել է, որ Ա-ի և Գ-ի մոտ հայտնաբերված զանգվածը հերոին տեսակի թմրանյութ է,
- ոստիկանության օպերատիվ ստորաբաժանման չորս օպերատիվ ոստիկանների՝ որպես վկա, տված ցուցմունքները,
- այլ քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավված Բ-ի ցուցմունքը, որոնցով հաստատվում է Ա-ի կողմից հանցագործության կատարման, այն է՝ խոշոր չափի թմրանյութ ձեռք բերելու և իրացնելու հանգամանքը: Ավելին, այդ հանգամանքը չի ժխտել նաև Ա-ն:

Ապացույցների նման առատության պայմաններում դատարանները որոշել են, որ ՕՀՄ-ի հիմքերի հետազոտման և Գ-ին դատարանում հարցաքննելու մասին միջնորդությունները գործի համար էական նշանակություն չունեն:

Հարց.

Արդյոք դատավարությունը եղել է արդարացի՝ ՀՀ Սահմանադրության 63 և 67-րդ հոդվածների և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասերի հիմքերով:

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ 9

Քննչական մարմինը հարուցել է քրեական գործ Դ-ի կողմից անչափահաս Մ-ի նկատմամբ սեռական ոտնձգության փաստի հիմքով: Քննիչը հարցաքննել է Մ-ին: Հարցաքննությունը տեսաձայնագրվել է: Հարցաքննությանը ներկա էին Մ-ի ծնողները և մանկավարժը: Հարցաքննվել են նաև ծնողները, ուլքեր ներկայացրել են այն, ինչ լսել էին Մ-ից: Դրանից հետո հարուցվել է քրեական գործ: Քննիչը որպես վկա հարցաքննել է Դ-ին, կազմվել է «վկա-կասկածյալի հարցաքննության արձանագրություն», որը ներկայացվել է Դ-ին ու բացատրվել, որ նա կասկածվում էր անչափահասի նկատմամբ սեռական ոտնձգության մեջ: Դ-ն ցանկություն է հայտնել ունենալ փաստաբան, որի հիմքով հարցաքննությունը հետաձգվել է: Մի քանի ժամ անց հարցաքննությունը վերսկսվել է փաստաբանի ներկայությամբ, որի ժամանակ Դ-ն հերքել է, որ սեռական ոտնձգություն է կատարել երեխայի նկատմամբ: Մի քանի օր անց կրկին հրավիրվել է հարցաքննության: Քննիչը որոշում է կայացրել նրան որպես կասկածյալ ներգրավելու մասին: Դ-ն հրաժարվել է ցուցմունք տալ: Այնուհետև առաջադրվել է մեղադրանք, բայց Դ-ն կրկին հրաժարվել է ցուցմունք տալ: Նրա փաստաբանը

ներկա էր եղել այդ գործողություններին: Նրա նկատմամբ կիրառվել է խափանման միջոց՝ ստորագրություն չհեռանալու մասին: Երկու օր անց Դ-ն միջնորդել է կազմակերպել առերեսում Մ-ի հետ, քանի որ քննիչի հարցադրումներում շատ անորոշություններ կային, մասնավորապես, հարցերը այն մասին, որ ինքը դիպչել է Մ-ի մարմնի տարբեր մասերին: Միջնորդությունը մերժվել է: Քրեական գործն ուղարկվել է դատարան: Մեղադրական եզրակացության մեջ մեղադրանքը վճռորոշ մասով հիմնավորվում էր Մ-ի ցուցմունքներով, նրա ծնողների ցուցմունքներով, որոնք բխում էին Մ-ի ցուցմունքից, ու հոգեբանի եզրակացությամբ: Մեղադրական եզրակացության մեջ նշվել է, որ Դ-ն դիպչել է Մ-ի մարմնի տարբեր մասերին, սակայն Մ-ի ցուցմունքում այդ մասին աղոտ նշումներ են արվել, իսկ հոգեբանի եզրակացության մեջ այդ դրվագի վերաբերյալ ընդհանրական կերպով ասված էր, որ Մ-ն վախենում էր չափահաս տղամարդկանցից, «չէր ուզում, որ իրեն մատներով դիպչեն», սակայն Մ-ն իր ցուցմունքում այնուհետև հիշատակել է Դ-ի անունը ու ասել, որ վախենում էր նրանից: Դ-ն դատարանում կրկին միջնորդել է որպես վկա հրավիրել ու հարցաքննել Մ-ին, սակայն միջնորդությունը մերժվել է: Դատարանը նշել է, որ մեղադրանքը հաստատվում էր ապացույցների բավարար համակցությամբ՝ Մ-ի ցուցմունքով (հարցաքննության արձանագրությունով), հարցաքննության տեսաձայնագրումով, Մ-ի ծնողների ցուցմունքներով ու հոգեբանի եզրակացությամբ, այդ թվում՝ նաև հարցաքննության տեսաձայնագրությամբ, մինչդեռ Մ-ի հարցաքննությունը դատարանում երկրորդային զրհականացման կարող էր ենթարկել նրան, որը չէր բխում երեխայի լավագույն շահից:

Հարց.

Արդյոք խախտվել է Մ-ի հակընդդեմ հարցման իրավունքը և արդար դատաքննության իրավունքը:

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ 10

Սևան քաղաքի ոստիկանության տեղամասային ավագ տեսուչը ոստիկանության վարչական շենքում բանավոր հայտնել է պարեկապահակային դասակի երեք ոստիկանների, որ ոստիկանության բաժնում ստացվել է օպերատիվ տեղեկություն այն մասին, որ Սևան քաղաքի բնակիչ Հ.Գ.-ն իր մոտ թմրանյութ է պահում և պատրաստվում է շուկայի տարածքում իրացնել թմրանյութը: Նա հրահանգել է ՊՊԾ երեք ոստիկաններին իր հետ գնալ շուկայի տարածք և հետևել Հ.Գ.-ին ու անհրաժեշտության դեպքում ձերբակալել:

Հրահանգը ստանալուց հետո ՊՊԾ երեք ոստիկանները տեղամասային տեսուչի գլխավորությամբ մզեցված ապակիներով մեքենայով շարժվել են դեպի շուկայի տարածք, որտեղ իրենց տեսադաշտում հայտնվել է Հ.Գ.-ն: Մեքենայի միջից մոտ տասը մետր հեռավորությունից նրանք տեսանկարահանում են Հ.Գ.-ին, ում այդ պահին մոտեցել էր Վ.Խ.-ն, ու նրանք միասին զրուցում էին շուկայի վարսավիրանոցի դիմաց: Վարսավիրանոցից դուրս է գալիս ու նրանց է միանում Ա.Գ.-ն: Քիչ անց նրանք հատում են փողոցը և քայլում դիմացի մայթին գտնվող կրպակի ուղղությամբ, որտեղ նրանք շարունակում են իրենց զրույցը: Քիչ անց Հ.Խ.-ն հեռանում է նրանցից, իսկ Հ.Գ.-ն ու Ա.Գ.-ն անցնում են կրպակի հետևը: Այդ պահին ոստիկաններն իջնում են մեքենայից, վազում կրպակի ուղղությամբ ու ձերբակալում Հ.Գ.-ին ու Ա.Գ.-ին ու առանձին մեքենաներով տանում ոստիկանության բաժին: Ա.Գ.-ի մոտ հայտնաբերվում է խոշոր չափի՝ 4 գրամի քաշով մարիխուանա տեսակի թմրանյութ: Վերջինս ցուցմունք է տվել, որ թմրանյութը վերցրել է Հ.Գ.-ից վաճառելու նպատակով, սակայն իրենք պայմանավորվել էին 2 գրամ մարիխուանայի համար: Հ.Գ.-ն ցուցմունք է տվել, որ թմրանյութը ձեռք է բերել Հ.Խ.-ից, ում հետ ծանոթացել է ամառը Երևան քաղաքում՝ իր ընկերոջ միջոցով, ով մեկնել է Հայաստանից, ու որ Հ.Խ.-ն իրեն նախկինում մի քանի անգամ

առաջարկել է ցածր գներով թմրանյութ գնել ու վաճառել, ինչն ինքը միշտ մերժել է, քանի որ չի զբաղվում թմրանյութերի շրջանառությամբ: Այդ անգամ Հ.Խ.- առաջարկել է շուկայական գնից մոտ երեք անգամ էժան գնով մարիխուանա տեսակի թմրանյութ, ասելով, որ իրեն շտապ գումար է պետք, որ ինքնաթիռի տոմս գնի ու մեկնի Հայաստանից արտագնա աշխատանքի:

Նախաքննության ընթացքում Հ.Գ.- ն միջնորդել է առերեսել Հ.Խ.-ի հետ, քանի որ կարծում է, որ նա սադրել է իրեն՝ իմանալով, որ ինքը պարտքերի մեջ է, բանկում ունի չփակած վարկեր, շուկայականից երեք անգամ ցածր գնով թմրանյութ է առաջարկել, ու ինքն այդ առաջարկով զայթակղվել է, քանի որ մտածել է, որ դա արագ կվաճառի ու բանկի պարտքերը կփակի: Բացի այդ, իրենք պայմանավորվել էին 2 գրամ մարիխուանայի համար, մինչդեռ խուզարկությունից պարզվեց, որ հայտնաբերվել էր 4 գրամ, որն էապես խստացնում է մեղադրանքը: Հիմա է հասկանում, որ Վ.Խ.-ն իրեն գուցե սադրել է, կամ գուցե իսկապես նրան գումար էր պետք, ուստի ինքը ցանկանում է դա պարզել, քանի որ եթե պարզվի, որ նա գործակալ է եղել, նշանակում է ենթարկվել է սադրանքի: Նրա միջնորդությունը մերժվել է անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Նախաքննության ընթացքում քրեական գործի նյութերը ուսումնասիրելու արդյունքում պարզ է դարձել, որ Վ.Խ.-ն համագործակցող անձ էր, ներդրված էր թմրանյութերի շրջանառության հանցավոր շրջանակներում: Նա Հ.Գ.-ի հետ ծանոթացել էր վերջինիս ընկերոջ միջոցով, այնուհետև կապ է հաստատել նրա հետ սոցիալական ցանցի միջոցով, զարգացրել է մտերիմ հարաբերություն նրա հետ: Հանցավորության դեմ պայքարի շրջանակներում իրականացրել է վերահսկելի մատակարարում՝ օպերատիվ հետախուզական միջոցառում՝ Հ.Գ.-ին առաջարկելով ցածր գնով թմրանյութ և, ի զարմանս իրեն, Հ.Գ.-ն համաձայնել է, ու այդ պատճառով այդ օրը Հ.Խ.-ն Երևանից եկել էր Սևան քաղաք գործարքը իրականացնելու:

Քրեական գործի նյութերում Հ.Խ.-ի իրական անունը և տվյալները փոխված էին, քանի որ նրա նկատմամբ վկայի պաշտպանության ծրագիր էր կիրառվել, սակայն Հ.Գ.-ն պնդում էր, որ առերեսման դեպքում կճանաչեր նրան:

Դատարանում Հ.Գ.-ն ու Ա.Գ.-ն միջնորդում են որպես վկա հրավիրել Հ.Խ.-ին, որ նրան հարցաքննեն, մասնավորապես, այն հարցի վերաբերյալ, որ իրեղեն ապացույցը ստացվել էր սադրանքի արդյունքում, Հ.Խ.-ն չարաշահել էր իր հետ մտերիմ հարաբերությունը, իր վստահությունը և գուցե նաև դուրահավատությունը, ինչպես նաև օգտվելով իր խոցելի ֆինանսական վիճակից՝ առաջարկել էր շուկայականից էապես էժան գնով թմրամիջոց, որին ինքը գայթակղվել էր: Մինչդեռ ոչ ինքը, ոչ էլ Ա.Գ.-ն նախկինում երբեք չեն զբաղվել թմրանյութերի շրջանառությամբ, թմրանյութ չեն օգտագործել, դա միակ դեպքն է եղել, որ ինքը համաձայնել է թմրանյութ ձեռք բերել: Եթե հնարավորություն տրվեր հարցաքննել Հ.Խ.-ին, կապացուցեին, որ Հ.Խ.-ն սադրել էր հանցագործության կատարումը, քանի որ առանց նրա միջամտության հանցագործությունը չէր կատարվի: Դատավորը մերժել է միջնորդությունը, քանի որ գտել է, որ ապացույցների բավարար համակցությամբ ապացուցվել էր, որ Հ.Գ.-ն ու Ա.Գ.-ն ձեռք էին բերել թմրանյութն իրենց ազատ կամքով, նրանց նկատմամբ բռնություն կամ հարկադրանք չէր իրականացվել, ձերբակալելիս Ա.Գ.-ի մոտ հայտնաբերվել է թմրամիջոցն ու վերջինս էլ ասել էր, որ թմրամիջոցը իրեն տվել էր Հ.Գ.-ն, հետևաբար, Հ.Խ.-ի հարցաքննությունը դատարանում գործի լուծման համար էական նշանակություն չէր կարող ունենալ: Բացի այդ, ըստ դատավորի, Հ.Խ.-ն գտնվում էր վկայի պաշտպանության տակ, և նրան լավագույն դեպքում հնարավոր կլիներ հարցաքննել միջնորդավորված կերպով, սակայն տվյալ դեպքում դատավորը գտնում էր, որ նրան հարցաքննելու կարիք չկար, քանի որ նրա նախաքննական ցուցմունքները և հանցակազմը հիմնավորվում էին մեղադրյալների ցուցմունքներով և այլ ապացույցներով, մասնավորապես, որ նրանք ձեռք էին բերել թմրանյութ

իրացնելու նպատակով, որն, ի դեպ, մեղադրյալները նույնպես չէին հերքում:

Հարց.

Արդյոք խախտվել է Հ. Գ.-ի և Ա. Գ.-ի հակընդդեմ հարցման իրավունքը և արդար դատական քննության իրավունքը:

ԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱԿԸՆԴԴԵՄ ՀԱՐՅՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

